

5-6 (295-296)
6.03.2012թ.
Հրատարակվում է
1999թ. սեպտեմբերից

Հանաչել գիտնականներին և գիտնականներին, իմանալ զբան հանձարոյ

ԼՍԱՐԱՐ

Լսարար

ԳԻՏԱԿՐԹԱԿԱՆ ԹԵՐԹ

Lusarar

ԼՂՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԻՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐ ՎԱՐԿԻ ԽԱՉԱՏՐՅԱՆԻ ԽՈՍՔԸ ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐԿԱ ԱՌԹԻՎ

Սիրելի հայրենակիցներ: Ողջունում և շնորհավորում են ձեզ՝ Մայրենի միջազգային օրվա առթիվ: Օրվա խորհուրդը վստե է ու մեծաշուք: Մեր մայրենի լեզուն՝ հայերենը, աշխարհի ամենակատարյալ և ամենահին լեզուներից մեկն է, հնդեվրոպական լեզուների շարքում մեկ ինքնուրույն ճյուղ: Այն իր բառերի հարստությամբ, հնչյունական նրբագեղությամբ, ճկունությամբ և զարգանալու անսահման կարելիությամբ մեր ժողովրդի մշակութային ամենամեծ գանձերից մեկն է ու նաև փառքի տիրույթներից մեկը հայ ազգի հոգեկան և իմացական հանձարի:

Ուրիշ էլ ո՞ւմ, եթե ոչ մեզ է վիճակված անաղարտ պահել մայրենին, որը դարձրել է շարունակ լուսավորել է մեր ճանապարհը և դարձել հայի գոյության առհավատյալ: Ոսկեդարի պատմագիրներից մինչև մերօրյա մեծագույն արվեստագետներն ու գրչի մշակներն այն գնահատել են որպես գոյի ու հարատևության երաշխիք:

Մայրենի լեզվով խոսելու կարևորության մասին մենք ընթերցում ենք մեր պատմիչների պատմություններում, իսկ առաջին անգամ հանդիպում Մովսես Խորենացու «Հայոց պատմության» մեջ՝ թե ինչպես Արամ թագավորը Հայքում ապրող բոլոր հայերին հրաման է արձակում՝ սովորել և խոսել միայն հայերեն:

Այսօր հայրտության մշուս ենք Մայրենի օրը՝ իբրև տոն, իբրև օր՝ մայրենի փառաբանման: Մեր անկախ պետության մեջ մենք կարողանում ենք արժանավայել գնահատել և փառաբանել ազգի խորհուրդ մեր հայ լեզուն:

Մայրենին սրբություն է, ռազմավարություն ու հանձարի դրսևորում: Գործունե, որոնք պատմության քառուկներում անպարտելիության գրահ են դարձել հայ ժողովրդի համար: Մեր ինքնությունը, ազգային դիմագիծը պահպանել են հայոց լեզվով, նրանով է ստեղծվել մեր հարուստ մշակույթը, և ձևավորվել գիտական հզոր միտքը: 5-րդ դարի այգաբազմի՝ 405 թվականին, վերածվելով գրոց լեզվի, նա հայ

վերժական արշալույս բացեց խավար ժամանակների բարդ ելևէջումները հաղթահարող հայ ժողովրդի գնալիք ճանապարհին: Դառնալով դարձյալ ու գիտության գրավոր լեզու՝ նա անբակտելիորեն ընդելուզեց ու կամրջեց հեռավոր դարերն ու այսօրը, գալիքի ճանապարհը և, թրծվելով, հարստանալով ու զորեղանալով, վերածվեց մեր պատմության ու գոյատևման ամենահուժկու զենք ու գրահի, ամրակուռ վահանի:

Շատ ժողովուրդներ են անհետացել պատմության քառուկներում, շատերն էլ ծուլվել են:



Մենք կանգուն ենք, քանի դեռ կենդանի է մեր լեզուն, որի դեմ անգոր ին բաբելոնացին, ասորին ու թուրքը: Արցախյան գոյամարտը հաստատեց, որ այսօր էլ այն մեր ինքնության, ազգային անկախության և երկրի մեծագույն գրավակալն է:

Աշխարհի բախտը տնօրինող երկրներն ամեն ինչ տանում են դեպի համաշխարհայնացում: Դրա մեջ են տնտեսությունը, ռազմական համագործակցությունը, կրթությունը, մշակույթը: Մշակութային պատերազմը, որ ռազմաքաղաքական շահերի բախման գաղափարական արտահայտություններից մեկն է, ակնհայտ է ամբողջ աշխարհում: Ակնհայտ է, թե մեծ երկրներն ինչ վիթխարի միջոցներ են դնում իրենց լեզվի, կրթության համակարգի տարածման, մշակույթի քարոզչության ասպարեզում: Սա

մշակում է, որ մշակույթների այս կործանարար պատերազմի մեջ մենք ունենք մեր հիմնախնդիրները, որոնք երբեք չպետք է անտեսենք: Եվ դրա համար էլ պետք է փարվենք մեր փրկության կայմին՝ հայոց լեզվին: Այն հայ ժողովրդի մշակութային ժառանգության գանձարանում ամենամեծ ու թանկագին հրաշալիքն է:

Յուրաքանչյուր պետություն ամուր է իր արմատներով, լեզվով, հավատով և մշակույթով՝ արժեքներ, որոնք պատմության ազգային ինքնագիտակցության, սեփական արժանապատվության պահպանման իրական ու գործուն դրոշակակիրներն են: Այստեղ մեծ է լեզվի դերը, որը ոչ միայն յուրաքանչյուր ազգի ինքնակերտման կարևորագույն գրավակալներից է, այլև նրա գոյության ասպարեզն ու պաշտպանը, ավյունն ու կենսատու, ինքնության վահանը:

Լեզվի նկատմամբ պետական հոգածությունն ու հարգանքը, ինչպես նաև ազգային փոքրամասնությունների լեզվի ու մշակույթի զարգացման խրախուսումը միջազգային ասպարեզում Լեռնային Ղարաբաղի Հանրապետության վարկն ապահովող պայմաններից են:

Ներկայիս համաշխարհայնացման պայմաններում առավելագույն կարևորվում են պետական լեզվի՝ Լեռնային Ղարաբաղի Հանրապետության և պաշտպանվածության, ինչպես նաև օտար լեզուների ուսուցման խնդիրները: Դրանց արդյունավետ լուծման շնորհիվ հնարավոր կլինի ապահովել մշակութային ներդաշնակ գարգացում՝ բացառելով օտար լեզվամշակութային ներխուժումն ու հայերենի իրավունքների սահմանափակումը:

Բազմիցս և շատերն են մշել, որ մայրենին մեր նախնիների կողմից մեզ ժառանգված անգնահատելի գանձ լինելուց բացի նաև կենսական կարևորություն ունի մեր ազգի համար: Նրա պահպանությունը յուրաքանչյուր հայի սրբազան պարտքն է, և այս առաքելությանը պետք է զինվորագրվեք բոլորս:

Կրկին շնորհավորում են բոլորիս Մայրենի օրվա կապակցությամբ: Փառաբանենք մեր լեզուն, պահպանենք ու զարգացնենք, լինենք մեր պատմությանն ու մեր ակունքներից հավա-

ԲՈՆԵԼ ԶԵՌՔՆ ՈՒ ԿԱՐՈՂԱՆԱԼ ԶԳԱԼ ՍԻՐՏԸ

Տեսական սառնամանիքներից հետո գարնան զգույշ հայուն, անշուշտ, սպասված հաճույք է: Բայց մեր մարմինները չէ սուկ, որ քերական զգալի կարող ունեն, մեր հոգիները նույնպես կարող են արևոտ գուրգուրանքի: Գարուն է...

Իսկ գարնան սկիզբն ազդարարող գլխավոր տոնը Մարտի 8-ն է՝ Կանանց միջազգային օրը: Ընդունված է ասել, որ շրջապատի համար կնոջ ներկայությունն ինքնին տոն է, քանզի բնության մեջ ամենագեղեցիկը համարվող էակը մարմնավորում է բարությունն ու սերը, հեզությունն ու բնքշանքը: Քաջության ու սիրանքի մղողն էլ նույն այդ բնքշությունն է: Եվ թեկուզ հենց դրա համար միայն՝ արժե կնոջը միշտ մեծարել:

Քույակից մինչև Մայր-Նովա, Իսահակյանից մինչև Պարույր Սեւակ եւ ուրիշ պոետներ՝ գովերգել ու մեծարել են կնոջը: Դա պարզապես հայ տղամարդու ընդգծված վերաբերմունքն է իր մոր, կողակցի, քրոջ կամ դստեր նկատմամբ: Եվ պետք չէ թերեւս բանաստեղծ լինել՝ արտահայտելու համար սերը կնոջ հանդեպ, բավական է թեկուզ բռնել ձեռքն ու կարողանալ զգալ նրա սիրտը: Դա կլինի ամենամեծ նվիրումը գեղեցիկ սեռին: Իսկ ի՞նչ է սերն առհասարակ... Դա կնոջ հանդեպ զիջողական ու հոգատար վերաբերմունքն է, նրան մշտապես ընդառաջելու, ներելու եւ նվիրաբերվելու կարողությունը:

Մարտի 8-ից, այսպիսով, մեկնարկում է սիրո ու պատկառանքի միամսյակը: Եթե ապավինենք միայն օրացույցին, ապա այն տեսելու է մինչև ապրիլի 7-ը: Բայց արդյո՞ք դրանից հետո կապառվի մեր սերը կանանց հանդեպ: Ամենեւին:

Ուրեմն, լցվենք գարնան արեւոտ լավատեսությամբ ու այն ամբողջ տարին մեր կրօնի տակ պահպանելու համձանուրությամբ ասենք.

- Շնորհավոր ձեր տոնը, կանայք:

«ԼՍԱՐԱՐ»

ՆՎԻՐԿԱՆ ՄԱՅՐԵՆԻԻ ՕՐԿԱՆ

Փետրվարի 21՝ Մայրենի լեզվի միջազգային օրը ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ: Նշում ենք նաև մենք՝ հայերս, օրն առիթ դարձնելով մեկ անգամ ևս փառաբանելու և արժևորելու մեր հնամենի, փառապանեց հայոց լեզուն: Նշում ենք՝ ամեն անգամ հետադարձ հարց հնչեցնելով՝ մի՞թե մեզ հատուկ օր է հարկավոր մեծարելու մեր լեզուն, երբ 1600-ամյա նրա գոյությունը հենց այդ արժևորման արգասիք է: Մտքե ցանկացած դարոց, մանկապարտեզ, դժվար թե գուցեք մի երեխա, որ մի քառատող չարտասանի հայոց լեզվի մասին: Եվ սա մեր նվաճումներից է, մեր պայքարի մի քաղցր պտուղը:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության լեզվի տեսչության նախաձեռնությամբ փետրվարի 21-ին պատշաճ մակարդակով մշակեց Մայրենի օրը: Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում այդ երեկո գեղեցիկ խոսքով, հայեցի երգով ու պարով, մեր ջերմ ներկայությամբ արտահայտեցինք մեր սերն առ մայրենի:

Օրվա խորհրդի առթիվ ողջույնի խոսք ասաց ԼՂՀ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը:

Մեսրոպյան այբուբենը սկսվում է Արարիչ և վերջանում Քրիստոս անուններով: Որպես աստվածային երևույթ՝ այն ունի չբացահայտված և չվերծանված իրողություններ:

«Մեսրոպյան այբուբենի գաղտնիքները» հաղորդաշարի հեղինակ, դասախոս Սամվել Բեքբաշյանը երեկոյին հանդես եկավ հետաքրքիր մեկնաբանություններով: 21 փետրվարի, 21-րդ դար և 21-րդ տարին է՝ ինչ գոյություն ունի Արցախի Հանրապետություն: Այդ երեք 21 թվերի հերթազայության մեջ բանախոսը խոր-

հրավոր կապ է տեսնում. 21-րդ գաղափարագիրը՝ 3-ն, կոչվում է Յիսուս, և ըստ նրա, Արցախն այս տարի պետք է աշխարհի կողմից ճանաչվի որպես օրինակելի պետություն: Տա՛ստված, որ այդպես լինի:

Օտարաբանությունների դեմ պայքարը միշտ էլ եղել է քննարկման առարկա: Անհարկի օտար բառերի ներմուծումն աղավաղում է մեր լեզուն, և դրա դեմ պետք է շարունակական պայքար մղել, ինչը բոլորովին չի նշանակում, թե հայոց լեզուն պետք է ամուր փակել անհրաժեշտ փոխառությունների առաջ և բոլոր օտար բառերը թարգմանել հայերեն: Լեզվաբանությունը վարդեն մերժել է ծայրահեղ մաքրամոլությունը, որը միայն աղբատացնում է լեզուն, թուլացնում նրա արտահայտչական ճկունությունը՝ դատապարտում ինքնամեկուսացման: Երեկոյն վարող՝ երիտասարդ բանասեր Անետա Համբարձումյանն այս ասելով՝ խոսքը փոխանցում է Մեսրոպ Մաշտոց համալսարանի դասախոս, բանասիրական գիտությունների թեկնածու, դոցենտ Լուսինե Մարգարյանին՝ շարունակելու այդ թեման:

Լեզուն նաև վարքագիծ է ձևավորում, սրանից հետևում է, որ լեզուն ազգապահպան գործառույթ է իրականացնում, որովհետև ազգային մտածողությունը ազգապահպանման կարևոր ռազմավարություն է: Վկան Արցախյան շարժումը՝ դատապարտում ինքնամեկուսացման պահպանմանը: Հոգեբանական գիտությունների թեկնածու Լուսինե Ղարաբաղյանն այս թեման արծարծեց իր ելույթում:

Լեզվի, հատկապես մայրենի լեզվի լավ տիրապետումը և նրա կատարելագործումն էական մշակույթում ունեն հայեցի դասավանդ-

ման ու դաստիարակության համար: 21-րդ դարի մարտահրավերների պայքարում ինքնուրույն ու հայ ոգուն հավատարիմ սերունդ դաստիարակելու, հայ երեխային հայ պահելու նվիրական գործում մեծ է ուսուցչի առաքելությունը: Ստեփանակերտի հայոց լեզվի և գրականության քաղաքային մեթոդիկական նախագահ Իրա Սարինյանը ներկայացրեց այդ ուղղությանը կատարված քայլերը:

Մայրենի օրվա մեկնարկը լեզվի տեսչության կողմից տրվել է մեկ ամիս առաջ: Կազմակերպիչները, ուսուցիչները միջոցառումների համակիր ծրագիր են կազմել, գովեստի խոսքեր հնչեցրել մայրենի լեզվի մասին: Երեկոյին ցուցադրվեց փոքրիկ ֆիլմ՝ այդ միջոցառումներից դրվագներ ներկայացնելով:

Լեզվի տեսչության պետ ժամանա Հովսեփյանն իր գոհունակությունը հայտնեց դպրոցներում կազմակերպված միջոցառումների առթիվ:

Հայերենի պահպանման և տարածման գործում ունեցած վաստակի ու Մայրենի միջազգային օրվա առթիվ ԼՂՀ ԿԳՆ նախարար Վ. Խաչատրյանի հրամանով նախարարության պատվոգրերով ու հուշանվերներով պարգևատրվել են մի խումբ մանկավարժներ՝ Սուսաննա Գալստյան (Ասկերանի շրջ. Նորայրուի միջ. դպրոցի հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի), Հասմիկ Ավանեսյան (Շուշիի Մուրացանի անվան ավագ դպրոցի հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի), Արաքսյա Այվազյան (Քաշաթաղի շրջ. կրթության բաժնի առաջատար մասնագետ, հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի), Ջոյա Իսկանդարյան (Մարտակերտի շրջ. Հաթերքի միջ. դպրոցի տնօրեն, հ. լեզվի և գրակ. ուսուց-

չուհի), Լիլիթ Սողոմոնյան (Մարտունու շրջ. Ջոնավանի միջ. դպրոցի փոխտնօրեն, հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի), Ջուլիետա Սարգսյան (Մարտունու թիվ 1 հոսքային միջ. դպրոցի հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի), Իմելա Թովմասյան (Ստեփ. թիվ 1 հիմն. դպրոցի հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի), մեթոդիկական նախագահ, Լիանա Ծատրյան (Ստեփ. թիվ 12 հիմն. դպրոցի դասվար, «Մանկության մուրակ» գրքի հեղինակ), Կարինե Իշխանյան (Ստեփ. թիվ 2 հիմն. դպրոցի հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի), մեթոդիկական նախագահ, Սանուշ Բալայան (Ստեփ. թիվ 11 ավագ դպրոցի հ. լեզվի և գրակ. ուսուցչուհի):

Նախարարության պատվոգրով ու հուշանվերներով պարգևատրվեցին նաև ասումների մրցույթում առաջնային տեղ գրավելու համար Ստեփանակերտի թիվ 1 հիմնական դպրոցի 5-րդ դասարանի աշակերտուհի Ապրան Իսրայելյանը, թիվ 11 ավագ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտուհիներ Հասմիկ Արզումանյանը և Նարե Միրզաջանյանը: Ի դեպ, նրանք ասումները իրենց արվեստը ցուցադրեցին նաև երեկոյի ընթացքում:

Երեկոյի մասնակիցներին հաճելի պահեր պարգևեցին «Մենք ենք մեր սարերը» ազգագրական համույթի (գեղարվեստական դեկավար՝ Գարի Ավանեսյան) և Ստեփանակերտի ՄՊՍԿ սաների ելույթները:

Սեփ. լրավորություն

Մայրենիի նվիրված՝ կարդալ նաև 4-րդ, 5-րդ, 6-րդ էջերում:

ՏԵՏԱԿԱՆ

ԴԱԴԱՐԵՔ ՍՈՎՈՐԵԼՈՒՑ՝ ԿԴԱԴԱՐԵՔ ՍՈՎՈՐԵՑՆԵԼ

Փետրվարի 7-10-ը ԼՂՀ ԿԳԽ կրթության պետական տեսչության հանձնաժողովը՝ տեսչության պետ Ս. Արզումանյանի նախագահությամբ, համակողմանի ստուգումներ է իրականացրել Ասկերանի շրջանի Այգեստանի խ. Աբովյանի անվան միջնակարգ դպրոցում՝ միաժամանակ ցուցաբերելով անհրաժեշտ մեթոդամասնագիտական օգնություն: Ստուգումների արդյունքներն ամփոփվեցին մանկավարժական խորհրդում, որին ներկա էր նախարար Վլադիկ Խաչատրյանը: Արդյունքների մասին հանգամանալից զեկուցեց տեսչության պետ Սոս Արզումանյանը: Ներկայացնե՞ք մի քանի տվյալներ:

Դպրոցական շենքը տիպային է, կառուցված 1971 թվականին: Պարասպորտները մեծ մասամբ տարվում են կաբինետային համակարգով:

Վերջին ստուգումներից հետո (որն իրականացվել էր 5 տարի առաջ), առանձնապես 2009-2010 ուստարվանից սկսած, զգալիորեն բարձրացվել ու նորացվել է դպրոցի գույքը:

Համակարգչային կաբինետը, որը կրում է Մեծ Գայրեհակյանի անունը, լրիվությամբ վերակազմակերպվել է համագյուղացի Արմեն Նախիբյանի հովանավորությամբ: Մեկ այլ բարերար՝ Գայրեհակյանի անունը, հոգացել է համակարգիչները համացանցին միացնելու ծախսերը: Ներկա դրությամբ համացանցը ծառայում է դպրոցին և համայնքին:

Դպրոցը 2009թ. «Տարվա լավագույն դպրոց» մրցույթում «Դաստիարակչական աշխատանքների լավագույն դրվածք» անվանակարգում հաղթող է ծանցվել ու պարգևատրվել ԼՂՀ ԿԳ նախարարի պատվոգրով և 150 հազար դրամ գումարով:

Դպրոցում սովորում է 165 աշակերտ, որը 10 տոկոսով պակաս է, քան եղել է 5 տարի առաջ: Բայց ուրախալից այն է, որ գյուղում նորից երեխաների աճ է սպասվում: Գալիք ուստարվում 1-ին դասարան է գալու 14, հաջորդ տարի՝ 25 երեխա:

Կադրային հարցը զրեթե լուծված է, բացառությամբ ֆիզիկայի մասնագետի և տղաների տեխնոլոգիայի (3 ժամ), ինչը հնարավորությունները ճիշտ օգտագործելու դեպքում կարելի կլինի լուծել:

Հաստիքացուցակով նախատեսված բոլոր հաստիքներն զբաղեցված են, խախտումներ այդ մասով չեն հայտնաբերել:

Ստուգումները ցույց են տվել, որ դպրոցում գործում է արտադասարանական 9 խմբակ, որոնցում ընդգրկված են դպրոցի 103 աշակերտներ: Բացի այդ, անվճար գործում է «Արծաթի», «Պատանի հրաձիգ», ինչպես նաև սպորտդպրոցի և 36 ժամ խմբակ, այդ թվում՝ վոլեյբոլի, բասկետբոլի: Ստացվում է, որ շաբաթական խմբակային ժամաբանակարգ 64 ժամ է, սակայն թե՛ պարասպորտները ավարտվելուց հետո մեկ ժամ անց միջին հաշվով օրական պետք է 10 ժամ դեռ ավելի խմբակային պարասպորտներ լինեն, ինչը նման կարգի դպրոցի համար բացարձակ անընդունելի է: Ոչ միայն անընդունելի է, այլև առանց գործող կարգի խախտման հնարավոր չէ: Վիճակից դուրս գալու ելքը տեսչության պետը համարեց արտադպրոցական խմբակների քանակի նվազեցումը՝ առնվազն, որ չի կարելի երեխաների առողջության հաշվին մարդկանց աշխատանքով ապահովել:

Ստուգումները ցույց են տվել, որ վերացված են պլանավորման մեջ նախորդ ստուգումների ժամանակ տեղ գտած թերությունները, ինչի վերաբերյալ արվել են դիտողություններ: Տնօրինության կողմից

ներդպրոցական վերահսկողության ուղղությամբ որոշակի հաջողություններ են հասել:

2010-2011 ուստարում 9-րդ դասարանի 10 աշակերտները հաջողությամբ հանձնել են ավարտական քննությունները և ստացել հիմնական կրթության վկայական, նրանցից միայն 3-ը ուսումը շարունակում են 10-րդ դասարանում, բայց բոլորն էլ ցածր գիտելիքներով ու կարողություններով երեխաներ են:

Միայն 1 աշակերտ շարունակում է սովորել Ստեփանակերտի հ. 11 ավագ դպրոցի հունանիտար հոսքում, 1-ական շրջանավարտներ էլ սովորում են Ստեփանակերտի գյուղընկերում, երաժշտական քոլեջում և «Գ. Նարեկացի» համալսարանին կից գործող քոլեջում:

11-րդ դասարանի մեկ աշակերտ (ներկայումս՝ 12-րդ դասարանի աշակերտուհի Վարդուհի Սահակյանը) մասնակցել է հայոց լեզվի հանրապետական օլիմպիադային և հասել հաջողության՝ արժանանալով ԼՂՀ ԿԳ նախարարի պատվոգրին ու դրամական պարգևի:

Կիսամյակի արդյունքներով, սովորողների առաջադիմությունը կազմել է 74%, որակը՝ 19%: Մտահոգիչ են աշակերտների անհարգելի քայքայությունները:

Տնօրենն ու նրա տեղակալները, մեթոդիկները և մեծ լուրջ ուշադրություն դարձնել դասալսումներին, որոշակի աշխուժացում է նկատվում մեթոդական աշխատանքներում, նոր տեխնոլոգիաների օգտագործմամբ համակարգչային դասերի անցկացմանը և այլն:

Հինգ տարի առաջ կատարված ստուգումների ընթացքում տնօրինության կողմից դասալսումների ցուցանիշները եղել են անբավարար ու զգալիորեն ցածր այժմյան ցուցանիշներից: Գրառումների որակը և այն ժամանակ, և առավել ևս, հիմա գնահատվում է բավարար: Հիմնական թերությունն այդ աշխատանքներում այն է, որ դասալսումները, ինչպես նաև տնօրենական գրավորների անցկացումն իրականացվում են անպլանային ձևով:

Առարկայական մասնախմբերում կատարված աշխատանքները նկատելի են, չնայած դրանք ուսման որակի բարձրացման համար դեռևս զգալի չեն: Դաստիարակչական, առանձնապես ռազմախայրենասիրական ուղղությամբ աշխատանքներն ավելի տեսանելի են ուսումնական գործընթացի ձեռքբերումների համեմատ:

Ուրախալի է, որ տնօրինության տեսչության կողմից տրված գրավորների արդյունքների տարբերությունները մեծ չեն, ինչը չի կարելի ասել կիսամյակային և տեսչական ստուգումների արդյունքների վերաբերյալ: Այսպես, 1-ին կիսամյակի արդյունքներով, հայոց լեզվի առաջադիմությունը կազմել է 90%, որակը՝ 38%, տեսչական ստուգումների արդյունքները համապատասխանաբար՝ 47% և 17%՝ մոտ երկու անգամ պակաս:

Սաթեմատիկայից կիսամյակային առաջադիմությունը՝ 85%, որակը՝ 31%, տեսչական ստուգումների՝ 31,4% և 11%:

Կրտսեր օղակում 2-րդ և 4-րդ դասարաններում մայրենիից տրված տեսչական արդյունքներով միջին առաջադիմությունը կազմել է 54%, որակը՝ 13,5%, որը բավականաչափ ցածր է: Այն համեմատաբար բարձր է 2-րդ դասարանում՝ 62,5% և 19%, ինչը, սակայն, կիսամյակի արդյունքների (87% և 50%) համեմատությամբ մեծ տարբերություն է

տալիս:

Մանկավարժական խորհրդում ելույթ ունեցավ կրթության և գիտության նախարար Վլադիկ Խաչատրյանը: Նախ ներկայացնելով համակարգում իրականացվող բարեփոխումները, ընթացքը, նա կանգ առավ ավագ դպրոցի խնդրի վրա, քանզի հատկապես գյուղաշխարհի մարդկանցից հաճախ կարելի է լսել, որ շուտով ավագ դպրոցներ չեն լինի, կվերականգնվի նախկին համակարգը: Վ. Խաչատրյանի պատասխանը միանշանակ է՝ հետագայում ճանապարհի չկա: Որդեգրած բարեփոխումները կշարունակվեն: Դա 12-ամյա ուսուցման զուտ մեխանիկական անցում չէ: Փոխվել է




ամբողջ համակարգի ուսումնառողական հենքը, բովանդակությունը: Նախարարը կոչ արեց չչեղվել այդ ճանապարհից: Ի՞նչ է պահանջվում դրա համար: Յուրաքանչյուրը պարտավոր է ուսումնասիրել նորմատիվ փաստաթղթերը՝ մեթոդական ուղեցույցներ, մանակներ, հրամաններ և այլն, հետևել մանկավարժական լրատվությանը, առաջավոր փորձին, որպեսզի բարեփոխումները կյանքի կոչվեն: Նկատվում է, որ ուսուցիչներից ոմանք, անգամ տնօրեններ, ծանոթ չեն կրթական իրավական փաստաթղթերին, չեն առաջնորդվում դրանցով: Քանի որ պահանջները, դասագրքերը, ծրագրերը փոխվել են, ուսուցիչներն իրենք էլ ինչ-որ տեղ պատրաստ չեն, հրճաբաց պետք է սովորեն: «Սովորում եք և սովորելով՝ սովորեցնում: Դադարեք սովորելուց՝ կդարձա՞րեք սովորեցնել», - ասաց նա: Նախարարի կարծիքով՝ այս հարցում է, որ թերանում են մանկավարժական կուլեկտիվները, թե չէ ուսման առաջադիմությունն ու որակն ավելի բարձր կլինեին: Ողջ համակարգն է այս վիճակում. երևան են եկել նոր դասագրքեր, ծրագրեր, գնահատման նոր չափանիշներ: Պետք է խորանուխ լինել դրանց ելույթում մեջ: Եթե ուսուցիչն ունի տարիների փորձ և վարպետություն, դա դեռ մեղալի մի կողմն է: Մյուսն էլ իրական արդյունքներ են, որ բարձր չեն: Ուրեմն՝ կատարվում է անարդյունավետ աշխատանք: Ոչ մի կերպ չի կարելի համակերպել տարրական օղակի 54% առաջադիմության հետ: Ինչ է, Այգեստանում երեխաների մնացած 46 տոկոսը կրթության հատուկ պայմանների կարիք ունի, ի վիճակի՝ չէ սովորել: Այս հարցի շուրջ նախարարը խորհրդածության է հրավիրում: Եվ՝ ոչ միայն: Նաև համեմատաբար կան է տալիս՝ ապրիլի 20-ից մինչև մասվա վերջ տեսչության և նախարարության աշխատողների կողմից թեստային առաջադրանքներով Այգեստանի դպրոցում նորից անցկացվել ստուգում: Եվ անձամբ ինքն է հետևելու: Այն ժամանակ արդեն լուրջ խոսակցություն կունենա կուլեկտիվի հետ: Եվ զգուշացրեց, որ արդյունքները չբավարարելու դեպքում վարչարարություն կիրականացնի՝ ղեկավար կազմի հետ առանձին, ուսուցիչների հետ՝ առանձին: Եթե տարրական օղակում 80%-ից, միջին օղակում՝ 70%-ից, բարձր օղակում՝ 60%-ից ցածր առաջադիմություններով, հարց կբարձրացվի ուսուցիչների անկարողության առն-

չությամբ: Եկել է ժամանակը՝ նախարարից մինչև ուսուցիչ գիտակցելու, որ եթե պետությունն իր սուղ բյուջեի 16%-ը հատկացնում է կրթական համակարգին, նաև համարժեք աշխատանք է պահանջում:

Պետության առաջ մենք հաշվետու ենք մեր կատարած աշխատանքի համար: Իսկ այդ աշխատանքը երեխաների ձեռք բերած գիտելիքներն են: Գերխնդիրը ուսման առաջադիմությունը և որակն է, զգաստության է կոչում նախարարը:

Վ. Խաչատրյանը առանձնակի կանգ առավ տարրական օղակի վրա, որտեղ կրթության հիմքն է դրվում՝ կոչ անելով ավելի շատ դասալսումներ անել այնտեղ: Դեռ ավելին՝ թեքվել մինչև նախադպրոցական հիմնարկ: Ցանկալի կլինեին մանկախորհուրդ տեսնել նաև մանկապարտեզի ավագ խմբի (որը մինչև մի քանի ամիս զայու է 1-ին դասարան) դաստիարակչուհուն: Ու նաև՝ հակառակ գործընթացը. արդյո՞ք 4-րդ դասարան թողարկող դասվարը տեղյակ է մանկապարտեզի ավագ խմբի երեխաների մասին, որոնք պիտի գան իր մոտ 1-ին դասարանում սովորելու. թե քանի հոգի են, ինչ կարողություններ ունեն և այլն: Պետք է գործի փոխադարձ կապը: Մի՞թե վերադասից պետք է հուշում լինի, որ դասվարը մտնի համայնքապետարան՝ հետաքրքրվելու, թե 5 տարին լրացած քանի երեխա կա



գյուղում: Այսպես անտարբեր ո՞ր եմք հասնելու:

Ընդ որում, դասվարը երկու ուղղությամբ պիտի աշխատանք տանի. մանկապարտեզի ավագ խմբի, որ պիտի գա 1-ին դասարան և 5-րդ դասարանի հետ. ուսուցիչները շատում են, և երեխան կարող է հանկարծ մի ուսուցիչի հետ կապված՝ չառաջադիմել:

Մայրաքաղաքից այսքան մոտիկ՝ բայց օլիմպիադայում արդյունքներն այն չեն: Խմբակները միանգամայն այլ ուղղվածության են. ֆիզիկայից, մաթեմատիկայից չկան: Իսկ այսօր տեղեկատվական տեխնոլոգիաների դար է, նրանցից եկած եկամուտը ՅՆԱ-ում կազմում է այնքան, ինչքան լեռնահանքարդյունաբերությունը: Նախարարը տեղեկացրեց, որ ճապոնիայից, Հարավային Կորեայից, Հինաստանից տեղեկատվական համակարգերի մասնագետներ են գալիս Երևան՝ պայմանագիր կնքելու տեղի իրենց գործընկերների հետ: Այսքան ասվում է նրա համար, որ մեր երեխաներին ուսուցիչները սովորեցնեն մաթեմատիկա, տրանսպարանություն, օտար լեզու: Նրանք շատ հեշտությամբ դուրս կգան միջազգային ասպարեզ և կգարագան են մեր պետությունը:

Աշխույժ քննարկում ծավալվեց ավագ դպրոցի շուրջ:

Դպրոցի տնօրեն Վ. Վերոյանն առաջարկեց դպրոցական բաղադրիչը հատկացնել ավագ դասարաններին, որ գյուղական դպրոցը մոտեցնեն ավագ դպրոցին՝ ճեղքվածքը մեղմացնելու համար:

Տեսակետ հնչեց, որ ավագ դպրոցը տանում է դեպի գյուղական դպրոցի և ի վերջո՝ գյուղի քայքայման: Նախարարը պարզաբանեց, որ միջնակարգ կրթությունը պար-

տալի չէ, Սահմանադրությամբ պարտադիրը հիմնական կրթությունն է, և հնարավոր չէ բոլոր գյուղերում հավասար պայմաններ ստեղծել: Եթե Այգեստանի դպրոցում 10-րդ դասարանում 3 աշակերտ է սովորում, ինչպե՞ս հոսք ձևավորել: Եվ դեռ հարց է, թե այդ երեք չառաջադիմող աշակերտներն ինչու են անցել 10-րդ դասարան, այստեղ դեր չի՞ խաղացել ուսուցչի շահը: Բայց չէ՞ որ նման աշակերտների համար դա ժամանակի վատնում է, նա կարող էր հիմնական դպրոցն ավարտելուց հետո մի արհեստ սովորել և ավելի օգուտ տված կլինեիր ընտանիքին և մեծ հաշվով՝ պետությանը:

Ինչ վերաբերում է այն մտայնությանը, թե պետությունը խտրական քաղաքականություն է վարում քաղաքի և գյուղի դպրոցների նկատմամբ, Վ. Խաչատրյանը դա հերքելու համար բերեց հետևյալ փաստը. Այգեստանի դպրոցը, որը, կարելի է ասել, գտնվում է Ստեփանակերտի մատույցներում, կրկնակի բյուջե ունի, քան քաղաքի բազմաքանակ դպրոցը: Ու այդպես նաև՝ բոլոր գյուղական համայնքներում: Մի՞թե այս գյուղի նկատմամբ կառավարության վերաբերմունք չէ, երբ 3 աշակերտի համար դասարան-կոմպլեքս է պահում: Բոլոր դպրոցներն այսօր մեծ թե փոքր, քաղաքի թե անենածայրամասային գյուղի, ապահովված են գույքով, համակարգիչներով և լաբորատորիաներով, սարքավորումներով, ուսումնական պարագաներով: Այդպիսի բան չենք ունեցել մինչև հիմա: Չորս տարի առաջ շատ դպրոցներ անգամ ուսուցչի աթոռ չունեին, իսկ հիմա... կառավարությունը դասարանում դպրոցական գույքին: Եվ ինչպիսի՞ դպրոցներ են կա-



ռուցվում անգամ անենածայրամասային գյուղերում: Բնավ չեն տարբերվում քաղաքից: Հիմնական կրթությունը պետք է լավ տալ: Իսկ երեխան ինքնորոգը երբ ավարտում է, ճիշտ կողմնորոշել նրան՝ ուր գնալ, բացառել, որ տարբեր ծրագրեր կան՝ միջին մասնագիտական ուսումնարաններ՝ զանազան բաժիններով, արհեստագործական ուսումնարան՝ 16 մասնագիտություններով: Նախարարը կանխատեսում արեց՝ մի օր գյուղի բնակիչները հարց են բարձրացնելու, որ նախկինում ընդունած քաղաքականությունը վերականգնեն, բացառաբաններում ավագ դպրոց բացեն և երեխաներին տրանսպորտով տեղափոխեն: Ի դեպ, Այգեստանի ուսուցիչներին արդեն հետաքրքրում էր դա, և ցանկացան նախարարից պայմանների մասին ավելի մանրամասն տեղեկանալ:

Դպրոցի տնօրեն Վ. Վերոյանը, շնորհակալություն հայտնելով օբյեկտիվ ստուգումնա և մեթոդական օգնության համար, գնահատելով նաև մանկավարժական կուլեկտիվի ձգտումը՝ ավելի լավ աշխատելու, խոստացավ հետևություններ անել թերացումների համար. ամեն մեկն իր բաժինը վերցնի և ավելի լավ աշխատի:

Իսկ որ Այգեստանի դպրոցի մանկավարժական կուլեկտիվն ունակ է դրան, կասկած չկա: Դպրոցը լավ ավանդույթներ ունի: Այս դպրոցի ուսուցիչներ էին Ալուխանյանը, Վերոյանը, Գրիգորյանը, Դանիելյանը, որոնք ոչ միայն շրջանում, այլև ամբողջ մարզում փայլուն էին: Եվ այստեղ նստածներից շատերը նրանց աշակերտներն են: Ուրեմն ի վիճակի են հաղթահարել ինքնուրույնը և հասնել ավելի բարձր արդյունքների:

ՓԵՏՐՎԱՐԻ 21

ՀՊԱՐՏ ՈՒ ԽՐՈՒՏ Ե ՀՈՂ-ՀԱՅՐԵՆԻՆ, ԵՐԲ ԿԱՐԿԱԶՈՒՄ Ե ԱՆՈՒՇ ՄԱՅՐԵՆԻՆ

ՄԵՐ ԶԻՆԱՎԱՐ ԱՆՊԱՐՏ ԼԵՉՈՒՆ

Ազգությունն ունի յուր հոգին, և այդ հոգին լեզուն է:

Մ. Նալբանդյան

Անշուշտ, անգնահատելի է մայրենիի դերը յուրաքանչյուր ազգի համար:

Մեր մայր լեզուն մեր հույսն է, մեր լույսն է, լույս՝ վառված հրով անշեղ դարերում հին, մեր նախնիների ժառանգության մեծագույն գանձը: Աշխարհում քիչ ազգեր կան, որոնք ունեն իրենց սեփական գիր ու գրականությունը: Այդ քչերի մեջ ենք դասվում նաև մենք՝ շնորհիվ հայ ժողովրդի արժանի գավակ Սուրբ Մեսրոպ Մաշտոցի:

Մեր մեծ ուսուցչապետի վառած ջախի շնորհիվ է, որ գոյատևեցին դարերի փորձությունն ապրած, բազմաթիվ անգամ ծուլման վտանգին ենթարկված Հայաստանն ու հայ ժողովուրդը:

Խորին հարգանք ու պատկառանք նրան, որ իր ծննդով փրկեց իր հայրենիքն ու հարազատ ժողովուրդին կործանումից:

Հայոց լեզվի գլխավոր պահապանը հայկական դպրոցն է, որտեղ երեխաները սկսում են ճանաչել աշխարհը հայոց լեզվով, ձեռք բերում հայեցի մտածողություն, հայի հոգեկերտվածք:

Հայոց լեզուն մեր մեծագույն հարստությունն է, մեր անպարտելի զենքը, մեր հարատևման գրավականը: Ուստի մենք պետք է սրբությամբ պահենք ու պահպանենք մեր հարազատ մայրենին՝ անզուգական հայոց լեզուն. մտածենք, խոսենք, գրենք, կարդանք, արտասանենք, երգենք ու պարենք հայերեն:

Տեղին է վկայակոչել հայ ժողովրդի վշտի դարավոր մառախուղից ծագած աստղ, անզուգական ազգասեր ու հայրենասեր Հովհ. Շիրազի հետևյալ մտահոգությունը.

Երբ չեն երգում, երբ չեն պարում հայերեն, Ինձ թվում է հայոց բոլոր դարերի Անձահներին իմ երգի հետ կթաղեն Լեզվաբահերն օտարի...

Թույլ չտանք, որ օտարին վաճի, դուրս մղի մեր հարազատ մայրենին, մեր ինքնատիպ մշակույթը:

Մեր լեզուն անցել է երկար ճանապարհ, հղկվել ու հարստացել, փայլատակում ու փայլում է թրի նման: Իբրև մոր են մայել և որպես մոր պահել մեր մայրենի լեզուն հայ ժողովրդի մայրասեր ու մայրախնամ գավակները:

Հայոց լեզվի մեջ մարմնացած է հայ ժողովրդի հոգին: Ամեն մի բառ նրա հոգու մի կտորն է: Այդ բառերի մեջ են նյութացած, առարկայացած մեր վիշտն ու բերկրանքը, զրկանքներն ու ձեռքբերումները, դառն ու զվարճալի ապրումները, մեր երազները, հույսերը, իղձը, սերը, մեր ողջ ժողովուրդը:

Լեզուն նաև հայրենիք է, անընկճելի հայրենիք:

Տա՛ աստված, որ մեր ժողովուրդն իր ազատ ու անկախ հայրենիքում հար ու հավետ հայերեն դիմավորի իր արշալույսը, հայերեն հրաժեշտ տա մայրամուտին:

Ն. ՆԱԼԲԱՆԴՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմն. դպրոցի տնօրեն
ԼՂՀ վաստակավոր մանկավարժ

ՈՐՊԵՍ ՆԱԽԱԲԱՆ

Այն, ինչ նվիրական է մեզ համար, հայրենիք է՝ սկսած ծիլ ու ծաղկից, քար ու հողից մինչև բերրի ու ամրոց, գիր ու դպրություն: Եվ ինչը կարող է մարդուն այնքան վեհացնել, որքան հայրենիքը: Այն մեր շնչառության տաք զարկերակն է, մեր խլրտացող արյան եռքը, մեր մանուկների ապագան և այն ամենը, ինչ ժպտում է մեզ մանկանց ու մեծերի հայացքով: Թերևս սա է ոգևորության աղբյուրը, որից ծնվում է ինքնաբերական զգացումը՝ ազգային հպարտությունը:

Որտեղի՞ց է սկիզբ առնում հայրենին, այնտեղից, որտեղ լսվում է առվի կարկաչ ու մանկան խինդ, ուր հնչում է մեր ազգային երգը՝ ինքնաբերական այբ-բեն-գինը, որտեղ կարկաչում է մայրենին...

ՄԵՐ ՈՍԿԵՂԵՆԻԿ ՄԱՅՐԵՆԻՆ

Ուշագրավ էր փետրվարը Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցում: Կրթության և գիտության նախարարության կողմից հայտարարված Մայրենիի տասնօրյակը մեծ խանդավառություն էր առաջացրել: Իրար են հաջորդել տարրական օղակի դասավարդների՝ Ա. Սալիյանի, Ա. Արզումանյանի, Ա. Դավթյանի, Վ. Քոչարյանի, Գ. Ասրյանի, Ի. Պետրոսյանի, Գ. Սարգսյանի միջոցառումները, որ հյուսում էին այն քուլաները, որով ամբողջանում է մայրենին:

Փետրվարի 19-ը հանրագումարի և նկարահանումների օր էր: Եվ վերջապես 21-ը՝ Մայրենիի տոն: Բացման խոսքին հաջորդում է Ա. Կապուտիկյանի մայրենաշունչ մատյանը, որ մերթ որոտում է որպես ռազմի շեփոք, մերթ խրոխտանում որպես ջերմագին հորդոր: Այնուհետև դահլիճում տարածվում է հոգեպարար մեղեդի, սկսվում է տառերի պարը, մերս են բերվում մեսրոպյան գրերը, որ ոգեղենացնում է մերկաների եւթյունը, պարուրում նրանց լուսե ապրումներով:

21-ը որ այն մեր ճշմարտության այբուբենն է, մեր աղոթագիր գորությունը, ու հնչում է արարչական հավաստումը մեսրոպագիր հայերենի:

Հարունակվում է մայրենիի երթը, և հնչում է վկայությունը.

- Ասում ենք՝ մայրենի լեզու, քանզի լեզուն ազգի մայրն է:

- Հայրն էլ է, որովհետև լեզուն հայրենիք է ստեղծում և ժողովուրդ պահում:

- Միասնության մեջ լեզուն ազգի ծնողն է, քանի որ ծննդավայրը բնօրրան լինելուց բացի առանձնահատուկ գրավչություն ունեցող լեզու է, իր հայրենակիցներին եղբայրացնող մի անուշ բարբառ.

- Իմ լուսաբարբառ մայրենի լեզու, թրի պես կտրուկ, հրի պես կիզուն, Դու՝ մշտակարկաչ հայրենի աղբյուր, Դու՝ անո՛ւշ-անու՛շ մայրական համբույր, Դու՛ Մայր Հայաստան նրա հոգու մեջ, Դու՛ մեր սրտաբուխ-մաքուր խինդ ու լաց:

Հարունակվում է մայրենիի գովքը, որ «Հայրենիք» օրրանի սրբազան լեզուն է և մկրտվելով հրեղեն մարտերում՝ բոլոր դարերում ոգեկոչեց մարտիկներին: Այնուհետև հանելով երկինք՝ դարձավ մեր ոգեղեն հացը: Եվ անգամ 1915-ի օրհասի դժնդակ տարում «մեր կեսը տվինք», սակայն մայրենին անաղարտ պահեցինք.

Եվ մենք քեզ համար, մեր մեսրոպատառ, խորհուրդ մեր խորին,

Եվ մենք քեզ համար մեր մեծասքանչ, մեր ոսկեղենիկ,

Ելանք ազգովին, բռնեցինք ահեղ ճամփան Դեր Չորի,

Մեր կեսը տվինք, բայց քեզ չտվինք:

Եվ հային միավորող ուժը դառնում է մայրենին, որ սուր է ու վահան՝ պաշտպանվելու օտարի դավերից, և որպեսզի արհավիրքները

հայոց լեզվի հանձնաժողովը՝ կազմակերպչական խմբի աջակցությամբ: Ավարտին Շուշիի Սբ. Ղազարեցոց Ամենափրկիչ եկեղեցու հովիվ տեր Անդրեասը մի ուշագրավ հավելում կատարեց՝ հայտնելով, որ երբ Բաբելոնյան խառնակության ժամանակ լեզուները խառնվեցին, միայն հայերենը պահպանվեց, և Նոյի ժառանգները շարունակում էին խոսել հայերեն... Ահա ինչու դպրոցի փոխտնօրեն Լիդա Սկրտչյանը խոստովանեց, որ հայերեն խոսելիս մարմինը լցվում է համզով, և երակները ներդաշնակության ցավով են տնքում:

Դպրոցի տնօրեն Նազիկ Նալբանդյանը փաստեց, որ 1999թ. ՅՈՒՆԵՍԿՕ-ն Մայրենին հռչակեց միջազգային տոն, իսկ 1998-ից արդեն հայրենիքում տոնակատարվում էր Մայրենիի օրը:



նորից չնեղեն մեզ, պետք է անասան լինենք:

Եվ մենք՝ հայերս, լինելով մշակութային մեծ արժեքներ կրող հիմնավոր զագերից մեկը, մեր հոգու մատուցող դարձրել ենք մեր մայրենին, մայրենի, որ ոսկեղենիկ անունն է կրում, քանզի այն չափազանց ընտիր ու նվիրական է յուրաքանչյուրիս համար: Այն գեղահրաշ լեզու է, մեզ համար թերևս այն անփոխարինելի զենքը, որով դիմակայել ենք դարերի փորձություններին: Եվ գոտեմարտում հաղթանակած մեր ժողովուրդը Ոսկեդարի անփոխարինելի գանձը՝ մեսրոպագիր հայերենը դարձրած աղոթարան, Ոսկեբերան հայ դպիրների և երևելիների լուսե պատգամները պահած հոգուն, ոսկեղենիկ մայրենին դարձրինք հայոց պետականության դրոշմը: Եվ որպես սրբազան մատուցող՝ հայոց վեհարանում են պահվում հայոց ոսկեծուլ տառերը, որոնք մեր հավերժության խորհուրդն ունեն:

Նաև լեզվի պաշտպանությանն էին ուղղված արցախյան բանակի ռազմագործողությունները, որ իրականացրին մեր նվիրական իղձերը.

Երբ չար թշնամին դավեր էր նյութում,

Մայր հողին պարզում գորքեր անքանակ,

Ուզում էր կտրել մեր հայոց լեզուն,

Այդ դու ծնվեցիր, արցախյան բանակ:

Միջոցառումն իր գագաթնակետին է հասնում հայրենասիրական հնչողությամբ, որ յուրովի երդումն էր ապագա հայրենյաց պաշտպանների: Այն նախաձեռնել է դպրոցի

ԱՐՑԱԽԻ ԲԱՆԱԿԸ ՄԵՐ ԺՈՂՈՎՐԴԻ ՈՒՇԸ ՈՒ ՀՊԱՐՏՈՒԹՅՈՒՆՆ Ե

Մեծ է հայոց բանակի ներագույն ուժը, և մենք փետրվարի 23-ին բարձր տրամադրությամբ դիմավորեցինք Հայրենյաց պաշտպանի տոնը: Այս անգամ մեզ ողջունում են դպրոցի 7-րդ դասարանի աշակերտները՝ ռուսաց լեզվի շնորհաշատ ուսուցչուհի Լուսինե Ռուբենովնայի նախաձեռնությամբ: Ուսուցչուհու բացման սիրալիկ խոսքին հաջորդում են աշակերտների երգն ու ասմունքը, որոնք այնքան ներդաշնակ էին, որ գոհունակության ժպիտ էր երևում մասնակիցների դեմքերին: Աշակերտներն ուսուցչուհու ջանքերի շնորհիվ այնքան էին հմտացել ասմունքում, որ մի պահ թվաց, թե մեր առջև ռուսախոս աշակերտներ են:

Մի կողմից մարտաշունչ ոգին, մյուս կողմից՝ տոնին համահունչ ասմունքի հատվածները և ուսուցչուհու խանդավառ ներկայությունը մեծ ներդաշնակություն էին ստեղծում և տոնին հաղորդում առանձնակի շուք, որ բաղկացած էր մի քանի մասերից՝ գեղարվեստական, ինտելեկտուալ, խմբային-մրցութային: Վերջին շարքերում նստածներն անգամ տեղից չելում էին՝ ուշադիր հետևելու ընթացքին, բաց չթողնելու ոչ մի շտրիխ:

Միջոցառումն ուներ ընդգրկում խորագիր՝ “Герои никогда не умирают” և նրբաճաշակ ձևավորում: Շնորհալի ուսուցչուհու՝ Լուսինե Ռուբենովնայի ձեռնարկը մեծ խանդավառություն առաջացրեց

դպրոցում և մեծ արձագանք ունեցավ: Սա այն հազվադեպ միջոցառումներից է, որի դասերը հիշվում են երկար:

Հնչեցին հայերեն և ռուսերեն մարտական երգեր: Ուսուցչուհին ինքը գմայլելի ձայն ունի, և մեկ անգամ չէ, որ զարդարել է մեր հանդեսները:

Հայրենյաց պաշտպանի օրվան նվիրված ռազմահայրենասիրական միջոցառումներ անցկացրին դպրոցի զինղեկ Գ. Առուշանյանն ու ֆիզղեկ Գ. Դանիելյանը 8-րդ և 9-րդ դասարանցիների միջև:

ՎԱՐԴԱՆԱՆՑ ՏՈՆԸ՝ ՄԵՐՈՒՆԴՆԵՐԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԴԱՐԵՆՈՑ

Ուշագրավ ձեռնարկումների շարքը եզրակակվեց Վարդանանց տոնին նվիրված հայրենաշունչ միջոցառմամբ: Տոնը փետրվարի 16-ից տեղափոխվել է փետրվարի 24՝ Մայրենիի տասնօրյակը չընդմիջելու համար:

Այս անգամ բեմում 3-րդ «բ» դասարանի աշակերտներն են՝ հնուտ դասվար Գոհար Ղարաշյանի և շնորհաշատ երգուսույց-պարուսույց Լիլյա Դավթյանի գլխավորությամբ: Վարդանի ոգին էր թևածում դահլիճում: Կանգնած էին գրահակիր միզակակիրները: Առաջ է գալիս սպառազինված Վարդան Մամիկոնյանը, և նրա կողք ոգևորում է զինվորներին: Հարվում են մարտական գնդերը: Փուլ առ փուլ զարգանում են գործողությունները: Հնչում են մարտաշունչ երգեր: Պայքարը հասնում է կիզակետին: Հաղթում է հայի ոգին:

Հայերը դիմակայում են բոլոր փորձություններին: Եվ բեմում փողփողում է երկու լուսաշող անուն՝ Հայաստան, Արցախ: Սա մեր դարավոր պատմությունն է, որ Ավարայրից հասել է մեզ, և որպես ավանդ՝ մեզ թողնված այս նշխար հողակտորը պարտավոր ենք սրբորեն պահել, ինչպես անաղարտ պահվող մայրենին:

Եվ տանենք պիտի իբրև առաջին հավալու ու աղոթք,

Եվ տանենք պիտի իբրև սրբազան հաց, զինի ու հուր,

Եվ հիշենք, որ երբ «Հայրենիք» ասինք հողին այս քարոտ,

«Մայրենի» դրինք անունը քր սուրբ:

ՎԵՐՋԱԲԱՆԻ ՓՈՒՍՈՒՄԵՆ

Միասնության մեջ է մեր լեզվի, մեր ժողովրդի և հայրենիքի ուժը: Եվ ինչքան գորեղ է հայը, այնքան անաղարտ է մայրենին, ինչքան հզոր է հայի ուստանը, այնքան շենշող՝ հայերենը, որի շնորհիվ հյուսվել են բազմաթիվ մատյաններ, հյուսվում են պանծալի երգեր ու դեռ կիյուսվեն՝ նվիրված հող-հայրենիին, արի ժողովրդին ու նրա ոգու պահապան ոսկեղենիկ մայրենիին: Այսպես եղել է ու կա: Այսպես կլինի ևս կալես...

Վարդիթեր ՀԱՎՈՐՅԱՆ
Շուշիի Խ. Աբովյանի անվ. հիմն. դպրոցի Խ. Լեզվի և գրակ. ուսուցչուհի

ԱՐՔԱՅԱԿԱՆ ՄԵՐ ԼԵՁՈՒՆ

ՄԱՅՐԵՆԻԻ ՀԱՆՂԵՊ ՍԻՐՈՎ ՈՒ ԽՈՆԱՐՀՈՒՄՈՎ

Փետրվարի 21-ը ՅՈՒՆԵՍԿՕ-ի որոշմամբ արդեն տասներկուերորդ տարին է, նշվում է որպես Մայրենի լեզվի միջազգային օր: Մեզ՝ հայերիս համար օրն առանձնահատուկ իմաստ է ստանում, քանզի աշխարհով մեկ սփռված մեր հայրենակիցների համար խիստ սահմանափակ է նրա գործառույթների շրջանակը, լավագույն դեպքում հայերենը արտերկրում պահպանվում է որպես առույն խոսակցության լեզու: Մինչդեռ մայրենին եղել է մնում է մեր ժողովրդի անմահության երաշխիքը, Հայաստան-Արցախ-Սփյուռք եռամիասնության հիմքն ու իրար կապող շաղախը: Օրը առիթ էր ևս մի անգամ արժևորելու մայրենի դերը մեր կյանքում, մեր սերն արտահայտելու և նրանով հպարտանալու:

Փետրվարի 11-21-ը ԼՂՀ ԿԳ նախարարությունը հայտարարել էր մայրենին նվիրված տասնօրյակ, որի ընթացքում հանրապետության բոլոր կրթօջախներում կազմակերպվեցին բազմաբնույթ միջոցառումներ:

Փետրվարի 11-ին Ստեփանակերտի Խ. Աբովյանի անվ. հ. 1 հիմնական դպրոցում տասնօրյակը մեկնարկեց հետաքրքիր միջոցառմամբ՝ նվիրված մայրենիին և Պարույր Սևակի ծննդյան 88-րդ տարեդարձին: Այս զուգարկությունը պատահական չէր, քանզի բանաստեղծը պաշտամունքի հասնող սիրով էր կապված մայրենիին, ինչի լավագույն ակադուցը նրա ողջ ստեղծագործությունն է, նրա նորարարական խանդը՝ հայ քնարերգության ոչ միայն թեմատիկ, այլև բառամթերքի ու տաղաչափության ասպարեզում: Առ մայրենին նրա սիրո բազմաթիվ խոստովանություններից վերիշենք մեկը. «Եվ երջանիկ է, ով քեզ կարող է կոչել Մայրենի... Երանելի է՝ ով քեզանով է խոսում ու դատում...»:

Միջոցառումը կազմակերպել էր հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ռոմելա Թովմասյանը: Տնօրեն Ռոմելա Դադայանը բացման խոսքում հատկանշեց մայրենիի դերը մեր ժողովրդի կյանքում. «Մայրենի բառը մայր բառից է, անկասկած, մայրենին էլ մոր ծնունդ է, դրա համար էլ այդքան հարազատ ու սուրբ է: Մեզ համար ամեն օր մայրենիի տոն է, որովհետև մենք հաղորդակցվում ենք մայրենիով: Այս տասնօրյակը նպատակ ունի զգաստացնել աշխարհի հայերին՝ խոսելու մայրենիով: Քանի կա հայ ժողովուրդը՝ կապրի մայրենին, քանի կա մայրենին՝ կապրի հայ ժողովուրդը»: Ընդգծելով բանաստեղծի՝ մայրենիի հանդեպ տաժած սերը, տիկին Դադայանն աշակերտների ուշադրությունը հրավիրեց Սևակի ամենասիրած զբաղմունքի՝ բառարանների ընթերցանության վրա:

Ողջ միջոցառման ընթացքում էկրանից ժպտում էր Պ. Սևակը. լուսանկարների մի ամբողջ շարք ներկայացնում էր բանաստեղծին տարբեր տարիքում, նրա ծնողներին, հայրական տունը, կնոջն ու զավակներին և այլ հետաքրքիր մանրամասներ նրա կյանքից: Տեսանյութն ավելի շրջափելի դարձրեց բանաստեղծի ներկայությունը դահլիճում, հատկապես երբ նրա մոզական ծայրի ելևէջները տարածվեցին օդում... Գրական-երաժշտական կառույցում համարված էին բանաստեղծի կյանքի և գործունեության կարևորագույն դրվագները, բանաստեղծու-

թյուններն ու հատվածներ պոեմներից, երգն ու երաժշտությունը: Երեխաներն ասունքում էին, երգում ու պարում: Ոչ միայն մայրենին փառաբանող երգեր հնչեցին, այլև՝ Սևակի խոսքերով գրված: Հաճելի անակնկալ էր նրա ամենասիրված բանաստեղծություններից մեկի՝ «Մոր ձեռքերի» տեքստով գրված երգը, որն ուղեկցվեց աղջիկների խմբապարով:

Ռ. Թովմասյանը, ամփոփելով միջոցառումը, ընդգծեց Պ. Սևակի դերը հայ գրականության մեջ՝ նրան կոչելով իր դարի ջահակիրը. «Նա դարձավ անմար մի արև, որի լույսն ու ջերմությունը այնքան շատ էին, որ ձգտում էր դրանք ծառայեցնել իր ժողովրդին՝ լուսավորելով մեր կյանքի մութ ու սովերոտ կողմերը»:

ԿԳՆ լեզվի տեսչության պետ Ժ. Հովսեփյանը մայրենիին նվիրված տասնօրյակի մեկնարկը մայրաքաղաքի հ. 1 հիմնական դպրոցում հրաշալի սկիզբ համարեց և շնորհակալություն հայտնեց միջոցառման կազմակերպիչներին, մասնակիցներին ու դպրոցի տնօրինությանը:

Միջոցառման վերջին ակորդը բանաստեղծի խոսքերով գրված հանրահայտ «Երեքունի-Երևան» երգն էր, որին հոտնկայս միացավ ամբողջ դահլիճը:

ԱՍՍՈՒՆՔԻ ՄՐՑՈՒՅԹ

Ինչպես նշեցինք՝ տասնօրյակի շրջանակներում կազմակերպվեցին տարաբնույթ միջոցառումներ, որոնցից մեկն էլ մայրենիին նվիրված ասունքի մրցույթն էր: Նախաձեռնել էր քաղաքապետարանի կրթության և սպորտի բաժնի գլխավոր մասնագետ Գ. Գրիգորյանը: Այն անցկացվեց Ստեփանակերտի հ. 7 հիմնական դպրոցի դահլիճում՝ մասնակցությամբ մայրաքաղաքի հանրակրթական դպրոցների, ֆիզմաթ դպրոցի և ռազմական վարժարանի սաների: Մրցատյանի կազմում էին դերասաններ, ուսուցիչներ, լրագրողներ, ովքեր դժվար ընտրության առջև էին կանգնած: Հայտ ներկայացրած 38 աշակերտներից մրցույթին մասնակցում էին 37-ը, որոնք ընդգրկված էին երկու՝ 11-14 և 15-17 տարիքային խմբերում:

Մրցույթի մասնակիցները ներկայացրին հայ բանաստեղծների լավագույն գործերը՝ նվիրված մեր ոսկեդարին ու արքայական լեզվին: Հազիվ թե գտնվի մի հայ բանաստեղծ, ով գեթ մեկ անգամ ներքող ձոնած չլիներ հայ լեզվին: Ոսկեդարի պատմագիրներից մինչև մերօրյա մեծագույն արվեստագետներն ու գրչի մշակները այն գնահատել են որպես գոյի ու հարատևության երաշխիք, իսկ ասունքի մրցույթը հրաշալի առիթ էր՝ վերստին անդրադառնալու նրանց գործերին: Հնչեցին Խ. Աբովյան, Ե. Չարենց, Հովհ. Շիրազ, Ս. Կապուտիկյան, Պ. Սևակ, Մ. Իշխան, Մետաքսե, Շ. Նարդունի, Հ. Սահյան, Ն. Միքայելյան, Վ. Դավթյան...

Հատկանշական է, որ այս անգամ, ի տարբերություն նախորդ մրցույթների՝ գերադրեստական արձակը ևս իր արժանի տեղը գրավեց, այն էլ՝ տարիքային երկու խմբերում: Առաջին մրցանակային տեղ գրաված Նարե Միրզաջանյանը կատարեց հատված Խ. Աբովյանի «Վերք Հայաստանի» վեպի առաջաբանից, իսկ Կարինե Ջաֆարյանը՝ Օ. Փանիկյանի «Մեարդախիկը»:

Ամփոփելով մրցույթի ար-

դյունքները՝ մրցատյանը հայտարարեց մրցանակային տեղ զբաղեցրած մասնակիցների անունները: Ըստ հավաքած միավորների՝ առաջին տեղը զբաղեցրին Ասարամ Իսրայելյանը (հ. 1 հ/դ, 5-րդ դաս., 11 տարեկան, ի դեպ, 2011-ին նա արևմտահայ բանաստեղծներին նվիրված ասունքի մրցույթ-փառատոնի հաղթող է ճանաչվել և Երևանում մասնակցելով եզրափակիչ փուլին՝ արժանացել մրցանակի), Նարե Միրզաջանյանն ու Հասմիկ Արզումանյանը (հ. 11 ավագ դպրոց, 11-րդ դաս.): Երկու տարիքային խմբերում 2-րդ տեղ գրավեցին 7, իսկ 3-րդ տեղ՝ 13 աշակերտ: Մրցանակային տեղեր գրաված բոլոր աշակերտները ԿԳ նախարարության կողմից կարգավատվեցին պատվոգրերով, իսկ 11 ակտիվ մասնակիցները՝ շնորհակալագրերով:

Վերջում մրցատյանի անդամներն իրենց նկատառումներն ու դիտողությունները հայտնեցին մասնակիցների ելույթների մասին: Գրող, լրագրող, «Ստեփանակերտ» թերթի խմբագիր Սոֆյա Սարգսյանը, հանրապետության ժողովրդական արտիստ Քաջիկ Հարությունյանն ու վաստակավոր արտիստ Սամվել Եվրիյանն առանձնացրին այն դրական միտումները, որոնք մրցույթից մրցույթ ավելի ակնառու են դառնում: Նրանց մասնագիտական խորհուրդներն անշուշտ կօգնեն աշակերտներին՝ հաղթելու հետագա մրցույթներում: Եվ մեկ անգամ ուսուցիչների ու մասնակիցների ուշադրությունը հրավիրվեց բառերի ճիշտ ու հստակ արտասանության, շեշտադրության ու տրամաբանական դադարների, ընտրված երկի վրա աշխատելու ձևերի վրա: Առանձնացնենք մի կարևոր հանգամանք էլ. արևմտահայ քնարերգությունից ընտրություն կատարած շատ քիչ աշակերտներ էին պահպանել արևմտահայերենի արտասանական առանձնահատկությունները, ոմանք սխալներով էին արտասանում, ինչը վկայում է այն մասին, որ նրանք չէին յուրացրել տեքստի բառամթերքը, հույզի, զգացմունքի պակաս կար ոմանց մոտ, կամ ի՞նչ իմաստ ունի ցածր, հազիվ լսելի և միապաղաղ ձայնով արտասանող երեխային ուղարկել մրցույթ: Չէ՞ որ մրցույթը ենթադրում է ուժեղագույնների մասնակցություն: Բարեբախտաբար, այդպիսիք էլ քիչ չէին. անկախ բոլոր դժվարություններից՝ իրենց գեղեցիկ ասունքով մրցատյանի բարձր գնահատականին արժանացան շատերը:

Լեզվի տեսչության պետ Ժ. Հովսեփյանն ուրախությամբ փաստեց, որ մրցանակային տեղեր զբաղեցրած մասնակիցներն այդքան շատ են: Նա հաճելի անակնկալ մատուցեց առաջին տեղ գրաված 3 մասնակիցներին՝ հրավիրելով նրանց ելույթ ունենալ Մայրենիի օրվա առթիվ կազմակերպվելիք միջոցառմանը, որտեղ կարգավատվեն նախարարության պատվոգրերով և փոքրիկ հուշանվերներով:

Ս. ՄԻՆՈՆՅԱՆ

ԱՆԱՂԱՐՑ ՊԱՇԵՆՔ ՄԵՐ ՄԱՅՐԵՆԻՆ

Մեր լեզուն հայապահպանության գլխավոր գեներ է, մեր գոյության հիմնասյունը, ազգային միաբանության կարևոր գրավականը: Հարյուրամյակների ընթացքում հաճախ հենց հայոց լեզուն է փոխարինել հայրենիքին:

Այսօր մեր ազգային դպրոցի խնդիրն է սովորողների հայեցի դաստիարակությունը, մայրենի լեզվի գերազանց իմացությունը: Այդ նպատակն էր հետապնդում փետրվարի 20-ին Ստեփանակերտի Հայկ Բալասանյանի անվան հ. 5 հիմնական դպրոցում կազմակերպված գրական-երաժշտական ցերեկույթը՝ նվիրված Մայրենիի օրվան: Միջոցառման կազմակերպիչն էր հայոց լեզվի և գրականության մեթոդավորման նախագահ Սուսաննա Դադայանը: Միջոցառման նպատակը և օրվա ընտրությունը նա այսպես պարզաբանեց.

- Փետրվարի 20-ը մեր ազգային մեծ զարթոնքի, վերածննդի սկիզբն է, և պատահական չէ, որ միջոցառումը զուգարկվել է այդ օրվան, քանի որ Արցախյան գոյապայքարը նախ և առաջ պայքար էր մայրենի լեզվի համար, այն ոգեղեն լեզվի, որի փրկության ու պահպանման համար արդարության մեր ձայնը բարձրացրինք: Դարեր ի վեր չունեինք պետականություն, բայց մեր ազգային պատկանելությունը կարողացանք պահել մեր մայրենի լեզվի շնորհիվ:

Օրը տոնական էր, դահլիճը շնչում էր օրվա խորհրդով. «Անաղարտ պահենք մեր մայրենին», «Մեր ոսկեդարիկ հայոց լեզուն», «Մայրենի», «Տոն, որ բոլորինն է», «Մայրենի լեզու, մայրենի բարբառ» վերտառությամբ պատի թերթեր, հայոց լեզվի մասին ասույթներ և թևավոր խոսքեր, Մաշտոցի և հայ դասական գրողների դիմանկարներ, ցուցապաստառներ:

Տպավորիչ էր միջոցառման սկիզբը: Դահլիճով մեկ թևածում էր Չարենցի «Ես իմ անուշ Հայաստանի» բանաստեղծությունը, դրան հետևեց «Մեր հայոց լեզուն» երգը, որին լրացնելու եկան աղջիկներն՝ իրենց հեզաճկուն պարով:

Այբ-բեն-գիմ-ը արտասանելով բեմ բարձրացան աշակերտները, այնուհետև փառաբանվեց հայերեն գրերի ստեղծող Մեսրոպ Մաշտոցը, հնչեցին բանաստեղծություններ և երգեր՝ նվիրված մեր առաջին ուսուցչին: Աշակերտներն իրենց ասունքով, երգերով և պարերով արտահայտեցին իրենց սերն առ մայրենի:

Միջոցառումն ավարտվեց երգման խոսքով, որին հետևեց հայկական ավանդական «Քոչարին»: Մեկ ժամ տևած միջոցառումը հավաստեց, որ դպրոցում բարձր հիմքերի վրա է աշակերտների հայեցի դաստիարակությունը:

**Սյրեհի, հ. 5 հիմն. դպրոցի
հ. լեզվի և գրականության մասնախումբ**

ԵՐԿՈՒ ՄԻՋՈՑԱՌՈՒՄ՝ ՄԵԿ ՆՊԱՏԱԿ

*«Ճոխ է հայոց լեզուն և առատորեն կվարձատրվի նա, ով կուսումնասիրի այն»:
Զ. Բայրոն*

Հայ ժողովուրդը դասվում է աշխարհի ամենահարուստ պատմությունն ունեցող ժողովուրդների շարքը: Պատմությունից քիչ ժառանգություն չենք ստացել: Սակայն մեր ժառանգության ամենամեծ գանձը մեր լեզուն է: Եվ այդ լեզվի խնամքը, անուղարտությունն ու պաշտպանությունը հաճախ է մեզ:

Դա գիտակցում են նաև Տոռի միջնակարգ դպրոցի դասվար Ռոմելա Բալասանը և հայոց լեզվի ու գրականության ուսուցչուհի Ջոյա Ջավադյանը: Նրանք օրերս կազմակերպեցին մեկը մյուսից գեղեցիկ, մեկը մյուսից ինքնատիպ երկու տարբեր միջոցառումներ: Տարբեր էին այդ միջոցառումները, սակայն հետապնդում էին մեկ կարևոր նպատակ՝ աշակերտների մեջ սերմանել, արմատավորել մայրենիի անաղարտությունը պահպանելու ամիրաժեշտությունը:

Փետրվարի 20-ին մայրենիի գովքով հանդես եկան չորրորդ դասարանի աշակերտները: Դահլիճը զարդարված էր գեղեցիկ նկարներով, պատի թերթերով, իրենց գեղեցկությամբ մարդու աչքը շլացնող ծաղիկներով:

Աշակերտներն իրենց ասունքով, երգով, հետաքրքրաշարժ պատմություններով փառաբանեցին մեր ոսկեդարիկ մայրենին:

Մայրենիի փառաբանությանը նաև նվիրված էր փետրվարի 21-ին դպրոցում կազմակերպված հերթական միջոցառումը: Այն նախաձեռնել էր դպրոցի հայոց լեզվի և գրականության ուսուցչուհի Ջոյա Ջավադյանը: Միջոցառման ընթացքում իրենց գիտելիքներով փայլեցին երկու թիմերը՝ «Տողասարն» ու «Գուշականք»: Հնչեցին բազում հարցեր ինչպես մայրենիից, այնպես էլ հայոց պատմությունից: Միջոցառման առանձնակի շուք էին հաղորդում աշակերտների արտահայտիչ արտասանություններն ու երաժշտական ընդմիջումները: Հանդիսատեսին մեծ իրացմունք պարգևեցին աշակերտների՝ դարաբաղյան բարբառով համեմված զվարճալի պատմությունները: Իրենց ինքնատիպությամբ առանձնանում էին նաև թիմերի պատրաստած պատի թերթերը: Միջոցառումն անցավ ջերմ ու մտերմիկ մթնոլորտում:

**Մարինե ԿԱՐՈՒՇՅԱՆ
Տոռի Վ. Գրիգորյանի անվ. միջն.
դպրոցի պատմության ուսուցչուհի**

ԱՆՆԱՐՄՑ ՇԱՅՏԵՐԵՆ

ԼԵՂՈՒՆ ՆԱԵՎ ՎԱՐՔԱԳԻԾ Ե ԶԵՎԱՎՈՐՈՒՄ

Լեզուն արտահայտում և արտացոլում է հավաքական ու հասարակական գիտակցություն, ազգային մտածողություն, ազգային բնավորություն, ապրելակերպ, բարոյական արժեքներ ու չափանիշներ: Լեզուն պարտադրում է իր մտածողությունը, տեսակետը, վերաբերմունքը: Այսօր լեզվական միջավայր ապահովող անենաընդգրկուն լսարան ունեցող տեղեկատվական դաշտը հեռուստատեսությունն է: Փորձագիտական հետազոտությունները պարզում են, որ դպրոցականների հիմնական ակնկալիքները պրոյեկտված են հեռուստատեսության վրա:

Թվում է՝ այն գեղեցիկ բազմազան ու տարածման լավագույն միջոց է, և դիտելու ընթացքում մենք կարող ենք որդեգրել այնպիսի արժեքներ, ինչպիսիք են՝ գեղագիտական, հայրենասիրական, այլասիրական, հունանիստական: Բայց հնարավոր չէ այս արժեքներից որևէ մեկը որդեգրել ու ընդունել՝ դիտելով, օրինակ, «Եգրագոֆից այն կողմ» հեռուստասերիալը («Արմենիա» հեռուստաընկերություն): Հիմնականում նույնը կարելի է ասել նաև մնացած հեռուստասերիալների մասին՝ «Եդբայրներ», «Դժվար ապրուստ» և այլն:

Բռնության, անհանդուրժողականության, թշնամանքի, կեղծիքի յուրատեսակ քարոզչություն կա բոլոր այս ֆիլմերում, որ, անշուշտ, կապված է մարդու լեզվախոսքային գործունեության հետ, որը ձևավորում է մարդու և աշխարհի հարաբերությունները: Բոլոր այս ֆիլմերի բովանդակությունը կապվում է ունկնդիրների զգացմունքների հետ, և հուզական ազդեցությունը չի կարող չհանգեցնել վարքի փոփոխությունների: Հուզական ազդեցության դեպքում ակտիվանում է մարդու ենթագիտակցությունը և իռացիոնալ (անմիտ) մտածողությունը, իսկ այն, ինչ ստեղծում է միտքը, կոչվում է իմաստ: Այդ քարոզչական աշխատանքի շնորհիվ, որում ակնառու է լեզվամտածողության դերը, ընկալողի մեջ առաջ են գալիս հիմնականում եսասիրական զգացմունքներ, բարձր հավակնություններ: Բացա-

սական եսասիրական զգացմունքների դերն ակնհայտ է հատկապես «Եգրագոֆից այն կողմ» հեռուստասերիալում: Այստեղ կրկին մտածողության ու խոսքի ուժեղ կապ կա, որի պարբերականությունը ճնշման բնույթ ունի, ինչի հետևանքով հեռուստադիտողի մոտ տեղի է ունենում նորմերի կայուն մտապահում՝ անկախ նրա ճշմարիտ լինելուց: Այս ամենն արվելի ակնառու և կենդանի է դառնում, քանի որ մատուցվում է բազային լեզվով: Բազային լեզուն ձևավորում է խոսքային միջավայր, և միջավայրի հերոսը դառնում է նույն այդ հայրենի մարդը՝ իր գեղեցիկ բառապաշարով: Գրական հայերենից շեղումը դառնում է նորմա՝ կենդանի խոսք, նույնիսկ կարծրատիպ: Եվ այս արտավոր գործընթացների հիմնական ազդեցություն կրողը դեռահասն է, որի աշխարհընկալումը, գաղափարները ու մտեցումները ձևավորման փուլում են: Ավելին, նա հոգեբանական նույնազանց մեջ է մտնում մատուցվող կերպարների հետ, ընդօրինակում նրանց խոսքը, հույզերն ու մտքերը:

Լեզվական աղավաղումները շատ արագ տարածվում և դառնում են նրա բառապաշարի անբաժանելի մասը: Դպրոցականի կամ երիտասարդի սոցիալական վարքի ու որակների ձևավորումն անհնար է դիտել հեռուստատեսության ու նրա խոսքային միջավայրից դուրս: Իսկ խոսքը մտածողություն է, մտածողությունը՝ ենթադրվող վարքագիծ, իսկ լեզուն արտացոլում է մարդու մտածողությունը, մտածելակերպը: Լեզվի կատարելագործման վիճակից շատ մեծ չափով կախված է այն, թե ինչպես է մարդը մտածում և գործում: Լեզվական օրինաչափություններին լավ տիրապետողը հեշտությամբ է ձեռք բերում կուռ տրամաբանություն և ճկուն մտածողություն, որոնցով էլ պայմանավորված են նրա մտածելակերպն ու գործելակերպը: Նույն այդ սերիալ ստեղծողը շուկայական կողմնորոշում ունեցող մարդու ստեղծած մշակույթն է: Ավելին, այսպիսի մարդիկ միայն փոքր չափով են դառնում ազգի հոգեկերտվածքի և բնավորության կրողը, որոնք հանընդհանուր բանականու-

թյան և ազատության համապատկերի սկզբունքների վրա սկսել են մշակության ճոր փաստարկներ բերել: «Ջոկո»-ն էս, ախպեր, որ պալիտ ենք ըլնում», կամ «Արա, էսի նադիժնի մարդ չի, կոխներից պետքա զգուշանալ»: Կա՞, արդյոք, այստեղ 1600-ամյա պատմություն ունեցող մայրենի լեզվին հատուկ ոգի, զգացմունքի ներթափանցում: Անտարակույս՝ ոչ: Սա դեպի ազգային ստրկամտություն տանող դանդաղ, բայց հաստատուն ճանապարհ է, իսկ ազգային տհասությունը՝ նույն ազգային վարքագծի տհասությունը, վարքագծի դրդապատճառի տհասությունը: Բառը խորհրդանշի է, իսկ այստեղ մենք գործ ունենք մայրենիի ապախորհրդանշացման հետ: Երբ այս կամ այն բառը, արտահայտությունը ճիշտ, տեղին չի գործածվում, տուժում են և՛ լեզուն, և՛ միտքը: Ուրեմն՝ լեզվի նկատմամբ հոգատար լինելու համար շատ կարևոր է նաև մտքի և արտահայտության կապի ներդաստանում ու պահպանումը: Չնոռանանք, որ լեզուն էթնիկական ինքնապաշտպանության կարևորագույն միջոց է: Եվ երեխան լեզվի հետ մեկտեղ սովորում է հոգեբանական պաշտպանության այն ձևերն ու ռազմավարությունները, որ ստեղծել են նախնիները և ամրագրել լեզվական մշակույթում: Լեզվի կառուցվածքն ու բառապաշարի մի մասը յուրացնելով՝ յուրաքանչյուր անձ ոչ միայն սովորում է հոգեբանական ինքնապաշտպանության պատրաստ ձևեր, այլև ձեռք է բերում այդպիսի ստեղծելու ներքին հնարավորություններ:

Շատ կարևոր է, որ մենք նպաստենք, աշակերտի և ուսանողի մեջ ձևավորենք հեռուստատեսության մատուցած նյութերը վերծանելու, վերլուծելու կարողություն, ինչը կօգնի ճանաչել նույն այդ հեռուստատեսության գաղափարախոսական և արժեքային ուղերձները: Դպրոցականին և ուսանողին հնարավորության սահմաններում պետք է կարողանանք օգնել՝ բացահայտելու հեռուստատեսության քարոզչության կանխակալության ու խեղաթյուրման առկայությունը, օրինակ, տե-

սակետների միտումնավոր ընդգրկումը կամ բացառումը: Արցախի հանրային հեռուստատեսությունը չունի լեզվի անադարտության պահպանման ուղղված հարդորում: Սա պայքարի բաց ասպարեզ կլինի:

Այսպիսի մի չարքոված արտահայտություն կա. պահանջարկն է ձևավորում առաջարկը: Սուտ և անընդունելի տեսակետ է: Ո՞վ է ասել՝ ժողովուրդն է ձգտում դաժանության, կեղծիքի ու անհանդուրժողականության: Մենք դարձրեք շարունակ գտնվել ենք օտարի տիրապետության տակ, բայց հայոց լեզուն հիմնականում պահպանել է իր մաքրությունը: Բերեն ընդամենը մեկ օրինակ. արաբերենից հայոց լեզուն փոխառել է 702 բառ, որոնցից գրական հայերենում օգտագործվում է միայն 53-ը, թուրքերենի 4000 բառից հայոց գրական լեզվում գրեթե ոչ մեկը չի օգտագործվում: Նույն այդ հեռուստատեսությունը էլ այսօր բազային լեզուն բերել էթեր ու շարունակում է լեզվական մեղադրանքներով արժեքներ կոխկրտել: Մինչդեռ հեռուստատեսությունը ազգային կառուցվածքային ինքնապաշտպանություն իրականացնող հզոր մեխանիզմ է: Եվ այդ գործառնությունը լիարժեքորեն կիրականացվեր, եթե մայրենիի անադարտությունը հնարավորին պահպանվեր:

Մենք չպետք է մոռանանք, որ ապրում ենք ռազմական դրության պայմաններում և կարծում ենք, որ ժողովրդավարության որոշ արժեքներ, մասնավորապես ազատությունը, որ նույնացվել է ամենաթողություն հետ, չպետք է բացարձակացվի: Գուցե սասվածք հավակնություն ընկալվի, բայց ասենք, որ պետական գրաքննության ներմուծումը բնավ ծայրահեղություն չենք համարում, քանի որ խոսքն արժեքների փչացման մասին է: Այս ամենի հսկման համար միմիայն պետական մոտեցումն է հարկավոր:

Լուսինե ՂԱՐԱՍԱՆՅԱՆ
ԼՂՀ ԿԳՆ մասնագիտական կրթության եւ գիտության բաժնի գլխավոր մասնագետ, հ. գ. թ.

Տեսակետ

ՀԱՆՈՒՆ ԱՌԱՋՆԵԹԱՅԻ

Շատ է խոսվել և դեռ կխոսվի կրթության համակարգում անցկացվող բարեփոխումների ու դեռևս չզարմող պրոյուզների մասին: Աշխատում են կրթության բաժնում՝ որպես տեսուչ, բայց համատեղության կարգով նաև դասավանդում են դպրոցում: Այս համատեղությունն օգնում է ինձ ավելի խորը ըմբռնել կրթության բնագավառի հետ կապված մի շարք խնդիրներ:

Այն, որ անցկացվող բարեփոխումներն անհրաժեշտ են, խոսք չկա: Թե դրանում շտապել ենք կամ չենք շտապել, դա էլ քննության հարց է, որովհետև գործընթացը սկսված է: Պարզ է նաև, որ բարեփոխումների նպատակն ուսումնադաստիարակչական աշխատանքների որակի ապահովումն է: Ուն հայտնի չէ, որ այդ բարեփոխումներն իրականացնելու համար իր կոչմանը արժանի ուսուցիչներ պետք է ունենանք հանրակրթական դպրոցի բոլոր օղակներում: Ուշադրության կենտրոնում պետք է լինի նաև մանկապարտեզում տարվող աշխատանքների որակը:

Հարց է ծագում. ուսուցչության մասն բանակ արդյոք ունե՞նք այսօր: Եզնարտության առաջ չենդանջելու համար խոստովանենք՝ որ ոչ: Սպասելն էլ ոչ մի արդյունք չի տա. երկնքից հո չեն իջնելու: Մնում է եղածին ապավինել: Մեր հանրապետությունում (առավել և՛ քաղաքներում) առկա է ուսուցիչների ավելցուկ: Եվ այն գնալով աճում է: Ինչքան՞ սպասենք ատեսացի կոչվածին: Եվ եթե այն իրոք մոտ է, չպետք է ձևական բնույթ կրի, թե չէ կատարվի՞ դրսևում ենք տեղում: Մասնագետ ուսուցիչն ինտելեկտուալ զարգացման իր մակարդակը պիտի ունենա: Առեստավորումը պիտի պարզի ուսուցչի մանկավարժահոգեբանական, մասնագիտական և քաղաքական իմացության մակարդակը: Խորհրդային տարիներին

ուսուցչից ինքնակրթությամբ զբաղվել էին պահանջում նույն այդ երեք ուղղություններով: Թե որ այս ատեստավորման գործընթացում էլ ծանոթ-բարեկամ կապերը տեղ ունեցան, հաշվեք ամեն ինչ տապալված:

Ատեստավորումը միայն տեսական բնույթ չպետք է կրի, առանց փորձի այն ոչինչ չի կարող փոխել: Նախապես ասենք, որ ատեստավորմանը սահմանված կարգին կողմ չեն: Թե ինչու՞ պարզաբանենք: Նախ՝ երրորդ կարգ ունեցող ուսուցիչները կբավարարվեն հենց դրանով: Միջակայքում մեջ իրենց հանգիստ տեղը կբռնեն: Շատ ջերը ձգտում կունենան իրենց կարգը բարձրացնել: Մյուս կողմից էլ՝ ծնողների մոտ նախանձախնդրությունը գլուխ կբարձրացնի. ինչու՞ իր երեխային առաջին կարգի ուսուցիչ դասավանդի, իսկ հարևանի երեխային՝ երկրորդ կամ երրորդ կարգի:

Անհրաժեշտ է, որ ատեստավորումն անցկացվի առանձին փուլերով՝ առանց շտապարկականության: Կառաջարկեի երեք փուլ: Առաջին փուլում ստուգման մակարդակը միջինը պիտի լինի: Այդ փուլում մենք կազատվենք ամենաթույլ կոչված ուսուցիչները: Երկրորդ փուլում ուսուցիչների զգոնությունն իր կոչման բարձրության վրա կլինի, քանզի նրանք տեսել են առաջինի արդյունքները: Այս փուլով կազատվենք միջակայքում: Պարզ է, որ երրորդ փուլում կմնան լավերն ու լավագույնները:

Ամենից մեծ հանդգնությունը եղել է այն, որ անցել ենք կրթության համակարգի բարեփոխումներին: Ատեստավորումը Նոյնքան մեծ ռիսկ չի պահանջում, եթե ձևականությունից հեռու մնանք: Համակարգը բախտախնդիր մարդկանցից մաքրելն ինչո՞ւ մեծ ռիսկ պիտի պահանջի: Կա մի շատ կարևոր

համագմանք ևս: Ըստ իս, ուսուցիչների ատեստավորմանը պիտի նախորդի տնօրեններից: Իր կոչմանն արժանի ուսուցիչ ունենալը դեռևս քիչ է: Ուսուցչական կոլեկտիվը բանիմաց, հմուտ, պահանջկոտ, բայց նաև հոգատար դեկավար պետք է ունենա: Ո՞ւն հայտնի չէ, որ գործառնող հաղթական մարտի տանողը իրամանարն է: Տճօրենի դերը մեծ է ոչ միայն ատեստավորման, այլ նաև մրցութային կարգով նոր ուսուցիչների ընդունման հարցում: Տճօրենը մաքուր պիտի լինի բոլոր առումներով, առանձնապես, անկողմնակալության հարցում: Եթե տնօրենն այն չէ իր պահանջկոտությամբ, եթե բոլոր ուսուցիչներին «մի արշինով է չափում», անգամ իր կոչման վրա գտնվող ուսուցիչը կարող է իր դիրքերը զիջել: Լավ կլինի տնօրենների հարցում հետևենք Հայաստանի Հանրապետության օրինակին՝ անցկացնելով մրցույթ:

Ասվածին ինչպե՞ս չգումարեն այն, որ հարցերի հարց է բարձրագույն ուսումնական հաստատություններում ընդունելությունը, որը շատ անաչառ պետք է լինի: Կշահենք առավելագույնս, եթե բոլոր ընդունվի արժանավորը: Հակառակ դեպքում նորից կկանգնենք դժվարության առաջ: Առանձնակի կարևորություն պետք է տալ ուսման որակին ոչ միայն տեսական իմաստով, այլև փորձնական:

Համոզված են, որ խնդիրների այսպիսի մոտեցումը կապահովի մեր առաջընթացը կրթական համակարգում: Շատ կուզենայի, որ հողվածիս արձագանքեին իմ գործընկերները: Եկեք միասին խորհրդածենք մեր առջև ծառայած խնդիրների շուրջ:

Սուսաննա ՇԱԳՅԱՆ

ԽՈՍՔ ԵՐԱՆՏԱԳԻՏՈՒԹՅԱՆ

Մարդուն բնութագրելու, նրա մասին կարծիք կազմելու համար շատ կարևոր է առաջին հայացքը, առաջին վարկեցողությունը, որ հիմնաքար է ծառայում հետագա շփումներին: Խոսքը վերաբերում է Ատեստավորության Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցի տնօրեն Ս. Շահրամանյանին, ուսանավար Ա. Հակոբյանին, կազմակերպչական աշխատանքների գծով փոխտնօրեն Ա. Սարգսյանին և ուսուցչական կոլեկտիվին:

Փետրվարի 9-ին ԱրՊՀ-ում նիստ գումարվեց, որին մասնակցում էին բանասիրական 4-րդ կուրսի ուսանողները՝ դեկան Յ. Մուսայելյանի, գրականագետ Գ. Լալայանի, լեզվաբան Ծ. Հարսիսյանի, ինչպես նաև հոգեբանի և փորձուսուցման նախագահի գլխավորությամբ:

Նիստը նվիրված էր փորձուսուցմանը: Ելույթ ունեցան վերոհիշյալ ղեկավարները՝ հանգամանալից ներկայացնելով փորձուսուցում հասկացությունն ու նրա կարևորությունը: Նիստի ավարտից հետո ուսանողներից ոմանք համապատասխան թույլտվությամբ ճանապարհվեցին հայրենի գյուղերում անցկացնելու փորձուսուցումը: Իսկ մնացած մասը փորձուսուցման անմիջական ղեկավարների գլխավորությամբ՝ թիվ 10 հիմնական դպրոց:

Զնայած որ ծնվել ու մեծացել են մանկավարժի ընտանիքում և քիչ թե շատ տեղյակ են մասնատիպ հանագամանքներին, այնուհանդերձ, ողջ ճանապարհին մի տեսակ մտասույզ էի. չէ՞ որ անձանոթ միջավայր ես մտնում և դեռ չգիտես հետագա անակնկալների մասին: Հասանք դպրոց: Նախ երեխաների սևեռում հայացքներն ուղղվեցին մեզ՝ պրակտիկաներին: Այնուհետև մեծ ջերմությամբ մեզ մոտեցավ տիկին Հակոբյանը, որի դեմքի գործվանքը երբեք չեն մոռանա, չգիտեմ էլ ինչպես բնութագրեն այն ապրումները, որ ունեցա այդ պահերին, բայց այն, որ տոգորվեցի վեհության զգացումով, անհերքելի է: Ջերմ հանդիպումից հետո Ա. Հակոբյանը մեզ ուղեկցեց դպրոցի տնօրեն Ա. Շահրամանյանի մոտ: Նա ևս ընդունեց մեծ սիրով: Պարոն Շահրամանյանը ընդգծեց փաստի կարևորությունը և մարքեց մեզ հաջողություններ:

Յուրաքանչյուրս կցվեցինք մի ուսուցչի: Իմ ղեկավարն էր ընկեր Անդրյանը, որի յուրաքանչյուր դաս սոսկ դաս չէր, այլ դաս՝ կյանքի ու հայրենասիրության: Նա իր աշխատանքը կատարում էր մեծ նվիրվածությամբ:

Ինչ մնում է աշակերտներին, նրանք շատ ակտիվ էին, պրպտող, աշխատասեր: Շատ էի կապվել աշակերտներին, նրանցից ամեն մեկը յուրովի մի աշխարհ էր:

Սա իմ կյանքի լավագույն էջերից է, որը երբեք չեն գոցի, այլ միշտ կպահեն՝ ի նշան այն բանի, որ սա այն հիմնաքարն է, որի վրա աշակերտկող պիտի կառուցեն: Իմ խորին երախտագիտությունն են հայտնում Ատեստավորության Ավ. Իսահակյանի անվան հ. 10 հիմնական դպրոցի ուսուցչական կազմին՝ տնօրեն Ս. Շահրամանյանի գլխավորությամբ, նման ջերմ ընդունելություն համար: Եվ օգտվելով առիթից՝ ուզում են շնորհավորել Մայրենիի միջազգային օրվա կապակցությամբ. չէ որ լեզուն է այն ազգապահպան միջոցն ու վիթխարի ուժը, որի դեմ թշնամին իր սուրը պատյան է դնում:

Նանար ՊՊՂՈՍՅԱՆ
ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի
հ. լեզու եւ գրակ. բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի

ՀԱՅՐԵՆԱՊԱՇՏՊԱՆՈՒԹՅՈՒՆ

ՕՐԿԱ ԽՈՐՀՈՒՐԴԸ՝ ՀԱՅՐԵՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Ռազմահայրենասիրական դաստիարակությանը նվիրված գիտահրապարակախոսական ժառանգությունն ուսումնասիրելիս այսօր էլ արդիական է հնչում Գարեգին Նժդեհի խոսքը. «Հայրենիքն է հավատամքը՝ հայրենապաշտպանությունը, որի գի-



տակցումը յուրաքանչյուր ազգանվեր հայի տրվում է անմնացորդ, քանզի մարդկային գործերի մեջ Հայրենիքի պաշտպանությունն է ամենասրբազանը»:

Շուշիի Արսեն Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջում անցկացվեց Հայրենյաց պաշտպանի օրվան նվիրված ռազմահայրենասիրական ավանդական միջոցառումների շարքը:

Ներկա էին Շուշիում տեղակայված առանձին ռադիոտեխնիկական գումարտակից (շեֆ զորամաս) մայոր Գուրգեն Գրիգորյանը, Շուշիի շրջանային զինկոմիսարիատից՝ մայոր Դավիթ Հակոբյանը, Արցախի Ազատամարտիկների միության Շուշիի տարածքային միավորման խորհրդի նախագահ Վաչագան Ավանեսյանը, զինվորներ և այլոք:

Ռազմահայրենասիրական միջոցառումը մեկնարկեց ռազմամարզական խաղերով, որին հաջորդեց գրական-երաժշտական կոմպոզիցիան: Շնորհավորանքի և բացման խոսքով հանդես եկավ Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հումանիտար

ՏՈՆ ԷՐ ԵՎ ՆԱՀԱՏԱԿՆԵՐԻ ՀԻՇԱՏԱԿՄԱՆ ՕՐ

Ասկերանի շրջանի Իվանյանի բնակչության համար ավանդույթ է դարձել ամեն տարի բնակավայրի ազատագրման օրը՝ Փետրվարի 26-ը նշել Ստեփանակերտ-Ասկերան մայրուղու ձախ կողմից մոտ 300մ հեռավորության վրա գտնվող սրբավայրի վերածված տարածքում, որտեղ հողը շաղախված է այն 16 հերոսներից մեկի արյունով, որը հեռվից էր եկել, Մայր Հայաստանից խլված այս սուրբ հողակտորը գերությունից ազատելու և մշտական տունը գտել: Նրա մասին ոչ մի տեղեկություն չունենք: Միայն մենավոր գերեզմանաքարն է վկայում, որ այստեղ հերոսի արյուն է հեղվել:

Էլբակյան Մխիթար 1965-1992, փետրվարի 26 ՍՍՀԱՍԹԻԱ ջրկատից

Իսկ հուշաքարի ձախ կողմին վերից վար՝ «Արարատ»: Սրբավայր է դարձել այս տարածքը և գտնվում է դպրոցի ու գյուղապետարանի խնամքի տակ: Պլանով նախատեսված էր բնակավայրի ազատագրման 20-ամյակը նշել հենց այս սրբավայրում, սակայն Վրեժ Պողոսյանը, որ նախաձեռնել էր 16 նահատակներին հավերժացնող հուշարձան դնել, չէր հասցրել աշխատանքն ավարտել: Միջոցառումը կազմակերպվեց դպրոցի մարզագահի խնամքով: Տոնակատարությանը մասնակցում էին ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Դուլսյանը, պատգամավորներ, Ասկերանի շրջվարչակազմի աշխատողներ, Խոջալուի ազատագրման մարտերի մասնակիցներ, որոնց թվում՝ Վիտալի Բալասանյանը, Խոջալուի թշնամական կրակակետը ոչնչացնելու համար մղված ռազմագործողության ժամանակ զոհված ազատամարտիկների հարազատներ, ռազմական գործողությունների մասնակիցները և այլ տեղերից եկած բազմաթիվ հյուրեր: Գյուղի գլխավոր փողոցից դպրոցի բակ է մտնում աշակերտական և ուսուցչական կոլեկտիվների շարասյունը՝ մայրենի և տարալեզու ցուցադրատառերով, որոնցում ընթերցում ենք արդրեջանական իշխանությունների կողմից հորինված՝ Խոջալուի առասպելը: Ռազմագրքեր չի մեռնում, երբ էլ լինի, հաղթում է: Իվանյանի միջնակարգ դպրոցի սաները դպրոցի փոխտնօրեն Արևիկ Թովմասյանի գլխավորությամբ և անմիջական մասնակցությամբ իրենց ելույթով գեղարվեստական հաճույք պատճառեցին ներկաներին: Անչափ հուզիչ էր այն պահը, երբ դահլիճի ձախ կողմի պատի երկայնքով կանգնած «զինվորները» մեկ-մեկ առաջ եկան, դահլիճի կենտրոնում հպարտ կանգնեցին և յուրաքանչյուրը ներկայացրեց հարություն առած զոհված ազատամարտիկի: Հարազատների աչքերից արցունքներ էին հոսում, ոմանք լացակումած ժպտում էին, կարծես գտել էին իրենց հարազատներին, և պատահական չէ, որ վերջում մոտեցան, գրկախառնվեցին ու նույնիսկ շնորհակալություն հայտնեցին:

Առուշանյանին, որը մանրամասնորեն ներկայացրեց, թե իրականում ինչ է կատարվել Խոջալուում 20 տարի առաջ, որ ԼՂՀ ինքնապաշտպանության ուժերը, որ 1992թ. փետրվարի 24-ին ԼՂՀ ԳԽ որոշմամբ պետական կարգավիճակ են ստացել, փետրվարի 25-ի լույս 26-ի գիշերը փայլուն ռազմագործողությամբ վնասագերեցին Շուշիից հետո Արցախում նշանակությամբ երկրորդ ռազմական հենակետը՝ Խոջալու, որով և մեզ պարտադրված պատերազմում մոր փուլ սկսվեց:

Բոլոր ելույթ ունեցողները միաբերան ընդգծեցին, որ Խոջալուի կրակակետը վնասագերեցնելն անհրաժեշտություն էր, քանի որ հակառակորդը 1989թ. աշնանից զավթել էր Ստեփանակերտի օդանավակայանը և Հայաստանի հետ հաղորդակցության ցամաքային ուղու շրջափակմանը զուգարեք օդային ուղիների շրջափակումը՝ այնտեղ կենտրոնացնելով ռազմական մեծ քանակությամբ տեխնիկա և զինվորական ուժ ու սիստեմատիկաբար հրետակոծության էր ենթարկում Ստեփանակերտն ու շրջակայքի հայկական գյուղերը: Արարողության մասնակիցները մեծ հետաքրքրությամբ լսեցին ԼՂՀ ԱԺ նախագահ Աշոտ Դուլսյանի ելույթը: Բոլորի կողմից դասապարտվեց Ադրբեջանի կողմից հորինված «Խոջալուի առասպելը», և այն համոզմունքը հայտնվեց, որ ճշմարտությունը երբեք չի մեռնում, երբ էլ լինի, հաղթում է: Իվանյանի միջնակարգ դպրոցի սաները դպրոցի փոխտնօրեն Արևիկ Թովմասյանի գլխավորությամբ և անմիջական մասնակցությամբ իրենց ելույթով գեղարվեստական հաճույք պատճառեցին ներկաներին: Անչափ հուզիչ էր այն պահը, երբ դահլիճի ձախ կողմի պատի երկայնքով կանգնած «զինվորները» մեկ-մեկ առաջ եկան, դահլիճի կենտրոնում հպարտ կանգնեցին և յուրաքանչյուրը ներկայացրեց հարություն առած զոհված ազատամարտիկի: Հարազատների աչքերից արցունքներ էին հոսում, ոմանք լացակումած ժպտում էին, կարծես գտել էին իրենց հարազատներին, և պատահական չէ, որ վերջում մոտեցան, գրկախառնվեցին ու նույնիսկ շնորհակալություն հայտնեցին:

Ստեփանակերտի թիվ 21 ՊՏՈՒ-ում, թիվ 9 և մայրաքաղաքի հերթափոխային դպրոցներում: Ահա իմ արծիվ տղաները՝ Շատրյան Իլյիչ Սերգեյի, Աղասյան Վաչագան Մարտիկի, Մուսայեյան Վլադիմիր Պավելի, Հակոբյան Արտաշ Վահանի, որոնց դասավանդել են ՊՏՈՒ-ում: Իսկ Քոչարյան Արմեն Գրիգորիին թիվ 9 դպրոցում, Ռոբերտ Իվանի Թևանյանին էլ հերթափոխային դպրոցում են դասավանդել, այո, հերթափոխային դպրոցում, որի տնօրենը ես էի այդ ժամանակ, և 730 աշակերտ էր սովորում, ու այժմ այդ դպրոցի անունը ոչ մի տեղ չի հիշատակվում: Այժմ ես անկարող եմ հարմար խոսքեր գտնել ու բնութագրել իմ նախկին սաներին, բայց կարծում եմ՝ և՛ հիշատակածս նահատակների, և՛ Վլադիմիր Աղաջանյանի, Էդուարդ Աղաջանյանի, Վալերի Առուշանյանի, Համլետ Արզումանյանի, Արամ Երեմյանի, Դավիթ Բեգլարյանի, Արմեն Ջաքարյանի, Արթուր Մարտիրոսյանի, Անատոլի Սարուխանյանի և Արարատ Վահագնի Էլբակյանի (որի հայրանունը ցուցակից իմացա) հարազատները, մարտական ընկերները կարող են համապատասխան նյութեր ներկայացնել մեզ՝ լուսանկարների հետ, որպեսզի գոնե մի ալբոմ ստեղծենք կամ ֆոտոլահանակ պատրաստենք ու մեր աճող սերունդին նրանց ոգով դաստիարակենք:

Առիթից օգտվելով մի բան էլ հիշեցնեմ մեր հայոց պատմություն դասավանդողներին. «Հայոց պատմություն»-12-րդ դասարանի դասագրքի «Արցախյան ազատագրական պատերազմը» թեմայում գրված է (էջ 68). «Հայ մարտիկները գլխավոր ճանապարհի կողմից միջանցք էին թողել, որպեսզի Խոջալուի բնակիչները հեռանային Աղզան: Փետրվարի 26-ին մի քանի ժամվա ընթացքում հայ ինքնապաշտպանական ուժերը տալով 8 զոհ և 20 վիրավոր, լիովին ջախջախեցին Խոջալուում տեղակայված ադրբեջանական ուժերը: Շատ շնորհակալ ենք դասագրքի հեղինակներին, որ մեզ վիրավորների քանակին ծանոթացնում են (20), բայց որտեղից են վերցրել 8 զոհի քանակը, երբ մենք Իվանյանի դպրոցում 16 նահատակներին գիտենք անուն առ անուն և հանդիպում ենք նրանց հարազատներին ու մարտական ընկերներին ամեն տարի:



քոլեջի տնօրեն Արա Հայրապետյանը՝ ասելով, որ նման միջոցառումները նպաստում են բանակ-ուսումնական հաստատություն կապի ամրապնդմանը, և որ այսօրվա մեր պատանիներն ու աղջիկներն են վաղվա մեր հայրենիքի պաշտպանները լինելու:

Առանձին ռադիոտեխնիկական գումարտակի մայոր Գ. Գրիգորյանը նշեց, որ նման միջոցառումները մատաղ սերնդին դաստիարակում են հայրենասիրական ոգով, որը մեր ազգի ու հայրենիքի, պատվի ու սրբության պահպանման հզոր գրավականն է: Իսկ Դ. Հակոբյանը հավելեց, որ հայրենիքի պաշտպանության կազմակերպումն առաջին հերթին նախագորակոչային երիտասարդության գաղափարական պատրաստումն է:

Քոլեջի զինղեկ Գ. Պողոսյանը, ով լավ է գիտակցում իր կողմից դասավանդվող առարկայի կարևորությունը, ով զենքը ձեռքին պաշտպանել է հայրենիքի սահմանները, այսօր կենդանի օրինակ է իր սաների համար: Հենց նրա շնորհիվ է, որ քոլեջի թիմը մասնակից թիմերի մեջ գրավեց առաջին տեղը: Երկրորդ տեղում Քարին տակի դպրոցի թիմն էր, իսկ երրորդ տեղում՝ Դանիել Ղազարյանի անվան դպրոցի թիմը:

Քոլեջի տնօրեն Ա. Հայրապետյանը մասնակից թիմերին պարգևատրեց պատվոգրերով, իսկ մրցանակային տեղեր զբաղեցրած թիմերին՝ նվերներով:

Միջոցառման երկրորդ մասում մեր շնորհալի դասախոսները և ուսանողները հայրենաշունչ երգերով, արտասանությամբ հայրենամովիտունի հոգեցունց պահեր պարզեցին ներկաներին:

Համոզված կարող ենք ասել, որ նման միջոցառումներն ավելի խորն են թափանցում մեր սերնդի գաղափարաբարոյական նտածելակերպի մեջ, որովհետև դրանք և՛ տպավորիչ են, և՛ ուսանելի:

Ռուզաննա ԱՎԵՏԻՍՅԱՆ
Շուշիի Ա. Խաչատրյանի անվան պետական հումանիտար քոլեջի կազմակերպիչ

Սառլես ՀԱՆԱԶԱՐՅԱՆ
գ. Իվանյան

ՈՒՋՍԱՆԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ

ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՈԳՈՒ ԿԱՌ ՑՈՒՑԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ինչի՞ց է սկսվում Հայրենիքը: Դպրոցից: Ազգին, ժողովրդին դաստիարակում, կրթում ու ձևավորում է դպրոցը՝ կրթական համակարգը, քանզի յուրաքանչյուր երկրում դաստիարակության նպատակն ամենալայն իմաստով պետք է լինի ոչ միայն համաձայնակալին արժեքների՝ դարերով կուտակված ճանաչողական ու դաստիարակչական փորձի փոխանցումը երիտասարդ սերնդին, այլև ազգային գաղափարախոսության, ազգին ու հայրենիքին անմնացորդ նվիրվելու հատկանիշների սերմանումը, մարդասեր, ժողովրդավար և ազգային բարձր արժանապատվության տեր վառ անհատականությունների դաստիարակումը: Իսկ նման անհատականության ձևավորման խնդիրը ծառայած է հատկապես մեր ազգային դպրոցների առջև:

Ժամանակակից հայ երիտասարդը հպարտությամբ պետք է հիշի, որ ինքնատիպ մտածողության, մշակույթի, հայրենասեր ազգի ներկայացուցիչ է: Ուստի մեր դպրոցներում մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենների տեղակալներն իրենց ուսումնական տարվա դաստիարակչական աշխատանքների պլանը կառուցում են նման գաղափարախոսության և հայեցի դաստիարակչական նկատառումով:

Նրանց կազմակերպած ներդրողական և համաքաղաքային միջոցառումները շնչում են հայրենասիրությամբ ու ազգին մինչև վերջ ծառայելու պատրաստակամությամբ: Նման միջոցառումները մեր դպրոցականներին դարձնում են առավել պատասխանատու և կազմակերպված: Նրանք նոր ուրակներ են ձեռք բերում՝ հայրենասիրություն, ազգային հպարտություն ու արժանապատվություն:

88-ի փետրվարը մեր ժողովրդի փառապանծ հաղթանակների սկիզբն է նշանավորում: Այն ամփոփում է հայ ժողովրդի աննկուն կամքի, անկախության համար մինչև վերջ ազգովին պայքարելու պատրաստակամություն և վճռականություն:

Փետրվարի 20-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում կայացավ «Հայրենասիրական երգերի փառատոն»՝ մայրաքաղաքի դպրոցների աշակերտների մասնակցությամբ: Մտահղացումը ծնվել էր դեռևս 2011թ. սեպտեմբերին ՄՊՍԿ մեթոդիստի՝ դպրոցների մասնագիտացված կրթական աջակցությունների գծով տնօրենների տեղակալների սեմինար-պարապմունքում, որտեղ բացի դաստիարակչական հարցեր քննարկվելուց, մշակվում էին թե՛ փոխտնօրենների և թե՛ մեթոդիստի ուսումնական տարվա աշխատանքային պլանները: «Հայրենասիրական երգերի փառատոն»-ի նախագիծը հավանության արժանանալով քաղաքապետարանի աշխատակազմի կրթության և սպորտի բաժնի վարիչի կողմից, հաստատվեց Ստեփանակերտի ՄՊՍԿ տնօրենի կողմից:

Նախագծի շուրջ բոլոր դպրոցներում սկսեցին ծրագրել նախնական աշխատանքները: Նույն տարվա նոյեմբերին կրթության բաժնի կողմից մշակված կանոնակարգի համաձայն, դպրոցները սկսեցին պատրաստվել փառատոնին:

Սկսվեց «Հայրենասիրական երգերի փառատոնը»: Այն նախադեպը չուներ միջոցառում էր, որին դպրոցները մի առանձին հանդիսավորությամբ էին պատրաստվել:

Մի դպրոցի ելույթն արժանապես տարբերվում էր մյուսից և չէր զիջում նախորդին: Նրանք իրենց հայրենասիրական երգով կամ երգերի շարանով մի յուրօրինակ պատմություն էին ցուցադրում՝ երգի, հոգու և մարմնի ներդաշնակությամբ՝ լեցուն փառքի, հաղթանակի և հայրենասիրության զգացումով:

Փառատոնը խորհրդանշեց նաև մեր դպրոցականների հայրենասիրական ոգու և գաղափարախոսության արտահայտման ու հայ մշակութային արվեստին տիրապետելու ունակությունն ու վարպետությունը: Նրանք ներկայացրին Արցախյան գոյապայքարում մեր հաղթանակները: Միջոցառումը հաճելի հուզմունքի, հպարտության զգացումի ալիք առաջացրեց լեփ-լեցուն դասիկաներ: 21-ը որ ազատագրական և հայրենասիրական ամեն մի երգ մեր պատմության մի էջն է, մի դրվագը: Այն ժողովրդի զովեստի խոսքն է՝ ուղղված իր հերոսներին ու նրանց կատարած սխրանքներին:

Լավ գիտակցելով, որ Արցախյան գոյապայքարը հայ ժողովրդի աննկուն կամքի, անկախության համար մինչև վերջ ազգովին պայքարելու պատրաստակամության և վճռականության վկան է, դպրոցականները երգում էին «Հայ զինվոր», «Հայեր, միացեք», «Հայաստան աշխարհ», «Գարնանային քայլերդ», «Քայլի միշտ առաջ», «Հայ ասպետների օրհներգը», «Ոչ, չեն մեռնում հերոսները», «Սպարապետ», «Շուշի», «Տղերքը, որ չկան» և այլ հոգեցունք երգեր և երգերի շարան: Դա հայրենասիրության, ազգասիրության ու նվիրումի մի յուրահատուկ ցուցադրություն էր: Դահլիճը կարծես միախառնվել էր բեմին, ծայրակցում էր երգերի կատարումներին: Հանդիսատես աշակերտները ծածանում էին ՀՀ և ԼՂՀ պետական դրոշմերը: «Հայրենասիրական երգերի փառատոնի» խնդրությունն ու բերկրանքը վարակել էր բոլորին:

Վերջում բոլոր մասնակիցները բարձրացան բեմ և միասին երգեցին «Մեր անունն է հայկական բանակը» երգը: Ալեկոծվեց դահլիճը, ուրախությունն ու հուզմունքը պատել էր բոլորին: Հաղթական պայթյուններն ազդարարեցին փառատոնի ավարտը:

«Հայրենասիրական երգերի փառատոնը» հաստատեց, որ մեր կրթական համակարգը ճիշտ ուղիով է տանում հաղթանակած երկրի մատաղ սերնդի դաստիարակությունը: Այո, այս սերունդը պետք է կերտի մեր պետականությունը և պաշտպան կանգնի մեր հայրենիքին:

«Հայրենասիրական երգերի փառատոն»-ին ներկա էին ԼՂՀ նախագահի աշխատակազմի ղեկավար, Անվտանգության խորհրդի քարտուղար Մարտ Մուսայելյանը, կրթության և գիտության, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարները, Պաշտպանության բանակի սպաներ, պաշտոնական այլ անձինք:

ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ՀՅՈՒՐՆ ԷԻՆ ՓՈՔՐԻԿՆԵՐԸ

Նրանք անհամբերությամբ էին սպասում այդ օրվան: Գույնզգույն փուչիկներով զարդարված՝ Շուշիից իջնող ավտոբուսում նստած՝ ականջ էի դնում նրանց զրույցին: Ծնողներից մեկը պատմում էր, որ որդին ամբողջ գիշեր չի թողել քնել, շուտ-շուտ արթնացնում էր և զգուշացնում, որ հանկարծ քնով չանցնեն ուշանան...

Աղջիկները՝ այդպես տոնական ճերմակ հանդերձներով, տղաները՝ զինվորիկներ դարձած, նման հանդիպման առաջին անգամ չէին գնում: Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի նախադպրոցական խմբի այս երեխաներն իրենց դասվար Նարինե Գրիգորյանի հետ հասցրել են լինել Շուշիում տեղակայված ՊԲ զորամասերում տարբեր առիթներով: Եվ ահա խումբը Շուշիի ՀՕՊ զորամասի զինծառայողների երեխաների և ծնողների հետ գնում էր զինվորական մաս՝ նշելու զոհված ազատամարտիկի ծննդյան օրը: Ամբողջ ճանապարհին փոքրիկները համերաշխ արձագանքում էին դասվարի հարցերին՝ տարվա որ եղանակն է, ինչպիսին է լինում բնությունը, ինչ օր է Փետրվարի 23-ը, ովքեր են պաշտպանում հայրենիքը և այլն: Իսկ երբ տեսան դիրքում կանգնած զինվորին՝ ուրախ աղաղակով ողջունեցին:

Զինվորական մասում նրանց

ցում են, որ լավագույն տղաները չեն խնայել ոչինչ, անգամ ամենաթանկը՝ կյանքը, որ իրենք ապրեն խաղաղ երկրի տակ: Նրանցից մեկն էլ Անդրանիկ Հովսեփյանն է: Հայտարարվում է լուրջ պայքար: Փոքրիկները մեկական վառած մոմ



ծեռքներին և ծաղիկներ՝ մոտենում են Անդրանիկ Հովսեփյանի հուշանկյունին, խնկարկում նրա հիշատակը՝ գլուխ խոնարհելով: Պահի մեջ որքան տխրություն, նույնքան էլ հպարտություն կա. չէ՞ որ անգամ հինգ տարեկաններն են զգում երևույթի և իրենց արածի լրջությունը: Իսկ շարունակությունն արդեն ծնն էր հայրենիքին, համուն նրա նահատակված ազատամարտիկների, որի մի հերոս ներկայացուցիչ Անդրանիկ Հովսեփյանն էր:

Նրա անունը հավերժ մտցված է զորամասի ցուցակներում: Ամեն երեկոյան անվանականչին հնչում է նրա անուն-ազգանունը, ընդ որում, այն հնչեցնելու պատիվը տրվում է լավագույն զինվորին: Զինվորների կացարանում նրա մահճակալը՝ լուսանկարը զվազվերուն, միշտ հարդարված վիճակում է: Ասել է թե՛ նրա ներկայությունը միշտ կա, նա հավերժ կենդանի է:

Անդրանիկ Հովսեփյանը ծնվել է փետրվարի 26-ին, նույն օրը՝ ինչ հայ մեծ զորավար Անդրանիկ Օզանյանը և այն տարում՝ 1965 թվականին, երբ նշվում էր Ձորավարի ծննդյան 100-ամյակը: ԼՂՀ Ազգային ժողովի պատգամավոր Ռոմելյա Դադայանը, որի հարևանությամբ անցել է Անդրանիկ Հովսեփյանի մանկությունը, համոզված է, որ նախախնամությունն արդեն կանխորոշել էր նրա ճակատագիրը: Եվ տարիների հեռվից արդեն հասկանում է, թե ինչու, երբ Անդրանիկի հասակակիցները երգում էին «Թող միշտ լինի արևը», նա երգում էր «Ղարս, Ղարս, Ղարս, երբ պիտի դու նորից Հայաստան վերադառնաս» երգը, որն այն տարիներին արգելված էր: Եվ որտեղի՞ց գիտեր...

Անդրանիկն ավարտեց Ստեփանակերտի թիվ 3 միջնակարգ դպրոցը, ծառայեց բանակում, ծառայությունն անցկացրեց Բաքվում, տեսավ թուրք-ազերու դաժանությունը: Տեսավ, և մի ատելություն ևս ավելացավ հոգուն: Հետո ընդունվեց Բաքվի նավթի և քիմիայի ինստիտուտ, այստեղ էլ տեսավ աճած թուրքականները և շարունակեց, կիսատ թողնելով ուսումը՝ վերադարձավ հայրենի Ստեփանակերտ: Ապա դարձավ Ղափանի շինարարական տեխնիկումի ուսանող, հեռակայում էր և միաժամանակ աշխատում Ստեփանակերտի կահույքի ֆաբրի-

կայում: Երբ սկսվեց Արցախյան շարժումը, առաջիններից մեկը զինվորագրվեց, մտավ նոր կազմավորված փոքրիկ ջոկատ: Առաջիններից էր, որ հասկացավ, որ զենքով պետք է խոսել մեր ախոյանի հետ և ինքն էլ սկսեց զենքի հայթայթման գործով զբաղվել, այն թաքցնել: Սասնակցել է բազմաթիվ բնակավայրերի ազատագրմանը: Փետրվարի 26-ին՝ իր ծննդյան օրը, նա մասնակցում էր հուշալույսի ազատագրմանը: Ռ. Դադայանը հիշում է, թե ինչպես այդ օրը հուշալույսից եկավ շատ ուշ, բայց միևնույն է, չնոռացան, որ այդ օրը նրա ծննդյան օրն է, և նշեցին: Ուժեղ կամքի տեր էր Անդրանիկը, խիզախ, կարողանում էր հաղթահարել ամեն դժվարություն, շարունակում է իր հուշերը Ռ. Դադայանը, բայց ցավոք, թշնամու գնդակ գտավ նրան 1992թ. մարտի 12-ին...

Անդրանիկը չտեսավ ազատագրված Շուշին, որը փափագում էր, բայց անշուշտ, տեսնում և լսում է ազատագրված Շուշիի այս երեխաներին, որոնք ոտքը դոփելով գետնին, ասում են՝ թող թշնամին չփորձի մտնել իրենց սահմանները, տեսե՛ք՝ հայրենիքի ինչ նոր, ավելի ուժեղ պաշտպաններ են գալիս: Անդրանիկն, անշուշտ, տեսնում և ուրախանում է իր նոր զինակիցներով, որոնք ամեն օր պատվի են բռնում, ասելով՝ «Պատիվ ունեն»:

Այդ պատիվը և Անդրանիկին է, և զինվորներին ու նաև՝ այս փոքրիկներին, բոլորին: Ռ. Դադայանը շնորհակալություն հայտնեց երեխաներին ու դասվարին, Խ. Աբովյանի անվան դպրոցի տնօրինությանը՝ նման հայրենասնվեր ձեռնարկումի համար: Անչափ հուզված էին Անդրանիկի ծնողները: Հոր Ալեքսանդրի խոսքով, այս քսան տարիների ընթացքում ինքը նման բանի ականատես երբևէ չի եղել և առաջին անգամ անկեղծ ուրախության զգացում

ապրեց: Ծնողների հուզմունքը փոխանցվել էր ներկաներին, բայց գերիշխողը հպարտությունն էր: Հրամանատար Արմեն Հայրապետյանը զորամասի անունից պատվոգիր և նվերներ հանձնեց Շուշիի Խ. Աբովյանի անվան հիմնական դպրոցի նախադպրոցական խմբի սաներին և դասվար Նարինե Գրիգորյանին՝ բանակ-հասարակություն կապի ամրապնդման ուղղությամբ կազմակերպած միջոցառման համար՝ հավելելով, թե այսքանից հետո մեր հակառակորդը փորձում է մեզ վախեցնել... Տեսե՛ք ինչ սերունդ է գալիս՝ բոլորն Անդրանիկներ:



Այս քսան տարիների ընթացքում ինքը նման բանի ականատես երբևէ չի եղել և առաջին անգամ անկեղծ ուրախության զգացում

ԱՐԺԵԱՎՈՐ ԶԵՆՆԱՐԿ

ՃԱՄԱՆԱԿԱՇՐՋԱՆԻ ՅՈՒՐՈՐԻՆԱԿ ԸՆԵՐԱԳԻՏԱՐԱՆ

Ինչպե՞ս եղավ, որ Լեռնային Ղարաբաղը հայտնվեց Ադրբեյջանի կազմում, ի՞նչ դիրք բռնեցին հայ քաղաքական ուժերը, ինչպի-

տարի Կրասնովոդսկ քաղաքի ծխական դպրոցում աշխատելուց հետո՝ 1917թ. վերադառնում է Շուշի և աշխատում Մեղրեցոց թաղի ծխական դպրոցում: 1921-1923թթ. ուսուցիչ է աշխատում հայրենի գյուղում, ապա տեղափոխվում Ստեփանակերտ, ուր ուսուցչություն է անում գյուղատնտեսական տեխնիկումում: 1927թ. որդու հիվանդության պատճառով մեկնում է Բաքու, ուր հաստատվում և մնում է մինչև 1949 թվականը (բացառությամբ չորս տարվա հարկադրական ընդմիջման): Այստեղ էլ նա շարունակում է մանկավարժական գործունեությունը հայկական դպրոցներում: 1939-1942թթ. դասավանդել է Միոզիկի (հանլարի շրջան) և Ղարադաղլուի (Կասուն-Իսմայլովի շրջան) հայկական դպրոցներում: 1945թ. ավարտել է Բաքվի մանկավարժական ինստիտուտը: 1949թ. քաղաքական հայացքների համար արքայազն է Սիբիր: Ուսուցչություն է արել նաև Ալթայի երկրամասում: 1956թ. օգոստոսին վերադարձել է Երևան, անցել կենսաթոշակի: Վախճանվել է 1972թ., Երևանում: Աճյունը կտակի համաձայն տեղափոխվել է հայրենի գյուղ:

Օրերս ԼՂՀ Ազգային ժողովի գրադարանում տեղի ունեցավ Աբրահամ Կիսիբեկյանի «Յուշեր» երկհատորյակի շնորհանդեսը, որին մասնակցում էր Աժ մախագահ Աշոտ Ղուլյանը:

Աբրահամ Կիսիբեկյանի ամբիոնի ավագ դասախոս Լեռնիկ Գրիգորյանը գրքի բարձր արժեքը պայմանավորեց նրանով, որ ակադեմիկոս անաչառությամբ արտացոլված են ժամանակաշրջանի իրադարձությունները, սոցիալ-տնտեսական, մշակութային, կրթական կյանքը:

Շնորհանդեսին ներկա էին մարդիկ, ովքեր տեսել է ճանաչում էին Ա. Կիսիբեկյանին:

Աբրահամ Կիսիբեկյանը, մանկավարժական գիտությունների թեկնածու Գրիգորյանը սասց, որ նրան հանդիպել է 1969-1971թթ., երբ Կիսիբեկյանը այցելել էր իր հայրենի Շիրհեր գյուղ, հյուրընկալվել իրենց տանը: Այն հանգամանքը, որ գիտեր հորը՝ Վաղարշակ Գրիգորյանին, որը նույնպես արքայազն էր Ալթայ, գրուցելու շատ բան էր տալիս: Զորն ասել էր, թե մի փափագ ունի կյանքում, կուզենար, որ Մխտորաշեն գյուղում իրենց հսկայական տան փլատակներին կից մեկ սենյականոց տուն կառուցեր, մի գիշեր ծրագր վառեր, հաջորդ օրը մահանար, այլևս դարձ չէր ունենա: Գրիգորյանը Երևանում լինելով՝ եղել է Կիսիբեկյանի տանը, որը Թումանյան փողոցի վրա էր, և նրա վկայությամբ, շատ հեռու էր նորմալ համարվելուց: Միակ բանը, որ գրավել է նրա ուշադրությունը, մեծ գրապահարանն էր, որում գտնվում էին Ա. Կիսիբեկյանի ձեռագրերը: Եթե դրանք ամբողջությամբ տպագրվեին, երկու չէ, բազմաթիվ հատորներով գրքեր կլինեին: Թեպետ դա մի մարդու կենսագրություն է, ճակատագիր, բայց արտացոլում է այդ ժամանակաշրջանի քաղաքական, տնտեսական վիճակը, հատկապես մտավորականության, ուսուցիչների: Գրքում չափազանցություն չկա: Դա նա-

խորդ դարի մեր իրականությունն է: Գրիգորյանը ափսոսանք հայտնեց, որ գրքում գետեղված չեն ձեռագիր վիճակում էջեր. Կիսիբեկյանն ուներ հոյակապ ձեռագիր:

20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ Միքայել Բեգլարյանը երկար տարիներ ճանաչել է Կիսիբեկյանին, տասներկու տարի, երբ ինքը Շիրհեր գյուղի տնօրենն էր, և Կիսիբեկյանը այցելում էր գյուղ՝ աներոջ տուն, այնուհետև՝ Մխտորաշենի դպրոցի տնօրեն եղած ժամանակ, երբ նա գալիս էր հայրենի գյուղ: Նրան հիշում է որպես համարձակ, քաղաքական համոզմունքներին հավա-



տարին մարդու (նա դաշնակցական էր): Ա. Բեգլարյանը խոստովանեց, որ ինքը՝ որպես կոմունիստ, զգուշանում էր նրանից, բայց հիանում էր նրա մտքի համարձակությամբ: Մխտորաշեն գյուղի դպրոցի համար նա տասը տարի բաժանորդագրվել էր «Սովետական դպրոց», «Մանկավարժ» հանդեսները: Կիսիբեկյանի «Յուշերը» կարդալուց հետո պատրաստվում է խմբագրումներ կատարել Գրիգորյանի հեղափոխության մասին տպագրվելիք իր գրքում:

ԼՂՀ կոմկուսի առաջին քարտուղար Զորանտ Մելքոնյանը իր ելույթում նշեց, որ շնորհակալ գործ է կատարել Ա. Կիսիբեկյանը, բայց չպետք է մոռանալ նաև մյուսներին: Կիսիբեկյանը միայնակ չի եղել: Անկախ քաղաքական հայացքներից, նրա և մյուսների շնորհիվ է պահպանվել հայեցիությունը Ղարաբաղում, և նմաններն են արթուն պահել Ղարաբաղյան շարժման գաղափարը:

Շնորհանդեսին ներկայացել էին Ա. Կիսիբեկյանի հարազատներից Ալինա Իսրայելյանը և Ավրորա Կիսիբեկյանը, ովքեր հանդես եկան իրենց հուշերով:

Գրքի պատասխանատու խմբագիրն է երևանի հնագիտության և ազգագրության ինստիտուտի ավագ գիտաշխատող Ալվարդ Ղազիյանը: Շնորհանդեսին ներկա էր նրա որդին՝ Գևորգ Ղազիյանը: Նա պատմեց, որ մայրը շուրջ քսան տարի գեղավել է հուշերը ի մի բերելով, խմբագրական աշխատանքները կատարել է շատ զգուշությամբ, իսկ գրքի հրատարակությունը տևել է չորս տարի: «Սա մի ամբողջ դարաշրջան է, մի փոքրիկ համարագիտարան՝ մեկ հոգու տեսանկյունից», - ասաց նա:

Շնորհանդեսին ելույթ ունեցավ ԼՂՀ Աժ մախագահ Ա. Ղուլյանը: «Գիրքը հարուստ ազգագրական նյութ է պարունակում: Դա-

տուկնետ մենք կարող ենք գտնել Ղարաբաղյան իրականության, գյուղի և իրադարձությունների մասին նման տեղեկություններ: Շատ կարևոր տեղեկատվական նյութ է և ապագա պատմաբանների, ազգագրագետների համար հիանալի նմիր, որ կարողանան այդ համեմատություններն անել: Գիրքը նաև պատմագիտական շատ կարևոր տեղեկություններ է պարունակում: Այստեղ ամեն ինչ կա: Քաղաքական դեպքերը, իրադարձություններով հարուստ 1918-1920-ական թթ., որը Ղարաբաղյան հիմնախնդրի ակունքն է. ինչպե՞ս եղավ, ինչպե՞ս ստացվեց, ո՞վ է մեղավորը, ինչպե՞ս կարող էր դա հենց այդպես ստացվել: Գիրքը նաև ճիշտ տեղեկություններ է օգտակար նյութ է կրթական համակարգի ակունքների մասին: Տեսնում ենք Շուշիի թեմական դպրոցը, Ռեալական ուսումնարանը, և մարդիկ, որոնք ձևավորել են մեր մտավորականության համակարգը»:

Գրքում շատերը կփնտրեն հարազատ անուններ, ինչպես Աժ մախագահը հանդիպեց իր բարեկամին՝ Գաբրիել Գյուլիբեկյանին, որը եղել է Աբրահամ Կիսիբեկյանի ուսուցիչը, և ինքը ուրիշ ոչ մի տեղ նրա անվանը չի հանդիպել: Արժևորելով հանդերձ՝ Ա. Ղուլյանը տեսակետ հայտնեց, որ չպետք է միայն գովերգել: Ինչքան էլ փորձենք դա որակել որպես պատմագիտական-ազգագրական մի աշխատություն, որն անչափ կարևոր է, այստեղ, իրոք, կա նաև սուբյեկտիվության գործոնը: Որովհետև դրանք մարդու անձնական հուշերն են: Եվ անհնար է, որ անձնական տեսանկյունից չլինեն այդ հակասականությունները: Օրինակ, գրող Վրթանես Փափազյանի մասին, որն ուսուցիչ էր աշխատում թեմական դպրոցում, միշտ դրական կարծիքի ենք, սակայն գրքում անբարենպաստ պատկերացում է ստեղծվում նրա մասին, որովհետև հեղինակն իր տեսանկյունից է մոտեցել: Ա. Ղուլյանը կարծում է, որ նմանապես և քաղաքական կուսակցությունների մասին գրածին շատ հանգիստ պետք է վերաբերվել, որովհետև տարբեր ժամանակներում այդ կուսակցությունների դիրքորոշումը միանշանակ չի ընդունվում, և դա ժամանակի կնիքն է: Բոլոր դեպքերում նա ճիշտ համարեց գրքի հրատարակումը և ողջունեց Գրիգորյանի Կենտրոնական կոմիտեի նախաձեռնությունն ու մեր կառավարության աջակցությունը՝ նման հրատարակություն իրականացնելու համար:


Եթե այսպիսի գրքեր շատ ունենայինք, շատ ավելի ճիշտ և օբյեկտիվ իրականություն կտեսնեինք, համոզված է Ա. Ղուլյանը՝ խոսքը հանգեցնելով այն գաղափարին, որ Ղարաբաղյան շարժումը միշտ էլ հետ մղված է եղել 70 տարվա խորհրդային պետության խորքերում, և նրա նախապատրաստությունն արդեն այդ ժամանակներից կար, դրա համար էլ 88-ին պոռթկաց այդպես մեկ օրում, և բոլորս դուրս եկանք հրապարակ:

Գիրքը նվիրվում է ԼՂՀ 20-ամյակին:

Ս. ԽԱՉԱՏՐՅԱՆ

Շնորհավորանք

ԱՆՆԱՅՈՐԻ ՆԿԻՐՎԱԾ ԻՐ ԱՊԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ



Լ ր ա - ցավ Արցախ աշխարհի մանկավարժական բնագավառի նվիրյալներից մեկի՝ Միքայել Պետրոսյանի ծննդյան 80-ամյակը:

Մարդ, որ իր ամբողջ կյանքում ուսուցանել է ու կրթել է, և այսօր էլ անմնացորդ նվիրված է իր առաքելությանը, որն ի վերուստ է տրված...

Տարիներին հախուռն հորձանքը ինձ տանում է դեպի իմ մանկությունը, ու ես պարզ լսում եմ մանկական մաքուր ծիծաղիս ելևէջող տատանումները: Դորս երիտասարդ ու խոհուն հայացքն ուղեկցել է ինձ ու խրախուսել ամբողջ կյանքում: Իմ հաջողությունների օղակները շաղկապող ունեն շրթան է նա: Կյանքի դպրոցը ընդունվում են բոլորը, բայց ոչ բոլորն են ստանում վկայական, որի վրա գրված է լինի՝ «Մեծատառով մարդ»: Մենք՝ ես և երեք թույրերս, պետք է հաջող տայինք այդ քննությունը, հակառակ դեպքում հորս սաստող ու հանդիմանող հայացքին կհանդիպեինք, իսկ դա անթույլատրելի էր: Դայրս մեզ սովորեցրեց կյանքի քաղաքատու ճանապարհով հայարտ ու աներեր քայլել, չընկճվել, միշտ պայքարել, լինել մաքուր, պատիվն ու ազնվությունը միշտ վեր պահել...

Երկար տարիներ աշխատելով Ավետարանի շրջանի Ակնադրյունի միջնակարգ դպրոցում՝ որպես քիմիայի ու կենսաբանության ուսուցիչ և տնօրեն, նա թողարկել է հիանալի մասնագետներ: Նրա աշակերտները տարիներ ի վեր փայլել են շրջանային, մարզային և հանրապետական օլիմպիադաներում քիմիա առարկայից և բազմաթիվ պատվոգրեր ստեղծել իրենց ուսուցչի համար: Նրանց մեծ մասն այսօր էլ փայլուն մասնագետներ են ու իրենց ուսուցչի արժանի հետևորդներ: Դայրս ունի իր աշխարհը, այն գրքերի, գիտության, բնության ու բույսերի աշխարհն է:

Մեր տան գրքերը խոսել գիտեն, նրանք կարողանում են ժպտալ, գերել, կանչել, ձգել... Եթե ասեմ, որ մեր պահարաններում իշխում են միայն գիտական գրքերը, սխալ կլինի, որովհետև հորս գործակալը հայացքը շատ ավելի հաճախ կանգնում է պոեզիայի ու գեղարվեստական գրքերի վրա, նա նաև գրականության գիտակ է: Նրա ներկայությունը միշտ հաճելի է բոլորին, որովհետև հայրս նաև լավ գրուցակից է և խորհրդատու: Զորս խորհրդավոր աշխարհում գրքերն իրենց պատվավոր տեղն ունեն, բայց միակը չեն, նա առանձնահատուկ սեր ունի նաև բույսերի նկատմամբ: Միայն ինչու ուռճացրած չեն լինի, եթե ասեմ՝ որտեղ հայտնվում է, այնտեղ ծառ ու ծաղիկներ են աճում: Դպրոցամեծ երեք հողամաս նա դրախտավայր է դարձրել: Մանկությանն հեքիաթային տարիներին ես միշտ մտածում էի, թե հայրս գրուցում է գրքերի ու բույսերի հետ և հասկանում է բնության լեզուն: Նա ինձ համար միշտ լավագույնն ու գերագույնի բարձրակետն է: Նայելով նրա բարի դեմքին՝ ես գտնում եմ իմ բոլոր հարցերի պատասխանները: Եվ այսօր, երբ ես իր 80-ամյա բարձունքից նայում է արած-թողածին, ես համոզված եմ, որ դեռ խորհում է մարդկությանն անմնացորդ ու լրիվ նվիրաբերելու մասին:

Շնորհավոր տոնը, իմ պաշտելի հայրիկ: Եթե միայն կարողանայի ժամանակը ետ տալ...

Ասում են՝ սերը հրաշքներ է գործում, իսկ որդիական սերը՝ առավել է: Թող իմ սերն այսօր քո կնճիռներից գոնե մեկը կարողանա հարթել:

ՕՏԵԼՅԱ ՊԵՏՐՈՍՅԱՆ
Ստեփանակերտի թիվ 7 հիմնական դպրոցի մաթեմատիկայի ուսուցչուհի

ԱՐՑԱՆԻ ԼԵԳԵՆԴԱՐ ՔԱՋԱՐԻ ԶԱՎԱԿ

Այս տարի լրանում է 20-րդ դարի 20-ական թվականների արցախահայության հակախորհրդային, հակաադրբեջանական պայքարի ղեկավար Թևան Ստեփանյանի ծննդյան 120-ամյակը: Իմ տարեկիցները ծնվել են Թևանի ազատագրական պայքարի ժամանակաշրջանից տասը տարի հետո: Բայց դեռևս մանկության տարիներին ինչքան են լսել, որ մեզ՝



տունեցիներիս, «թևանիստներ» էին անվանում: Մենք փոքր էինք, չէինք հասկանում այդ բառի էությունը: Բայց տարիքավորները, հատկապես նրանք, ովքեր մասնակցել են Թևանի ղեկավարած ժողովրդական ապստամբությանը, շատ դժվար էին տանում «Թևանիստ» պիտակը:

Երիտասարդներն ինձ հաճախ են հարցնում, թե ով էր Թևանը, ինչու տունեցիներին անվանել են «թևանիստ»: Թևանը բարի՞ գործ է կատարել, թե՞ թշնամական: Քանի որ լեգենդար հայրենասերի ծննդյան տարեդարձն է, որոշեցի նրա մասին մանրամասներ ներկայացնել:

Մինչև Ղարաբաղյան շարժումը մենք քիչ տեղեկություններ գիտեինք Թևանի մասին: 1989թ. սկսած, թերթերում ու ամսագրերում տպագրվեցին հոդվածներ, որոնց հեղինակներն էին Արփիկ Խասապետյանը, Թեմուր Ամիրջանյանը, Գրիշա Խաչատրյանը, Հայկազն Ղահրիբյանը, Հրանտ Աբրահամյանը («Թևան» գիրք) և ուրիշներ:

Այս իրենց հիշողությունները ներկայացրին 100-ամյա Հայրենյան Ավետիսյանը, 90-ամյա Նիկոլայ Օհանջանյանը, Արտեմ Արզումանյանը, Արամ Նարինյանը: Շատ հիշողություններ էին թողել Թևանի կինը՝ Մարիամը, դուստրը՝ Վարսիկը, գյուղի հեղկոմի առաջին նախագահ Իսահակ Ղազարյանը:

Թևան Աղաջանի Ստեփանյանը ծնվել է 1892թ., Տուսի գյուղում, գյուղացու ընտանիքում: Մանկությունն ու պատանեկությունն անց է կացրել ծննդավայրում: Ավարտել է Տուրի եկեղեցուն կից ժխական դպրոցը: Սովորել է Թիֆլիսի ռազմական ուսումնարանում, ավարտել, մեկնել ցարական բանակ, ծառայել որպես վաշտի հրամանատար: Մասնակցելով Առաջին աշխարհամարտի ռազմական գործողություններին՝ ցուցաբերել է խիզախություն և սպայական հմտություն, արժանացել արծաթե մեդալի, պարգևատրվել 10 հարվածանի մաուզերով:

Թևան Ստեփանյանի ռազմական ծառայությունը համընկնում է ցարական Ռուսաստանում տեղի ունեցած երկու կարևոր իրադարձությունների՝ Փետրվարյան հեղափոխությանը, որի արդյունքում գահընկեց է արվել Ռոմանովների հարստության վերջին կայսր Նիկոլայ Երկրորդը և Հոկտեմբերյան սոցիալիստական մեծ հեղափոխությանը: Ցարական բանակը ցրվում էր, բարոյալքվում: Թևանը իր ծանոթ մալականների օգնությամբ փրկվեց գնդակահարությունից և 500 դարբազի ու շամշադինցի զինվորների հետ թողնելով զինվորական ծառայությունը, 1918թ. հասավ Ղարաբաղ, ցրեց իր խումբը և վերադարձավ ծննդավայր Տուսի գյուղը: Այդ օրերին Արցախի գյուղերն անընդհատ ենթարկվում էին թուրք-թաթարական հրոսակների հարձակումներին:

Ինչպես պատմել են 100-ամյա Հայրենյան Ավետիսյանը և 92-ամյա Նիկոլայ Օհանջանյանը, տունեցիներն իրենց անասունները պահում էին գյուղից հեռու արտավայրերում, որտեղ յուրաքանչյուր տոհմ ուներ իր գոմը: Թուրքերը գիշերները հարձակվում էին գոմերի վրա, սպանում անասնապահներին, քշում անասունները:

Անհրաժեշտ էր ստեղծել զինված ջոկատ, վերջ տալ հարձակումներին: Գյուղում ցարական բանակի զորացրված մեծ թվով շարքայիներն, ենթասպաներ և սպաներ կային:

Նախկին տանուտեր Ջհանգիր Մարդանյանի (Նա գավառում ճանաչված, ճշմարտախոս տանուտեր էր) խորհրդով գյուղի ավագանին հավաքեց զորացրված զինվորականներին և առաջարկեց ստեղծել զինված ջոկատ, ընտրել հրամանատար: Երեք սպա թեկնածուներից ջոկատի հրամանատար ընտրվեց Թևան Ստեփանյանը: Ստեղծվեց նաև անբաժան ֆոնդ՝ ջոկատին սննդամթերքով ապահովելու համար:

Առաջին իսկ մարտում Թևանի զինված ջոկատը ոչնչացրեց Մուսուլմանլարի զինված ահաբեկչական հենակետը, որի, ղեկավարն էր Ղաջաղ Սուլեյմանովը, տալով միայն մեկ զոհ: Շեփորի ու թմբուկի ձայնից Ալլըջան գյուղի բնակիչները հեռացան բնակավայրից: Վերջ տրվեց թուրքական հարձակումներին: Թևանի՝ որպես հմուտ հրամանատարի, համբավը տարածվեց ամբողջ Դիզակում: Թևանը մասնակցեց Շուշիի ազգային խորհրդի (Ժողով) նախաձեռնությամբ Շեփոր գյուղում հրավիրված խորհրդակցությանը, որը որոշել էր սկսել ռազմական գործողությունները թուրք-ադրբեջանական ավագակախմբերի դեմ, որոնց ղեկավարն էր Լեռնային Ղարաբաղի նախագահ Կարապետ Սուլթանովը:

Թևանի ազիտացիայի կենտրոնը Տող գյուղն էր, որտեղ նա հանդիպում է իր նախկին կրոնի ուսուցիչ հոգևորական Ավետիսի հետ, նրա ձեռքից ստացավ դրոշմը և երգվեց պաշտպանել ազգի պատիվը Գնալով համալրվում էր Թևանի ջոկատների թիվը: Շուտով հավաքվեց կամավորների գունդ, որը միանալով Դիզակի և Վարանդայի աշխարհազորայիններին, մասնակցեց 1918թ. հոկտեմբերի 18-ի գիշերը Վարանդայի Մամնա գյուղում տեղի ունեցած Անատոլիայի թուրքական զորի ջախջախմանը:

Թևանը Դրոյի հրամանով նշանակվեց գեներալ Լժեհի տեղակալ Լեռնային Ղարաբաղում: Սպարապետը ապստամբների առաջ խնդիր դրեց Ղարաբաղը միավորել Չանգեզուրի և Հայաստանի հետ: Ապստամբ արցախցիների թիվը հասավ 1800-ի: Արցախում բռնկված ժողովրդական ապստամբությունը ղեկավարում էր Թևան Ստեփանյանը: Ապստամբներն ազատագրեցին ամբողջ Դիզակը, Վարանդան, Խաչենի զգալի մասը, ցրեցին հեղկոմները, վերականգնեցին ցարական ինքնակառավարման ձևը: Կարմիր բանակի 28-րդ դիվիզիայի 250, 252-րդ գնդերը, նախնախնի Չանգեզուրից Ղարաբաղ, միանում են Դիզակում, Վարանդայում և Խաչենում կազմակերպված կոմունիստական ջոկատներին, ընդհանուր ճակատ ստեղծում Թևանի ապստամբական ուժերի դեմ: Կարմիր բանակի 250, 251-րդ գնդերը հասնում են Դիզակի Մեծ Թաղեր գյուղը և հրետակոծում Թևանի ծննդավայր Տուսի գյուղը: Արձակված հրետանու արկերից 2-ը կաշու են գյուղի կալվածատեր Աբրահամ Աբաբեկյանի մենաստանի պատշգամբին ու մեծ վնաս պատճառում: Իրիկմաղեն էր, Տուսի գյուղից 7 ծերունիներ հանցելով են Մեծ Թաղեր ու 250-րդ գնդի հրամանատար, զնդապետ Վոյեխովսկյուն խնդրում չկրակել գյուղի վրա, գյուղում 1000 բնակիչ կա, չոչնչացնել տները: Գնդապետը բանտարկեց 7 ծերունիներին էլ:

Հաջորդ առավոտը Տուսիի հեղկոմի առաջին նախագահ Իսահակ Ղազարյանը, որի պաշտոնը վերացվել էր Թևանի ապստամբականների հարձակման հետևանքով, հասնում է Մեծ Թաղեր, սկսում բանակցություններ գնդապետի հետ, հայտնում, որ ինքը, հալածվելով Բաքվում, որտեղ աշխատում էր որպես հորատման բանվոր նավթահանքերում, մազա-

պուր ընտանիքը հասցրել է Տուսի, ընտրվել հեղկոմի նախագահ, հեղկոմը ցրվել է:

Վոյեխովսկին ռուսախոս Ղազարյանին պատասխանում է, որ Թևանի ծննդավայրը պետք է հարկավոր, թալանվի, զորքին սննդամթերք է հարկավոր:

Բանակցություններն ավարտվում են այսպես. ծերունիներին ազատում են, բայց որպեսզի գյուղը չոչնչացվի, Տուսին ռուսական զորքին պետք է ապահովի ոչ մեծ չափի սննդամթերքով: Հեղկոմի նախագահը վերադառնում է գյուղ, հավաքում գյուղի ավագանուն, նախապետներին ու ներկայացնում զնդապետի պահանջը: Երկար քննարկելուց հետո հավաքի մասնակիցները որոշում են բավարարել զնդապետի պահանջը՝ գյուղը փրկել ավերու միջ ու թալանից: Ռուսական զորքը պիտի անցներ Խճաբերդ գյուղը, որի միակ ճանապարհն անցնում էր Տուսի գյուղի միջով: Գյուղում թևանակազմներից ոչ ոք չկար: Ռուսական 250-րդ գնդի երկու վաշտ մտնում են գյուղ, առանց անկարգության գյուղի հարավային մասի Երկաթեն արտ կոչվող տեղամասում ստանում սննդամթերքն ու շարժվում երկու ուղղությամբ՝ դեպի Խճաբերդ, մյուսը՝ դեպի Կարմիր քար, Զաստավ:

Զաստավ կոչվող ուղեկալը Տուսու տարածքի արևմտյան մասի վերջին կետն է, այդտեղ ուղեկալ է նախատեսել Ղարաբաղում տեղակայված զորքի հրամանատարությունը Ղարաբաղը Ռուսաստանին միանալու ժամանակահատվածից: Ուղեկալում հեթոթապահողները և սահմանապահում էին, և ստուգում, հաշվառում այդ տեղի ճանապարհով դեպի Շուշի տեղափոխվող անտառային շինանյութերի բեռները:

Դեպի Կարմիր քար, Զաստավ շարժվող ռուսական վաշտը հանդիպեց թևանակազմների մի խմբի ու բախումից զգալի մարդկային կորուստներ կրեց: Կարմիրների մյուս վաշտը կորուստներով հասավ Խճաբերդի տարածքը:

Թևանի ջոկատները, չնայած մարտական հաջողություններով հասել էին Ասկերան, որը ԼՂ-ի և Ադրբեջանի սահմանամերձ բնակավայրն էր, բայց այդտեղ հանդիպելով կարմիրների ու կոմունիստների ջոկատների հզոր ուժերին, սկսեցին նահանջել ու հասան իրենց համար հուսալի Խճաբերդ գյուղը՝ Չանգեզուր անցնելու նպատակով: Սակայն անցման գիծը պաշարված էր կարմիրների ու մահմեդականների կողմից: Թևանն իր 700 հոգուց բաղկացած ջոկատով Չանգեզուրի հրամանատար Ամիրջանյանի օժանդակությամբ 1921թ. ապրիլի 18-ին, ճեղքելով պաշարման գիծը՝ Չաբուր գետը, անցավ Չանգեզուր, միացավ Լժեհի զինված ուժերին: Նույն թվականի մայիսին Թևանը ընտանիքով տեղափոխվեց Իրան: Հաջորդ տարում նա ընտանիքով վերադարձավ Տուսի գյուղ: Նրան հետապնդում էին: Տուսի էր ներկայացել ԼՂ մարզի միլիտետ Թախան Թախանյանը, որը Թևանի մարտական ընկերն էր Առաջին աշխարհամարտի ժամանակ: Նա Թևանին հրավիրեց համագյուղացի Նիկոլայ Մեքլունյանի բնակարանը՝ բանակցելու: Մարզի միլիտետն առաջարկեց Թևանին՝ հաշտվել Խորհրդային իշխանության հետ և մնալ գյուղում: Չնայած Թևանն առերես համաձայնեց, սակայն զգալով, որ իրեն հստակ են, որոշեց մեկնել Ռուսաստան՝ մշտական բնակության: Բայց բանի որ նրան հետապնդում էին, որոշեց Դիզակի կողմերով անցնել Իրանի սահմանը:

Թևանի մարտական գործողությունները եղել են ժամանակակիցների ուշադրության կենտրոնում: 1923թ. Բոստոնի «Հայրենիք» համագիրն իր հունիսի համարի 114-115 էջերում Թևանի ջոկատի կռիվների մասին տպագրեց Արսեն Միքայելյանի «Ղարաբաղի վերջին դեպքերը» հոդվածը:

1931թ. Թևանը Իրանում 7 հոգուց բաղկացած պարսիկների խումբ կազմեց, անցավ խորհրդային սահմանը ու հասավ Տուսու տարածքի ճվճրին արտի մոտ գտնվող անտառը: Այդտեղ նա հանդիպեց համագյուղացի Հիրիմին ու խնդրեց նրան Ստեփանակետ աքսորված կնոջն ու դստերը բերել Սղնախ գյուղի թփուտները: Հիրիմը համաձայնեց, բայց իր խոստումը չկատարեց և նրան մատնեց: Երեք

օր հետո Թևանը նկատեց, որ իրեն հետապնդում են զինված մարդիկ, որոնք կրակ բացեցին իր խմբի վրա: Խմբի անդամներից երեքը ետ մնացին, մոլորվեցին, մյուսների հետ Թևանը անցավ սահմանը, երեք ծիով հասան Իրան: Թևանը որպես իրանահպատակ, ապրում էր Թավրիզում, Թեհրանում, Մազանդարանի Սարի, Անուլ քաղաքներում, աշխատում էր որպես ճանապարհաշինարար:

1941թ. աշնանը Ադրբեջանի ԿԿ Կենտկոմի առաջին քարտուղար Միրջափար Բագիրովը շտապ իր մոտ Բաքու կանչեց Իրանում գտնվող խորհրդային հեղափոխական ջոկատներից մեկի հրամանատար, ՊԱԿ-ի գնդապետ Էդուարդ Մարտիրոսովին ու հանձնարարեց մեկնել Իրան, ձերբակալել Թևան Ստեփանյանին ու տեղափոխել Բաքու, տալով 15 օրվա ժամանակ: Այդ գործում Մարտիրոսովին պետք է օգնեին Մոսկվայից հրավիրված փորձառու չեկիստներ, որոնցից մեկը ծննդով Ղարաբաղցի էր ու ճանաչում էր Թևանին: Չեկիստներին հաջողվեց իմանալ, որ Թևանի աշխատավայրը Հիրազ քաղաքն է, որտեղ նրա բրիգադն աշխատում է ճանապարհաշինարարությամբ: Բայց ինչպե՞ս բռնել Թևանին, ձերբակալել, չէ՞ որ նա ֆիզիկապես ուժեղ էր ու անվրեպ կրակող: Չեկիստների կողմից նախօրոք մշակված 7 տարբերակներից ամենահաջողն ընտրվեց: Կեսօրին չեկիստները ամերիկյան մեքենայով հասան այն վայրը, որտեղ աշխատում էին Թևանի բանվորները: Թևանը գրուցում էր բանվորների հետ: Չեկիստ վարորդը անցատում է մեքենայի շարժիչը, բացում կափարիչը, հայտնում, որ մեքենայի շարժիչը փչացել է: Ղարաբաղի բարբառով ասում՝ մնալու ենք չուլերումը: Թևանը այդ բառերը լսելուն պես իր հայրենակիցներին օգնելու համար մոտենում է նրանց մեքենային և գլուխը թեքում դեպի շարժիչը: Այդ պահին չեկիստները թափվում են Թևանի գլխին, բռնելով ձեռքերից, ոտքերից, մազերից, կոկորդից՝ շղթայում ու հասցնում երկաթուղի, բեռնատար վագոնով հասցնում Բաքու: Ճանապարհին Թևանը վագոնի կիսաջարդ տախտակը ատամներով ջարդում է ու ընկնում ցած: Նրան գտան երկաթգծից 25մ հեռու Եղեգնուտի մեջ արյունոտ վիճակում տեղափոխեցին ուրիշ վագոն ու տեղ հասցրին:

Մ. Բագիրովը գնդապետ Մարտիրոսովին շնորհավորեց, նվիրելով ոսկե ժամացույց: 1941թ. նոյեմբերի 17-ին սկսվեց Թևանի հարցաքննությունը: Չնայած ծեծին ու կտստանքին, դատավարության ժամանակ նա իրեն պահում էր թևանավարի: Դատավարությունը տևեց մի քանի օր: Դիմելով Մարտիրոսովին, Թևանը պիզակի գրպանից հանեց մի փոքրիկ քսակ՝ մեջը մի բուռ հող և ասաց, որ այդ հողը վերցրել է հայրենի Ղարաբաղից, պահել գրպանում և այն իրեն ուժ ու եռանդ է հաղորդել: Ասաց, որ ուր էլ մեռնեք, որոշել էր պատգամ թողնել՝ այդ հողը շաղ տալ իր գերեզմանին: Նա խնդրեց կատարել, իր այդ պատգամը: Ռուս դատավորն այդ լսելով՝ նրան իսկական հեղուկ կոչեց, ընթացքում հայրենասեր և ասաց. «Ես համոզված եմ, որ կգա ժամանակ, երբ այս հերոսի արձանը կկանգնեցվի հայրենի Ղարաբաղում»: Ռուս դատավորի մարգարեական խոսքն իրականացավ 70 տարի հետո՝ 2011թ. հուլիսի 31-ին: Լրատվական միջոցները հաղորդել են, որ 1941թ. վերջին տեղի ունեցած դատավարության որոշմամբ Թևանը որպես խորհրդային իշխանության թշնամի, գնդակահարվել է: Արդյո՞ք գնդակահարվել է: 1967թ. ես և կինս հյուր էինք Թևանի կնոջ՝ Մարիամի և նրա դստեր՝ Վարսիկի մոտ, Երևանի Կոնդի թաղամասի հ. 10 տանը: Մայր ու աղջիկ ժամերով պատմում էին ազգային հերոսի ու նրա պատճառով իրենց անցած դաժան կյանքի մասին, որ Թևանից ոչինչ չի պահպանվել իրենց մոտ, քանի որ աստանդական կյանքի ընթացքում կորցրել են ամեն տեսակի իրեր: Միակ տուրք մատուցել աղջկա՝ Վարսիկի կողմից պահպանված՝ հոր և Անդրանիկի նկարն էր, որ պահում էր ներքնակի աստառի մեջ: Իսկ կինն իր ծոցում էր պահում ամուսնու մազերի մի փունջ՝ կապած խուճապած մի կտորի մեջ: «Ես իմ այս սրբությունը ծոցումս, սրտիս վրա պահում եմ ահա 50 տարի: Միշտ

ԱՐՑԱՆԻ ԼԵԳԵՆԴԱՐ ՔԱԶԱՐԻ ԶԱՎԱԿԸ

ամուսնում են այս մազերի հոտը, որն ինձ պարտավորեցնում է հավատարիմ մնալ ազգային հերոս ամուսնու անվան, նրա պես սիրելի հայրենիքը:

Մայր ու աղջիկ պատմեցին, որ երեք տարի է, ինչ թևանից տեղեկություն չկա: Մինչև 1965 թվականը նա տեղեկություն էր հաղորդում Թեհրանի «Ալիք» թերթի խմբագրությունից:

Ուրեմն, Թևանին չեն գնդակահարել:

Ստահոգության տեղիք է տալիս նաև այն հարցը, թե որտեղ է երբ է Թևանը լուսանկարվել Անդրանիկի հետ, երկուսն էլ կանգնած գեներով, թուրը կապած:

Թևանին չգնդակահարելու մասին է պատմել Մարիամի մորաքրոջ՝ Մանիշակի որդի Սարո Գևորգյանը: «1985թ. Բաքվի Կորովսկի ավանում էի ապրում: Գործով գնացի Բաքու քաղաքի առաջին միկրոշրջանը: Իմ տարիքի կոկիկ հազմված մի տղամարդ մտտեցավ ու նկատելով, որ հայ են, գրուցեց հետո: Մտերմացանք հաջորդ հանդիպումների ժամանակ: Իմանալով, որ տունեցի են, Թևանի գյուղից, ստիպեց, որ երգվեմ, գաղտնիք ունի ասելու: Խորհրդային ժամանակ էր...»

Այդ մարդը պատմեց, որ ինքը եղել է Մ. Բազիրովի վարսավորը: Բաքվում Թևանի դատավարության օրերին Բազիրովը իրեն հատուկ կանչել է իր մոտ ու պատվիրել Թևանին թրաշելու ժամանակ անտեղի կտրել գլուխը. սպասիր ահագնահին: Ես մտքով տանջվում էի՝ ո՞նց սպանեմ Թևանին, կոչվեմ մարդասպան: Մի օր Բազիրովի տան պահակ միլիցիոները, որը շատ մոտիկ էր հետո, եկավ ինձանից մազարիչ պահանջեց, որ Բազիրովն ասել է. «Այդպիսի հերոսին չեն սպանի» ու պարտավորեցրել է երկու զինվորի Թևանին տանել Իրանի սահմանով անցկացնել: Վարսավորը շատ խնդրեց այդ գաղտնիքը չտարածել...»:

Հայրենական մեծ պատերազմին մասնակցած 400 տունեցիներից մեկ տասնյակ երիտասարդներ Թևանի տոհմից են եղել, որոնք պատվով են կատարել իրենց սրբազան պարտքը հայրենիքի հանդեպ: Նրանցից Արտեմ Ստեփանյանը (շարքային) գերի է վերցրել հիտլերականներին մի ջուկ: Նա հերոսի մահով զոհվեց Ուկրաինայի հողում՝ պատվով պահպանելով իր տոհմակից Թևան Ստեփանյանի մարտական ավանդույթը:

Արցախյան զոհամարտին մասնակցած 175 տունեցիները մարտական գործողությունների ժամանակ իրենց դրսևորել են թևանավարի, որոնցից 25 քաջորդիներ իրենց կյանքը դրել են մայր հողի անկախության զոհատեղանին:

Պատմում են Թևանի և թևանիստների մասին

Թևանի՝ որպես խորհրդային կարգերի թշնամու, հարազատներին ու մոտիկ բարեկամներին Արդեշահի կառավարության որոշմամբ հավածել են, քարտրել, գնդակահարել Կարմիր եկեղեցու մոտ: Աքսորվել են Թևանի կինը՝ Մարիամը, դուստրը՝ Վարսիկը, սկզբում Ստեփանակերտ, հետո՝ Նուխի, իսկ Հայրենական պատերազմի սկզբին՝ Ալբայի երկրամաս:

Պավել Օհանյանը Թևանի

պատճառով իր և իր որդի ռազմագերի Արտաշի ընտանիքներով աքսորվեցին Ալբայի երկրամաս, իրարից շատ հեռու տարածքներ:

Հետագայում Արտաշն ազատվեց, վերադարձավ գյուղ, այստեղ էլ ՊԱԿ-ը սկսեց հավածել: Նա չհամբերեց ու արտահայտվեց. «Գնացել են Գերմանիա (գերի էր) ասել են “Կոմունիստ”, եկել են մեր գյուղը, ասում են “Կոմունիստ, Կոմունիստ” բա ո՞ր գնամ, գյուղում խուզարկում էին Թևանի շարժման մասնակիցների տները՝ զենք գտնելու համար:

Ուզում էին Թևանին բռնել

Խորհրդային կարգերը մտնելուն պես, երբ Թևանը դեռ գործում էր, իրեն թաքցված էր պահում: Միլիցիայի օրգանները տունեցի երիտասարդներին ուղարկում էին անտառները՝ գտնել ու բերել Թևանին: Երեք տղամարդ զինված անցնում էին Տուժու տարածքի Կաթնեղ աղբյուրի մոտով: Նրանցից յուրաքանչյուրը խոստանում էր Թևանին բռնել կենդանի վիճակում, հանձնել օրգաններին, պարզև ստանալ: Հանկարծ տերևախիտ բոխի ծառից Թևանը ցատկում է ցած ու կանգնում վիճողների առաջ, ասում. «Թևանը ինքը եկավ ձեզ մոտ, բռնեցեք տարեք: Թևանը ո՞ւմ է վնաս տվել, որ բռնում եք, պարզևստորվեք»: Դողում էին երեք զինվածները:

- Տվեք հրացանները,- պահանջեց Թևանը ու վերցրեց հրացանների փակադակները: Հրացանները վերցրեք, փակադակները դնելու են խճուղի խուփի մենավոր կաղնու տակ: Խելոք կացեք, դուք Թևան բռնող չեք, գնացեք տները:

Հերթը հասավ կոմերիտականներին: 1931 թվականն էր: Կոմերիտականներն իմացան, որ Թևանը գտնվում է ճվճրին արտի մոտ, եկել է ընտանիքը տանի Պարսկաստան: Գնացին, որ բռնեն: Կոմերիտականները հասան ճվճրին արտի գոմը: Գիշեր էր, Թևանի հետ եկած պարսիկները բռնեցին երկու կոմերիտականի ու շորերը հանեցին: Թևանը եկավ ու ճանաչեց տկլոր երիտասարդներին: Նա շորերը տվեց իրենց, թե գնացեք, դուք Թևան բռնող չեք:

Մինչև Պարսկաստան, մշտական բնակության վայր մեկնելը Թևանին հետապնդում էին, մտածում, թե ինչպես բռնեն: Վերջապես օրգանի աշխատողներին հաջողվում է բռնել նրան ու բանտարկել Մեծ Թաղերի մի տան: Պահակություն էին նշանակել բանտարկյալի վրա: Գիշերը իբր գնում էր զուգարան, մտավ ներսը, տախտակը պրկեց, ցատկեց 2-3մ բարձրության պատից, ոտքը կտրած գյուղամիջով անցնելիս պատահեց մի բարի մարդու, որը նրան հասցրեց Տուժու տարածքի նրա աներոջ այգին: Ոտքը կապեցին, ապաքինվեց, նորից անցավ անտառը, շուտով տեղափոխվեց Պարսկաստան: Թևանի մասին գրված հոդվածները, Հր. Աբրահամյանի «Թևան» գիրքը, իմ այս հոդվածը չեն սպառի նրա մեծությունը, նրա կատարած քաջագործությունները դարբանողների համար:

Թևանի կիսանդրին

Օրակարգի հարց էր դարձել Թևան Ստեփանյանի կիսանդրու կառուցումը: Ո՞վ կկառուցի... Եվ ա-

հա ուրախալի անակնկալ: 2011թ. հուլիսի 22-ին ՀՀ-ից Տուժու ժամանեց «Հայ ասպետ» դպրոցական խումբը «Հայ ասպետ» հիմնադրամի տնօրեն Կարին Տոնոյանի գլխավորությամբ: Խումբը հանգրվանեց Տուժու միջնակարգ դպրոցի մոտ, կանաչ տարածության վրա: Այդտեղ երեք ենթախմբերը վրան խփեցին ու մնացին ութ օր: Դպրոցի տնօրեն Լ. Ավագյանը, մանկավարժական կոլեկտիվը, աշակերտությունը, գյուղի հասարակությունը ջերմորեն ընդունեցին «Հայ ասպետին»: Ինչքան ուրախալի էր, երբ իմացանք, որ մեծարգո տնօրեն Տոնոյանն իր հետ բերել է Թևան Ստեփանյանի կիսանդրին: Նա շրջեց գյուղամտուցի բոլոր տեղերը և ինքն ընտրեց կիսանդրու համար ամենահարմար տեղը: Դա գյուղի արևելյան մուտքի Միսեռ աղբյուրի պատի վերևի հարթ տեղն է: Տոնոյանը կառուցել տվեց կիսանդրու պատվանդանը և Տուժու դպրոցից ՀՀ մեկնելու նախորդ օրը, 2011թ. հուլիսի 31-ին հանդիսավոր կերպով պատվանդանին դրեց Թևանի կիսանդրին ու բուռն ծափահարությունների տակ բացեց կիսանդրուն նվիրված հանդեսը: Ներկա էին «Հայ ասպետները», Տուժու դպրոցականները, գյուղի բնակիչները, Հայրուքից, Ստեփանակերտից, շրջակա գյուղերից ներկայացածներ: Հանդեսը վարում էր ինքը՝ Տոնոյանը: Նա նաև երգեց: Ելույթ ունեցան «Հայ ասպետները» իրենց երգերով, արտասանություններով: Ելույթի համար խոսքը տրվեց ԼՀՀ ՊԲ գնդապետ Արթուրյանին, Հայրուքի շրջվարչակազմի ղեկավարի տեղակալ Վ. Գասպարյանին, Տուժու դպրոցի տնօրեն Լ. Ավագյանին, Լ. Հայրուքյանին, համագյուղացիներ Հաշիմ Բաղասյանին, Խ. Ղազարյանին, Խ. Բաղասարյանին, Տուժու գյուղապետ Է. Սոսյանին: Բոլորն էլ երախտագիտություն հայտնեցին Վ. Տոնոյանին 20-րդ դարի 20-ական թվականների Արցախի լեգենդար քաջարի զավակ Թևան Ստեփանյանի կիսանդրին կառուցելու ու տեղադրելու համար՝ որպես բարերար մեծ նվեր հանձնելով տունեցիներին ու Արցախին:


Թևան Ստեփանյանի կյանքը լեգենդ է: Նա վերջ տվեց աղբյուրից ահաբեկիչների, ավազակախմբերի հաճախակի հարձակումների, որոնց ընթացքում սպանվում էին հայեր: Թևանը պայքարեց ԼՀՀ-ում Հայաստանին միացնելու համար: Սակայն խորհրդային բանակի, կոմունիստական ջոկատների, աղբյուրանական զինված խմբերի դեմ անհավասար մարտերում հաղթել չէր կարող: Պայքարելով Արցախի համար, նա կորցրեց ընտանիքը, որն անչափ հավածվեց: Անչափ հավածվեց, հետապնդվեց, թողեց իր սիրելի Ղարաբաղը, հեռացավ օտար երկիր, օտար ափեր: Թևանը բարի անուն թողեց Արցախի պատմության, ժողովրդի հիշողության մեջ՝ որպես լեգենդար հայրենասեր, ազգային հերոս:

Խորեն ՂԱԶԱՐՅԱՆ

20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժ, ԼՀՀ կառավարության Եղիշեի անվան ամենամյա 2005թ. դափնեկիր, ԼՀՀ վաստակավոր մանկավարժ Գ. Տոմի

ՀՈՐԻՑՍ ՍՈՎՈՐԵԼ ԵՄ ԲԱՐՈՒ ԱՐԱՐՈՒՄՆ ՈՒ ԶՈՐԱՎԻԳ ԼԻՆԵԼԸ...

Ալբերտ Խաչատրյանի ծննդյան 75-ամյակը



Արցախի հասարակապետական-քաղաքական կյանքում Շուշիի մանկավարժական ուսումնարանը հսկայական դեր ունեցավ ու կուրսն է

րեն, պիտի աշխատի: Ու կարծես ինձ է թողնում դատողությունը՝ ի վիճակի՝ է ինքը՝ նրբաճաշակ շարժումով ու հագուկապով ավելի շատ անգլիացի ջենթլմեն հիշեցնող վաստակաշատ մտավորականը:

Իսկ մարդն այնքան է (տարիքի առումով, իհարկե), որքան որ գգում է իրեն, ասում է: Վոլեյբոլ արդեն չեն խաղում, բայց աշխատել ի վիճակի են: Դեռ տարիներ առաջ մի հարցազրույցում են ասել՝ ողջ կյանքում, գործի բերումով չփվել են մատաղ սերնդի հետ, տվել նրան ինչ կարող էի, ապրել նրանց հոգեբանական վարակվել նրանց ավունով: Միզուցե հենց այդ պատճառով էլ «ամաչել են» ծերունակուց: Ինձնից միշտ անբաժան են եղել լավատեսությունը, մարդկանց մեջ լավ ու դրական տեսնելու սկզբունք-մոտեցումը: Հորիցս տվորել են բարու արարումն ու զորավիզ լինելը: Ու դա կարծես ետ է շրջվել դեպի ինձ՝ բերելով բարու պտուղներն ու շնորհիվով երանությունն և արարածներ բերկրանք:

- Շատերին է հայտնի, որ Դուք ունեցեք հրաշալի ծաղիկներով այգի, ինչ է, դա Ձեր հորքի՞ն է:

- Այդ գեղեցիկները մի տեսակ զուգակցում է եղել մտավորական գործունեության: Ծաղիկ աճեցնելն ու խնամելն նպաստում են մարդուն ավելի կատարյալ դարձնելուն, ավելի են մերժեցնում սիրո երանելի վիճակին: Եվ ծաղիկ սիրող երեք չի կարող վատ մարդ լինել: Պատկերացրեք, խնամելիս կարծես ներքին ծայրն զրուցում են նրանց հետ, իսկ նրանք էլ մարդու պես հասկանում են քեզ և երախտագետ լինում այդպես:

- Ուրիշ ի՞նչ նախասիրություններ ունեք:

- Բնականաբար, շարունակում են հետևել կրթադաստիարակական աշխատանքների դրվածքին ու ընթացքին, շարունակում հողվածներ գրել և տպագրել մասնուսումնական կրթության ու կրթական տարեգրությանը վերաբերող թեմաներով:

- Ինչպիսի՞ն է Ձեզ պատկերանուն վարկ օրը:

- Միանշանակ՝ անենապայծառ գույներով:

- Ձեր սերունդը, կարող ենք արծանագրել, պատվով կատարեց իր գործը: Նոր սերունդը կարողացավ արժանիորեն բռնել ժամանակի քննությունը: Բավականացնո՞ւմ է մեր ներկյան վաստակաշատ մտավորականին:

- Նոր սերունդը թերևս ամենաբարձր դրվատանքին է արժանի: Այն, ինչ արել է նա, մույնիսկ ամենավատեսական պատկերացումներում ու երազներում չէր կարող պատկերանալ մեզ: Ու եթե այսօր կան բազում և բազմաթիվ դժվարություններ, ապա դրանք միանգամայն օբյեկտիվ են (պատերազմի հարուցած դժվարությունները, նախկին տնտեսական կայտերի ու երաշխիքների բացակայությունը, համաշխարհային տնտեսական ճգնաժամը և այլն) ու ժամանակավոր ու պայծառ գալիքի նախերգանք են ընդամենը: Ինչպես ասում են՝ տատասկների միջով դեպի բարձունքներ:

Հիշե՛ք վիճակը պատերազմից հետո՝ համեմատելով ներկայիս հետ: Մի 10-15 տարի հետո էլ, տա Աստված, և դա այդպես էլ լինելու է, սովորական քաղաքացին տրտմալու է արդեն այնպիսի կարիքների համար, որոնք առջևում և վերաբերում են արդեն միանգամայն այլ ոլորտների ու ամենակին էլ կենցաղային չեն:

Կարեն ՄԻՐՋՈՅԱՆ

ԳՈՐԾ

ՈՐՏԵՂ ԱՃԽԱՏԱՆՔ, ԱՅՆՏԵՂ՝ ՀԱՋՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Ամեն անգամ, երբ թերթում ընթերցում եմ ԼՂՀ կրթության և գիտության նախարարի հրամանը «Տարվա լավագույն դպրոց», «Տարվա լավագույն ուսուցիչ, լավագույն մանկավարժական փորձ», «Տարվա լավագույն գինղեկ» և այլ անվանակարգերում հայտարարված մրցույթներում հաղթող ճանաչված դպրոցների, ուսուցիչների անունները, ակամայից հետաքրքրություն է առաջանում լինել այդ դպրոցներում, հանդիպել մանկավարժական կոլեկտիվների, առանձին ուսուցիչների հետ, ծանոթանալ նրանց աշխատանքային փորձին և այն կարողություններին ու ստորաբաժիններին, որոնք նպաստում են հաջողություններ գրանցել կրթության և դաստիարակության դժվարին ու պատվաբեր գործում: Իհարկե, շատ ավելի լավ կլիներ, որ հաղթողների աշխատանքային փորձն ավելի մանրամասն ուսումնասիրվեր ու մասսայականացվեր: Այն կնպաստեր ուսուցիչների մասնագիտական կարողությունների զարգացմանը, ինչպես նաև ուսուցման ստորաբաժիններին յուրացմանն ու օգտագործմանը:

Վերջերս եղա Յերիեր գյուղում և առիթը բաց չթողեցի՝ այցելելու տեղի միջնակարգ դպրոց: Չէ՞ որ հենց Յերիերի միջնակարգ դպրոցի ուսուցիչ Յայր Բաղդասարյանն է հաղթող ճանաչվել «Տարվա լավագույն գինղեկ» մրցույթի «Ուսումնասիրական բազայի հարստացման և նորարարության համար» անվանակարգում:

Յերիերի միջնակարգ դպրոցը (տնօրեն՝ Սարգիս Գրիգորյան) շրջանի հարուստ ավանդույթներ ունեցող դպրոցներից է: Բավական է միայն այն փաստը, որ դպրոցի աշակերտներն ակտիվ մասնակցություն են ունենում շրջանային, համրակայան օլիմպիադաներին, մրցույթներին, մրցանակներ են փայլում իրենց գիտելիքներով: Դպրոցի սանդղակում շատերը հաջողությամբ բնություններ են հանձնում ինչպես մեր հանրապետության, այնպես էլ ուրիշ հանրապետությունների բուհերում:

Գյուղի արևմտյան լանջին իրար զուգահեռ վեր են խոյանում դպրոցի և մարզադահլիճի նորակառույց շենքերը: Յերիերի ողջ հասարակությունը երախտապարտ է փարիզի Յայր, Էլիզաբեթ և Ալիս Սիսեռյանների՝ դպրոցի և մարզադահլիճի շինարարությանն աջակցելու համար:

Բայց ինձ ամենից շատ հետաքրքրում էր գինղեկ Յայր Բաղդասարյանի աշխատանքային գործունեությունը, որ բարձր է գնահատել նախարարությունը: Յայրն ունի 15 տարվա աշխատանքային կենսագրություն և ավագ լեյտենանտի զինվորական կոչում, որն արդյունք է նրա բեղմնավոր ստեղծագործական աշխատանքի:

- Իմ նպատակն է,- գրույցի ժա-

մանակ ասաց Յայրը,- որ աշակերտները ստանան զինվորական այնպիսի գիտելիքներ, որ գորակոչվելու առաջին օրվանից լուրջ դժվարությունների չհանդիպեն ինչպես շարային, մարտավարական, կրակային վարժություններից, այնպես էլ համագործակցության ոլորտից՝ միջազգային մարզասիրական իրավունք, առաջին բուժօգնություն, ռազմական տեղագրություն, անվտանգ կենսագործունեության իմացություն: Այս բոլորի վկայությունը գործունեության ստացած շնորհակալագրերն էին, որով հրամանատարներն իրենց շնորհակալություն են հայտնում դպրոցին, գինղեկին՝ խելացի, բանիմաց ու կարգապահ սաների համար:

- Մեր հաջողությունների գրավականը նաև այն է, պատմում է Յայրը,- որ ծոտում ենք կապ ստեղծել տեսական գիտելիքների և դրանք գործնականում կիրառելու միջև: Դպրոցի բակում ունենք հատուկ շարահրապարակ, մարտավարության դաշտ՝ թաքստոցներով, խրամատներով, «Զինվորի տեղաշարժը մարտում» ուսուցանելու համար օգտագործում ենք տեղանքը՝ այգին ծառերով, թփուտներով հանդերձ:

«Նախնական զինվորական պատրաստության» դասերը նպատակային և արդյունավետ անցկացնելու համար տարածաշրջանի գյուղերի՝ Քերթ, Կ. շուկա, Ծովատեղ և այլն, գինղեկներն հաճախակի ենք

կազմակերպում փոխադարձ այցելություններ, ցուցադրական դասեր, հանդես գալիս զանազան մրցույթներում (իհարկե՝ աշակերտների միջև):

Զինվորի ծառայությանն առնչվող ամենատարբեր բնագավառների վերաբերյալ տասնյակ պաստառներ, վահանակներ, ինքնաշեն գործիքներ՝ փայտից պատրաստած ինքնաձիգներ, տարբեր տիպի ձեռքի նռնակներ, հատուկ հարմարանք՝ «վազող թիրախ» կրակային պատրաստության համար, այս ամենը վկայում է, որ Յայր Բաղդասարյանն իրոք սիրում է իր մասնագիտությունը, նվիրված է իր աշխատանքին:

Ուշագրավ էին մարտավարության դաշտի մի հատվածում ստեղծված օրապահի և ժամապահի համար պատրաստած հարմարությունները՝ հատուկ իրենց պարտականությունների կատարման վահանակներով:

Զինղեկ Յ. Բաղդասարյանի կատարած աշխատանքի յուրահատուկ ստուգարք է պատվոգրերի այն սովոր հավաքածուն, որ նա ստացել է կրթության և գիտության նախարարությունից, կրթության շրջանային բաժնից, պաշտպանության նախարարությունից: Այսպես, կրթության նախարարությունից՝ «Արծվիկ» ռազմահայրենասիրական հանրապետական մրցումներում 2-րդ տեղ գրավելու համար, պաշտպանության նախարարություն-

ից (2 հատ)՝ «Երիտասարդների նախագորակոչային պատրաստության գործում ունեցած հաջողությունների և հավաքներին ցուցաբերած բարձր արդյունքների համար», կրթության շրջանային բաժնից՝ «Ռազմահայրենասիրական» բնագավառում, «Ասպետ» ռազմամարզական ճամբարում աշակերտների ռազմահայրենասիրական դաստիարակության և մասնագիտական բարձր ունակությունների համար՝ Յայրստանի փրկարար ծառայությունից «Յանրակրթական դպրոցներում քաղաքաշտպանության խնդիրները պատշաճ լուծելու և այդ բնագավառում նշանակալից ներդրումների համար»:

Բազմաթիվ պատվոգրերի են արժանացել նաև աշակերտները՝ հանրապետական և շրջանային ռազմահայրենասիրական մրցույթներում հաղթող ճանաչվելու համար:

Յայր Բաղդասարյանը լավ է գիտակցում և համոզված է, որ պահանջկոտության բարձրացումը գինղեկների, քաղաքաշտպանության շտաբի պետերի աշխատանքի նկատմամբ չի բխում զուտ առարկայի իմացության չափորոշիչներից, այն ունի կարևոր ռազմավարական նշանակություն ու բխում է մեր պետության և ժողովրդի անվտանգության շահերից:

Լևոն ԱՌԱՔԵԼՅԱՆ
Գ. Եմիջնակ

ԴԱՍԸ ՎԱՐՈՒՄ Է ԳՐՈՂԸ

Ստեփանակերտի 11-րդ ավագ դպրոցում ձևավորվել է խրատական մի ավանդույթ: Հաջորդաբար կազմակերպվում է «Դասը վարում է գրողը» միջոցառումը, որը ջերմորեն են դիմավորում և՛ ուսուցիչները, և՛ սովորողները: Նման միջոցառում էր կազմակերպվել վերջերս: Այս անգամ կրթօջախ էր հրավիրվել բանաստեղծ, բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ Սոկրատ Խանյանը: Անվանի բանաստեղծ-գրականագետին ջերմորեն դիմավորեցին 12-րդ հունամիտար հոսքի առաջին դասարանի աշակերտները՝ հանրապետության վաստակավոր մանկավարժ, ուսուցչուհի Ի. Սարինյանի ղեկավարությամբ: Ի դեպ, դա առաջին հանդիպումը չէր գրողի հետ: Դեռևս անցյալ տարվա աշնանը տեղի էր ունեցել հանդիպում Արցախի մի խումբ գրողների հետ՝ ԼՂՀ գրողների միության նախագահ Վ. Հակոբյանի ղեկավարությամբ:

Դասարանը, որտեղ Ս. Խանյանը պետք է վարեր դասը, սովորական չէր: Նախօրոք ստեղծվել էր կլոր սեղան, որի շուրջ տեղավորվել էին սովորողները: Դասարանի դիմացի պատին տեղադրված էր էկրանը, որի վրա ցուցադրվում էին կադրեր՝ նվիրված բանաստեղծ-գրականագետի աշխատանքային օրվա ընթացքին, որ նախօրոք նկարահանել էին մի խումբ աշակերտներ:

Դասը բացեց գրականության ճանաչված ուսուցչուհին՝ Իրինա Սարինյանը: Նա նշեց, որ սիրով են ընդունում Ս. Խանյանին, որի ամբողջ գիտակցական կյանքը նվիրված է ոչ միայն գրականությանը, այլև մանկավարժությանը: Եվ պատահական չէ, որ ինչպես մեր հանրապետության կրթօջախներում, այնպես էլ 11-րդ դպրոցում հարջ լեզվի և գրականության համարյա բոլոր ուսուցիչ-ուսուցչուհիները նրա սաներն են: Համառոտ ներկայացնելով Ս. Խանյանի կենսագրությունը, ուսուցչուհին հայտարարեց, որ օրվա թեման նվիրված է Արցախի առաջիկա Եռատոնին:

Աշակերտներն արտասանեցին Ս. Խանյանի մի շարք բանաստեղծություններ՝ նվիրված Լեռնային Ղարաբաղին, մայր Հայաստանին, մեր բանակի անցած հերոսական ուղուն: Աշակերտներն արտասանում էին տեղից՝

հաջորդելով մեկը մյուսին, մեջբերելով ականավոր գրողների և քննադատների դրվատանքի խոսքերը Ս. Խանյանի ստեղծագործությունների վերաբերյալ: Առիթնող էին գնահատականները, որ հնչում էին սովորողների շուրթերին: «Սոկրատ Խանյանի երգերը հողաբույր են, քաղաքացիական պարտքի լիրիկական արտահայտություններ» (Գ. Գաբրիելյան):

«Սոկրատ Խանյանը Ղարաբաղի գրական օջախի նախնադարձ սյուններից մեկն է: Նա բանաստեղծ է, գրականագետ, մանկավարժ ու նաև լավ դարաբաղի: Խանյանի երգերը հյուսված են արցախյան բնության խայտաբղետ նախշերով, շնչավորված են լեռնաշխարհի ծաղիկների բույրով» (Յր. Բեգլարյան):

«Սոկրատ Խանյանը մեր գրական օջախի տաղանդավոր ու աշխատասեր նահապետներից է» (Վ. Հակոբյան):

«Սոկրատ Խանյանը շարունակում է արդյունավետ ու բեղմնավոր աշխատել բանաստեղծության մեջ՝ դրսևորելով ջանքեր տրոփյուն սիրտ, գիտական աշխատանքում ներհուն միտք» (Ս. Հովհաննիսյան): Յուրաքանչյուր այս խոսքից հետո հնչեցին Ս. Խանյանի հայրենասիրական մի շարք ընտիր բանաստեղծություններ: Այսպես.

*Հոգես խորքերում կրում եմ միշտ ձեզ,
Ներշնչվում ձեզմով, հայրենի լեռներ,
Սիրտս դարձնում եմ ջերմ ու սիրակեզ,
Ձեր ամեն բարը, ամեն թուփը ձեր:*

*Բայց ամենից շատ, հայրենի լեռներ,
Ես գագաթներն եմ սիրում ձեր հպարտ,
Եվ այն պահը թե՛, երբ անթիվ հողմեր
Գալիս, պարտվում եմ ձեր ոտքերի տակ:*

Ապա հնչում է բանաստեղծի մեկ ուրիշ հայրենապատում.

*ԹՃՆԱՄՈՒ հանդես վառվող կրակ է,
Ուժիս երակն է, իմ շողն ու շաղը,
Խոսքով իմաստուն, գործով արդար է,
Փառքի կատար է իմ Ղարաբաղը:
Իմ Ղարաբաղը գալիքիս լույսն է,
Բալիկիս հույսն է իմ Ղարաբաղը:*

Մեկը մյուսի հետևից արտասանում են «Ղարաբաղի երգը», «Սրտաբաց գրույց», «Հայրենիք», «Արցախի դաշը», «Իմ Արցախ», «Հայաստան» և այլ բանաստեղծություններ: Լսարանի խորքից լսվում է աշակերտուհու

Մեր գյուղը սարի լանջին,
Լուսինը՝ օղ ականջին,
Աղբյուրը ձեռքին քնար,
Առվակը՝ զնգուն մի լար:
Թե սիրտս էլ ուզի, կտան,
Մեր գյուղը՝ սարի լանջին,
Նա իմ մոր շունչն է տաք
Եվ սերը իմ առաջին:
Ուսուցչուհի Ի. Սարինյանը խոսքը տալիս է Ս. Խանյանին՝ վարելու դասը:

50 տարիների ընթացքում գիտամանկավարժական գործունեությամբ հարուստ հյուրը եղ առ էր ներկայացնում է Արցախ աշխարհի պատմությունը, այդ համապատկերի վրա բնութագրում գրական այն երկերը, որոնցում ստեղծված է մեր հերոսական երկրի գեղարվեստական պատկերը

Նա ընդգծում է, որ 1988-ից սկսված Հայոց ազգային-ազատագրական գոյամարտն արտացոլվում է արդի հայ գրականության մեջ: Արդեն հայտնի են Վ. Հակոբյանի, Ս. Հովհաննիսյանի, Ռ. Եսայանի, Ն. Սողոմոնյանի, Ն. Ավագյանի, Յ. Ալեքսանյանի, Վ. Բաղդասարյանի, Վ. Գաբրիելյանի, Ա. Հովհաննիսյանի, մյուս գրողների արձակ ու չափածո երկերը՝ նվիրված Արցախյան գոյամարտին:

Ս. Խանյանը խորհուրդ է տալիս աշակերտներին անպայման կարդալ ուսումնական ծրագրի մեջ մտցված գեղարվեստական երկերը, չբավարարվել միայն դասագրքով:

Դասի վերջում Ս. Խանյանը կարդաց իր մոր բանաստեղծությունները՝ զրված տարբեր թեմաներով:

Այդ օրն ուղղակի գրական տոն էր աշակերտների համար: Ուսուցչուհի Ի. Սարինյանը վստահեցրեց, որ այսուհետև կաշարունակվեն նման միջոցառումները դպրոցում:

Ս. Խանյանն իր գոհունակությունը հայտնեց աշակերտների արտասանական վարպետության առիթով և դպրոցի գրադարանին նվիրեց իր գրքերից:

Վերջում ամբողջ խումբը լուսանկարվեց Ս. Խանյանի հետ՝ որպես օրվա հիշատակ:

ոգևորիչ ծայրը: Նա ընդգծված արտասանում է բանաստեղծի հետևյալ տողերը.

*Ձեռք չի քաշում նենգ թշնամին քո հողից,
Քո գանձերից, քո աստղերից, քո շողից,
Ուխտներիդ ձեռքը հատող իմ Արցախ,
Ձար աշխարհում արդար դատող իմ Արցախ:
Դու վեր ելար, դարձար Սիեր ու Դավիթ
Ու վերջ դրիր սրտակեղեք քո ցավին,
Չոխյալներիդ կենաց գավաթ իմ Արցախ,
Ապրողներիդ կենաց հավատ իմ Արցախ:*

Նաև կատարվում են Ս. Խանյանի բանաստեղծությունների հիման վրա գրված երգեր: Աշակերտուհի Օլգա Դավթյանը պրոֆեսիոնալ մակարդակով կատարում է հեռուստատեսությամբ հաճախակի հնչող «Մեր գյուղը» երգը.


Վարսիսե ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ
Ստեփ. հ. 11 ավագ
դպրոցի 12-րդ դաս. աշակերտուհի



ՀԱՎԵՐԺԻ ՃԱՍՓՈՐԴ

ՎԱՍՏԱԿԱՇԱՏ ՄԱՆԿԱՎԱՐԺ-ԼԵԶՎԱԲԱՆԸ

(Գուրգեն Բաղդասարյանի պայծառ հիշատակին)



Կյանքը մարդկային ապրումների բազմաերանգ հյուսվածք է՝ ճանապարհի սկիզբ, ընթացք, երազանք, բարձունք, նաև վայրէջք ու վերջ: Եվ այս իրողությունն ամենուրեք հոլովվում է «կա ու չկա»-ի խորհրդավոր ատույթով, որ բնութագրում է մարդու ծննդյան ու մահվան աստվածատուր ճամփան և որն ըստ Մեծ Լոռեցու, հնչում է որպես հավերժախոս խորհուրդ. «Մահը մերն է, մենք մահինը, մարդու գործն է միշտ անմահ»:

Իմ այս մտորումներն արտահայտեցի իմ գործընկերոջ՝ բանասիրական գիտությունների թեկնածու, պրոֆեսոր Գուրգեն Խաչատուրի Բաղդասարյանի մահվան առիթով:

Հազվադեպ է լինում, երբ ուսանողական տարիների ընկերները բուհն ավարտելուց հետո իրենց ուղին անցնում են միասին՝ նույն մասնագիտությամբ, նույն կոլեկտիվում: Այդպես է անցել իմ ու Գուրգեն Բաղդասարյանի ամբողջ գիտամանկավարժական գործունեության ճանապարհը:

1949թ. միասին ընդունվել ենք Բաքվի Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի բանասիրական ֆակուլտետի հայոց լեզվի և գրականության բաժինը և ավարտել 1953-ին: Գուրգենն ինձից մեծ էր չորս տարով, բայց մեզ համարում էինք միևնույն սերնդի ներկայացուցիչներ:

Գուրգեն Բաղդասարյանը ծնվել է 1926թ. հուլիսի 1-ին, Արցախի Մարտունու շրջանի Սխտորաշեն գյուղում, արհեստավորի ընտանիքում: Յոթնամյա կրթությունը ստացել է Կարմիր շուկայի դպրոցում: Երեք տարի զբաղվել է տակառագործությամբ: 1944-1949թթ. աշխատել է Բաքվի Լենինյան շրջանում՝ որպես հաստոցավար, միաժամանակ ավարտել թիվ 22 միջնակարգ դպրոցը:

Ահա այս ժամանակահատվածից հետո, 1949թ. մեր ուղին անցել ենք միասին: 1953-ին՝ բուհն ավարտելուց հետո, աշխատանքի ենք անցել Բաքվում հրատարակչության «Կոմունիստ» հանրապետական թերթում՝ որպես գրական աշխատողներ:

1962թ. միասին սկսել ենք սովորել մեր ավարտած բուհի ասպիրանտուրայում և միաժամանակ դասավանդել՝ ինքը հայոց լեզու, ես՝ հայ գրականություն: 1962թ. ՀՀ ԳԱ Մ. Աբեղյանի անվան գրականության ինստիտուտում Գ. Բաղդասարյանը պաշտպանել է թեզ՝ «Ստ. Զորյանի պատմական եռագրությունը» թեմայով, ստացել բանասիրական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան, ապա արժանացել դոցենտի ու պրոֆեսորի գիտական կոչման:

1969թ. Աղբյուրների կառավարող շրջանների ազգային խտրականության հետևանքով փակվեց Բաքվի մանկավարժական ինստիտուտում 1932-ից գործող հայկական բաժինը և տեղափոխվեց Ստեփանակերտ: Առանց երկմտելու մենք միասին եկանք հայրենի Արցախ ու շարունակեցինք գիտամանկավարժական գործունեությունը: Հարազատ ծննդավայրում Գ. Բաղդասարյանը նոր եռանդով լծվեց ոչ միայն մանկավարժության, այլև լեզվաբանության գործին: Նա հանդես էր գալիս գիտաժողովներում, ամսագրերում, կենտրոնական թերթերի էջերում՝ ժամանակակից հայերենի կարևոր հիմնախնդիրներով: 1994թ. լույս տեսան նրա «Բայասեռի խնդիրները ժամանակակից հայերենում», իսկ 2004-ին՝ «Արդի հայերենի բայասեռի և բայակազմության հարցեր» գրքերը:

Գ. Բաղդասարյանը 1982-1988թթ. եղել է ԱրՊՀ բանասիրական ֆակուլտետի դեկան, մասնակցել հայ բարբառագիտությանը և հայոց լեզվի պատմությանը նվիրված միջազգային գիտաժողովներին: Պարգևատրվել է պատվոգրերով, 2006թ. արժանացել է ԼՂՀ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչման:

Յուրաքանչյուր մասնագետ ունենում է իր նշանածող հանդիսացող երկը: Որպես լեզվաբան՝ Գ. Բաղդասարյանի երկար տարիների վաստակի արդյունքը հանդիսացավ «Արցախի բարբառի բառարան-հանրագիտարանը»՝ երկու հատորով: Առաջին հատորն ընդգրկում է Ա-Կ բառաշարը, իսկ երկրորդը՝ Հ-Օ:

Գ. Բաղդասարյանն այդ ուղղությամբ

կատարել է հայագիտությանը հետաքրքրող մեծ աշխատանք: Ղարաբաղի բարբառը, որ հայ հնագույն բարբառներից մեկն է, հազարամյակներ շարունակ ծառայել է արցախցուն, և այժմ նրանով հաղորդակցվում են մեկ միլիոնից ավելի հայեր Արցախում, Հայաստանում, Ռուսաստանում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում և աշխարհի բազմաթիվ այլ երկրներում: Հայտնի են շուշեցի Ավ. Բահաթյանի, մեծ գիտնական Հ. Աճառյանի ուսումնասիրությունները Ղարաբաղի բարբառի վերաբերյալ: Գ. Բաղդասարյանն իր բառարան-հանրագիտարանի երկհատորյա գրքերով մի հետաքրքիր, նոր էջ ավելացրեց հայ բարբառագիտությանը: Նրա այս գործը կարելի է համարել լեզվաբան Կ. Դավթյանի «Լեռնային Ղարաբաղի բարբառային քարտեզը» հանրահայտ աշխատության ինքնատիպ շարունակություն:

Գ. Բաղդասարյանի սույն գրքերում տեղ են գտել ոչ միայն Արցախի բարբառում գործածվող բառերն ու բառակապակցությունները, այլև օրհնանքները, բարեմաղթանքները, անեծքները, առածները, հանելուկները, ժողովրդական ծիսակատարությունները, խաղերը, կերակրատեսակները, որոնք նկարագրվում են մանրամասնորեն: Դրանով էլ հենց հիմնավորվում է բառարանի հանրագիտարանային բնույթը:

Վաստակաշատ լեզվաբանը աշխատում էր բառարան-հանրագիտարանի 3-րդ գրքի վրա: Սակայն նա չհասցրեց ավարտել այդ նշանակալից գործը՝ մահկանացուն կնքելով 2012թ. փետրվարի 18-ին: Վաստակաշատ լեզվաբանը պատրաստել է հայոց լեզվի հազարավոր մասնագետներ, որոնք այսօր աշխատում են անկախ ու ազատ Արցախի դպրոցներում և այլ բնագավառներում: Վստահ ու հանգզված եմ, որ նրա սաներից մեկը շարունակելու է իր անմոռանալի դասախոսի գործը:

Գ. Բաղդասարյանի ուսումնասիրություններն ու երկհատորյա բառարան-հանրագիտարանը միշտ լինելու են թե՛ սովորողների և թե՛ հայոց լեզվի մասնագետների սեղանի գիրքը, որոնք մեսրոպյան ոսկեդեմիկ լեզվով միշտ հուշելու են դրանց վաստակաշատ հեղինակի անունը՝ Գուրգեն Բաղդասարյան:

Սուրյադ ԽԱՆՅԱՆ
Բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԼՂՀ գիտության վաստակավոր գործիչ

ԱՐՑԱԽՑԻՆ ԲԱՌԱՍՏԵՐՈՑ

Սկիզբը՝ նախորդ համարում

ԾԱԿՈՒՌ - 1.Փոքրիկ անցք, ծակ: 2.Փոքրիկ, նեղլիկ խրճիթ: 3.Բանտախուց: 4.Նկուղ, ուր գործիքներ, մթերք են պահում:

ԾԱՍՍ - Ծնոտ:
ԾԱՆԻ - Թուրք:
ԾԱՊԼԻ - ճրագ:
ԾԻԼԻ - Ածելի:
ԾԻԿՈՒ - Շատ միհար, բարձրահասակ մարդ:
ԾԼԵՊ - Տաշեղի, ցախի շատ փոքր կտոր:
ԾԼԼՈՎ - Սակավաջուր աղբյուր:
ԾՕԱՆՈՒԿ - Քաղցր հյութով բույս:
ԾՕՈԿ - Բաց կապույտ ծաղիկներով և մանր փշիկներ ունեցող բույս, որի ծաղիկները ծծում են քաղցր հյութի համար: 2.Ծաղիկների անուշահամ հյութ:
ԾՎԱԿԵՆ ՏԱԼ - 1.Ուտելիս չոր պատառը դժվարությամբ կուլ գնալ, քիչ մնալ, որ խեղդվի: 2.Ծարավից կոկորդը ցամաքել, կերածը կուլ չգնալ: 3.(Փխբ.) Մեկին կամ մի բան ունենալու տենչալ:
ԾՎԹԵԼ - Կտորել:
ԾՎՈՒԻ - Փոքր միջատ, որ գիշերը լույս է տալիս, լուսատուիկ:
ԾՂԱՆ - Կրակ անելու համար փայտի մանր կտորներ:

ԾՄԹԿՅԵՎԱԹ - Ծննդկանին նվերով այցելելը:
ԾՄԿԹԱԿԱՆ - Անտառային բույսի տեսակ:
ԾՆԴՅԱՆԱՆ - 1.Ծանրաբարո: 2.Տարեց մարդկանց պարեղանակ:
ԾՎԱԿՅԵ - Նվագ, թույլ ձայն:
ԾՏԵՆԱՇՈՒ - Չնչին օգուտ, շահ:
ԾՐՔԱՆՈՒՐ - Բնատուր շնորհք:
ԾՈՒԼՈՒԼ - Բերանից կախված լորձունք, փսիլիք:
ԾՈՒԼՈՒՐ - Ընկույզի ամբողջական միջուկը:
ԾՈՒԾՈՒՆ - 1.Մոշի չորացրած ճյուղերը: 2.Շատ չոր ցախ:
ԾՈՒԿ ԱՆԵԼ - Գաղտագողի նայել:
ԿԱՂԻՅԵԼ - Բանիմաց, շնորհքով:
ԿԱԹՈՒԿ - Հիաստ իռն:
ԿԱԹԻ - Վտիտ, լրար, փորը դուրս պրծած:
ԿԱԾԾԻՄ - Կհարվածեն:
ԿԱԾՈՒԿ - Ուղտափուշ:
ԿԱԿԱ - (Մանկ.) շաքար, քաղցրեղեն:
ԿԱՂԱՂ - Ընկույզի կանաչ կեղևը:
ԿԱՅԵ - Մեկի ձեռքի հինգ մատներով կամ երկու ձեռքի տասը մատներով ատելի մարդու հետևից չանչ անել՝ իբրև անարգանքի նշան:
ԿԱՆԴԱՁ - (Արհմ.) գլուխ:
ԿԱՊՈՒԿ - 1. Կանաչեղենի փունջ: 2. Ցախի կապած կույտ:
ԿԱՍԿ - Գոտկատեղ:
ԿԱՐԱՆ - Քարայր:
ԿԱՐԿԱԾ - 1. Դղուն: 2. (Հեզն.) գլուխ:
ԿԱՑ - 1. Մնա, սպասիր: 2. Ապրիր:
ԿԱՓԱ - Մարդու մարմնածեղ:
ԿԵՂ - 1. Թիգ: 2. Առողջացող վերքի չոր կեղևը:
ԿԵՂԵԼ - Թաքցնել:
ԿՅԵՐԾՆՈՒԿ - Գորտ:
ԿՅԵՑԸ - Կրան, հագին, հագածը:
ԿՅԵՑ ՏԱԼ - Հագցնել:
ԿԵՑՔ - Հագուստ:

Հարունակելի

Գուրգեն ԲԱՂԴԱՍԱՐՅԱՆ

Ստուգանք

ԱՌԱՋԻՆ ՓՈՐՁԸ ՀԱՋՈՂ ԵՐ

Հունվարի 15-ից փետրվարի 10-ը երևանի «Մխիթար Սեբաստացի» կրթահամալիրի նախաձեռնությամբ անցկացվեց հանրակրթական Դիջիթալ միջազգային չորրորդ ստուգանքը՝ «Թվային տեխնիկական միջոցները՝ արդյունավետ կրթական գործիքներ» ուղղվածությամբ, որին առաջին անգամ մասնակցեց նաև Արցախը: Ստուգանքի նպատակն էր հանրակրթության մեջ թվային միջոցների արդյունավետ կիրառման փորձի, ձեռքբերումների, նախագծերի և հաղորդակցության տեխնոլոգիաների ներկայացում: Ստուգանքին մասնակցելու իրավունք ունեին հանրակրթական դպրոցների սովորողներ, դասավանդողներ, անհատներ և աշխատանքային խմբեր, ՏՏ բնագավառի ձեռնարկություններ:

ԼՂՀ կրթության և գիտության նախարարության ԿԳ վարչության մասնագիտական կրթության բաժնի պետ Միքայել Համբարձումյանից



մյանից տեղեկացանք, որ ստուգանքին Արցախից մասնակցել են բազմաթիվ դպրոցներ, որոնցից ամենակատիվը Ստեփանակերտն ու Հաղորթն էին:

Առաջին փուլում մասնակիցներն իրենց նյութերը հրապարակել են համացանցում: Այնուհետև կրթահամալիրում կազմակերպվել են դրանց դիտումներն ու քննարկումները: Եզրափակմանը Միքայել Համբարձումյանի հետ Արցախից ներկայացել էին Ստեփանակերտի թիվ 3 դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Հայկ Մայիլյանը և թիվ 11 ավագ դպրոցի 12-րդ դասարանի աշակերտ Արմեն Ադամյանը:

Ստեփանակերտի թիվում էին Ստեփանակերտի ֆիզմաթ և թիվ 1 հիմնական դպրոցների ինֆորմատիկայի ուսուցիչներ Մարինե Ապրեսյանը և Մարինե Հարությունյանը՝ տեսադաս-մեթոդական ֆիլմի և ուսումնական նյութերի փաթեթի համար: Դպրոցականներից խրախուսանքի մրցանակի է արժանացել Արմեն Ադամյանը, որը ներկայացրել էր բիզնես և ուսումնական ուղղվածության երկու կայք և Հաղորթի Մ. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի 11-րդ դասարանի աշակերտ Կարեն Սարգսյանը՝ ֆիլմերի, հոլովակների, գովազդի համար: Մ. Համբարձումյանի գնահատմամբ՝ արցախցիների մասնակցության առաջին փորձն այնքան էլ վատ չէր, բայց անելիքներն այս ուղղությամբ դեռ շատ են:

Սեֆ. Լրավարություն

ՄՇԱԿՈՒՅՑ

ԴԱՍԱԿԱՆ ԵՐԳԻ ՀՐԱՎԱՌՈՒԹՅՈՒՆ ԱՐՑԱԽՈՒՄ



Փետրվարի 23-ին Ստեփանակերտի մշակույթի և երիտասարդության պալատում արցախցի երգիչ Սար Սարգսյանի մենահամերգն էր նվիրված Հայոց բանակի ստեղծման և Շուշիի ազատագրման 20-ամյակին: Փառապանծ հորեյանի առաջին արձագանքողներից մեկը շնորհաշատ երգիչն էր, իսկ համերգը սիրո ու հարգանքի տուրք էր հայրենյաց պաշտպան հայ զինվորին, ում բազկի զորությամբ ազատագրվեց հայոց հինավուրց Շուշին: Նշենք, որ ղեկավարելու 1-ին Ս. Սարգսյանը Հայաստանի և Արցախի անկախության 20-ամյակին նվիրված մենահամերգով հանդես է եկել Երևանի Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը:

Սա երգչի հինգերորդ մենահամերգն էր Արցախում, նաև՝ առաջինը, որի կայացմանն աջակցել է ԼՂՀ մշակույթի և երիտասարդության հարցերի նախարարությունը: Ներկա էին Աժ Մախաբան Ա. Դուլյանը, մշակույթի և երիտասարդության հարցերի նախարար Ն. Աղաբալյանը, պետական այրեր, երգչի տաղանդի երկրպագուներ և մայրաքաղաքի երաժշտասեր հասարակությունը:

Ծննդով Արցախի Հայրուք քաղաքից է երգիչը, ով նախնական երաժշտական կրթությունն ստացել է տեղի երաժշտական դպրոցում, ապա ուսումը շարունակել Ստեփանակերտի Սայաթ-Նովայի անվան երաժշտական ուսումնարանի վոկալ բաժնում: 2007-ին ավարտել է Երևանի պետական կոնսերվատորիայի վերոնշյալ բաժինը՝ Ս. Կոլոսարյանի դասարան, ում ղեկավարությամբ ուսանել է կոնսերվատորիայի ասպիրանտուրայում: Որպես մենակատար՝ համագործակցել է Արցախի պետական ակադեմիական, «Մռակած» պետական կամերային և Շուշիի «Վարանդա» երգչախմբերի, ինչպես նաև Արցախի պետական կամերային նվագախմբի հետ: Մասնակցել է մի շարք համերգների, մենահամերգներ է ունեցել Արցախում, Հայաստանում, Վրաստանում, Ռուսաստանում, Բուլղարիայում և Հինաստանում: Ակադեմիական ելույթ-

ներին զուգահեռ համերգային գործունեություն է ծավալում նաև էստրադայում, որտեղ հետաքրքիր ոճական համադրություններով արված ձայնագրություններ ունի: Նպատակը մեկն է՝ հայ դասական երգի նորովի նատուցում յուրօրինակ գործիքավորմամբ՝ ներառելով տարբեր ժողովուրդներ:

Համերգային ծրագիրը ճոխ էր ու մեր օրերի համար բացառիկ: Հայ դասական երգարվեստի գողտրիկ ընտրանի էր դա, որը երգիչը պայմանականորեն բաժանել էր երեք մասի՝ հայրենասիրական, ապա սահուն անցում սիրո թեմային և կրկին՝ հայրենասիրական հզոր պաթոսով երգեր:

Համերգը բացվեց արցախցի կոմպոզիտոր Էդ. Ղազարյանցի «Ութվիեն» ստեղծագործությամբ՝ գրված Ա. Թովմասյանի խոսքերով: Այն հնչեց մենակատար Ս. Սարգսյանի և «Մռակած» պետական կամերային երգչախմբի կատարմամբ: Այսպիսի մուտքը պատահական չէր և շատ համահունչ էր օրվա խորհրդին ու համերգի խորագրին. երգիչն այն նվիրեց Արցախյան ազատամարտի բոլոր նահատակներին: Նրա գեղեցիկ բարիտոնը հանդիսատեսին էր փոխանցում ամենատարբեր զգացումներ՝ ցավի ու հպարտության, վշտի ու սփոփանքի: Լայնաշունչ մեղեդայնությամբ և ներքին դրամատիզմով առանձնացող այս երկի մեկնաբանությունը երգչի ու նվագախմբի կողմից դաժիճ ուղղակի էլեկտրականացրեց: Ինչպես միշտ, այս անգամ էլ երգչախումբն իր կատարողական բարձր արվեստով հիացրեց ունկնդիրներին:

Ս. Եկմայանի «Լռեց» երգը հազվադեպ հնչող մեր հայրենասիրական երգերից է՝ գրված Ռ. Պատկանյանի խոսքերով: Մեր ազգային երգարվեստի գոհարներից է, որը համիրավի մոռացության է մատնվել ժամանակակից կատարողների կողմից, մինչդեռ սերունդների կապը հենց մնացն էր երգերն են ապահովում: Ներկա սերունդը, չեն վարանում ասել, անտեղյակ է այս և երգացանկում տեղ գտած շատ ու շատ երգերից, որոնք մեր ազգային հարստության մի մասն են:

Առանց Կոմիտասի ինչ դասական երգի երեկ... Տեսնես կա՞ մի ուրիշ ազգ կամ ժողովուրդ, ում մտապատկերում ու երգերում կռունկը հայրենիքից «խապրիկ» բերող, կամ հեռվում մնացած յարին բարև տանող ավետաբերն է, «ղարիպի» «գունդ-գունդ արուն սրտի» ցավն աշխարհեաշխարհի հասցնող, թե՞ միայն հայի մտածելակերպին է հատուկ այս զուգորդությունը: Համարեղ երգահանի «Կանչե կռունկ» և «Կռունկ» երգերում հայ պանդուխտի ցավն ու կարտուն էր խտացված, որի թարգմանն այդ երեկ Ս. Սարգսյանն էր:

Հենց միայն երգացանկում

ընդգրկված հեղինակների թվարկումը բավական է՝ պատկերացում կազմելու համերգի յուրօրինակության ու երգչի ճաշակի մասին. Սայաթ-Նովա, Մ. Եկմայան, Կոմիտաս, Ռ. Մելիքյան, Ալ. Սպենդիարյան, հայկական ժողովրդական երգերի դուլուխանյանական մշակումներ, Էդ. Աբրահամյան, Ս. Մավիսակալյան, Ալ. Հարությունյան, Ռ. Ամիրխանյան: Առաջին հայացքից կարող է թվալ, թե երաժշտասերների մեղ լսարանի համար է նախատեսված այն, բայց ո՞վ է մեղավոր մեր արմատներից այսքան օտարվելու համար: Իհարկե, նախևառաջ, հեռուստառադիոկենտրոնը, որը կոչված է ճաշակ ձևավորելու, բայց դարձել է «թիթեռի կյանք» ունեցող երգերի կամա-ակամա քարոզիչը՝ թեթրը տրամադրելով նորաթուխ «աստղերին»:

Կոնցերտմայստեր Անահիտ Դավթյանի և Ս. Սարգսյանի համագործակցությունն արդեն 5 տարեկան է: Համերգին մասնակցում էր նաև «Մռակած» պետական կամերային երգչախմբի մենակատար, ստարանո Իննա Հովսեփյանը: Համերգի հաճելի անակնկալներից էր Իննա և Սար դուետը:

Համերգի եզրափակիչ մասում իշխող դարձյալ հայրենասիրական ոգին էր: Էդ. Աբրահամյանի «Իմ Արարատ», «Հայրենիքիս հետ» և Ռ. Ամիրխանյանի «Հեյ, Արցախ» երգերով հայրենասիրական պաթոսն իր գագաթնակետին հասավ: Մինչև վերջերս երգի լավագույն կատարումը վերապահվում էր միայն հեղինակին: Երգահանը վստահել է իր երգը երիտասարդ երգչին, և վերջինս հուսախաբ չի արել: «Մռակած» երգչախմբի հետ այս կատարումը երգի լավագույն ու հաջողված մեկնաբանություններից կարելի է համարել, որը բառացիորեն փոթորկեց դաժիճը: Երիտասարդ երգիչն ուղղակի հմայել էր դաժիճին ոչ միայն ձայնի գեղեցիկ տեմբրով ու մեծ ձայնածավալով, ինքնատիպ կատարողական արվեստով, այլև բեմական անթերի արտաքինով: Համերգից իրենց տպավորությունները կիսեցին ԼՂՀ Աժ Մախաբան Ա. Դուլյանն ու ԿԳ նախարար Վ. Խաչատրյանը:

Ա. Դուլյան. «Սար Սարգսյանը փայլուն երեկո նվիրեց Արցախի հանդիսատեսին: Նախկինում առիթ են ունեցել ներկա լինել նրա համերգներին և կասեի՝ տարեցտարի զգացվում է նրա վարպետությունը, կարծում են, նաև երգացանկն է ճիշտ ընտրված: Բոլորի մեջն են էլ մեծ հաճույք ստացա և կուզեմայի շնորհակալությունս հայտնել երգչին»:

Վ. Խաչատրյան. «Մեր մենակատարն ինձ դեռ վաղուց է գերել, ես իսկապես սպասում էի այս համերգին և գոհ եմ: Շատ ուրախ եմ, որ արդեն նման երգիչ ունենք Արցա-

խում»:

Ստորև ներկայացնում ենք մեր գրույցը երգչի հետ:

- Սար, համերգը նվիրված էր Հայոց բանակի ստեղծման և Շուշիի ազատագրման 20-ամյակին: Ի՞նչ ես կարծում երգը կարո՞ղ է գեներ լինել:

- Անպայման: Պատմությունից գիտենք, որ մեր զինվորները հաճախ են երգով կռվի գնացել և հաղթանակով վերադարձել: Երգը ոգևորել է նրանց, ուրեմն, երգն էլ ուժ ունի, երգն էլ գեներ է:

- Ի՞նչ սկզբունքով եք ընտրում երգացանկը:

- Ծրագիրն ուներ եռամսասանոց կառուցվածք. սկսվեց Էդ. Ղազարյանցի «Ութվիենով»: Կռվի տարիներին գրված այդ երգը հիշատակի տուրք էր մեր նահատակներին: Հիշելով մեր զոհերին՝ անցանք Եկմայանին, Կոմիտասին, հետո շեղվեցինք դեպի սիրո թեման, քանի որ ոչ չինչ այս աշխարհում առանց սիրո չի կարող լինել՝ կապ չունի դա հայրենիքի, թե կնոջ հանդեպ սերն է: Մերն է իմաստավորում ամեն ինչ: Համերգի ֆինալին՝ նորից հայրենասիրություն, եթե նկատեցիք՝ առավել լավատեսական ու հաղթական շնչով: Դաժիճն, իհարկե, ավելի աշխույժ արձագանքեց ժողովրդական երգերին, թեպետ դրանք էլ դասական մշակումներ էին:

- Իննա Հովսեփյան-Սար Սարգսյան դուետը հաճելի պահեր պարզեց ունկնդիրներին: Ինչպե՞ս ծնվեցին այդ զուգերգերը:

- Երևի նկատի ունեք Սայաթ-Նովայի «Քանի վուր ջան ին» և ժողովրդական «Աղջիկ» երգերը: Դրանց մշակումները Ալ. Դուլուխանյանի կողմից ընդհանրապես սրտստեղծագործություններ են, որոնք մեր նախաձեռնությամբ զուգերգի վերածեցինք, ընդ որում, միմյանց այնքան սերտորեն ներխուսված, որ տողի կեսից շարունակում էինք իրար: Կարծում են, հաջողվել է: Իննայի հետ վաղուց են համագործակցում, հուսով եմ՝ ապագայում ևս առիթներ կլինեն:

- Երգարվեստում ո՞ւմ եք համարում Ձեր ուսուցիչը:

- Իմ այսօրվա հաջողությունների համար պարտական են երկու դասատուի. Արցախում՝ Սվետլանա Աղաջանյան, առաջնախան երգեցողության հիմքը նա է դրել, և Երևանի կոնսերվատորիայում՝ Սվետլանա Կոլոսարյան:

- Հայտնի երգիչներից ովքե՞ր են Ձեզ հիացնում:

- Եթե ասեմ՝ այս երգիչն ինձ անընդհատ հիացնում է, այդպիսին չկա, կան կոնկրետ կատարումներ:

- Դա կարող է և հայտնի՞ երգչի կատարում չլինել...

- Այո, թեկուզ ուսանող կամ ոչ շատ հայտնի երգիչ, բայց Մարիա Կալլանին ինձ համար բացարձակ երգչուհի է:

- Երբևէ չե՞ք մտածել, որ դժվար ճանապարհ եք ընտրել երգարվեստում, չե՞ք մտածել թողնել այն և ուրիշ գործ սկսել:

- Ոչ, թող վերամբարձ չհնչի, ես գիտեմ, որ ծնվել եմ երգելու համար: Դա ես գիտեի դեռ 3-4 տարեկանից: Չնայած դպրոցն ավարտել եմ գերազանց գնահատականներով, և ուսուցիչներից շատերն ինձ հետ որոշակի հույսեր էին կապում, բայց համոզված էի, որ պիտի երգիչ դառնամ:

- Բրեխտն ասում էր. «Արվեստի բոլոր տեսակները ծառայում են արվեստներից մեծագույնին՝ ապրելու արվեստին»: Երգը օգնո՞ւմ է ապրելու արվեստին:

- Արվեստն ինձ շատ է օգնում: Երբ մի պահ պատկերացնում եմ ինձ առանց երգի, առանց բեմի, անգամ տևական դադարների ժամանակ ես իմ տեղը չեմ գտնում, շատ են մեղվում ու ընկճվում: Երգն ինձ համար իրոք կյանք է, իսկ բեմը միակ տեղն է, որտեղ ինձ երջանիկ են զգում:

- Մի գողտրիկ արձակագիր ունե՞ք՝ Խաչիկ Հրաչյան. տարիներ առաջ նրա պատմվածքներից մեկում այսպիսի տողերի են հանդիպել. «Երգը փողոկ հետ կապ չունի: Երգը ապրելու համար է»: Համա՞ծա՞յն եք: Ի՞նչ դժվարությունների է բախվում այսօր պրոֆեսիոնալ երգիչը:

- Համաձայն եմ՝ նայած ինչ առումով... Այսօր ամենուր փող է պետք, թիկունք է պետք, բայց, ոչ չինչ, դիմանում եմ:

- Առաջարկներ ստանո՞ւմ եք:

- Այո, ամեն համերգ ինչ-որ դուռ բացում է, մեծ դարպասներ չեն դրանք, և բուցե ճիշտ դա է, փոքր դռներ են, բայց հույսի դռներ են, դրանցով էլ գոհ եմ ու շնորհակալ:

- Ի՞նչ տպավորություններով եք հեռանում Արցախից:

- Արցախում իմ բոլոր մենահամերգներից ամենալավ տպավորություններն այս համերգից են: Վերջապես ես պետական աջակցություն ստացա, շատ շնորհակալ եմ մշակույթի նախարար տիկին Աղաբալյանից: Իմ նախորդ մենահամերգներին ոչ մի աջակցություն չեն ստացել, բացի դատարկ կամ կիսադատարկ դաժիճներից: Պատճառը՝ թե ակադեմիական երգեցողության պահանջարկի բացակայությունն էր, այլ՝ կազմակերպչական մասի: Այս համերգը ցույց տվեց, որ այդ երգի կարիքը կա, Արցախում այն պահանջված է: Ուզում եմ ավելացնել, որ ինչքան էլ ուրիշ երկրում, ուրիշ քաղաքում ելույթ ունենամ, ինչքան էլ ջերմ ծափեր ստանամ, ես կարիք ունեմ իմ ժողովրդի ջերմությանը: Այսօր ես այդ ջերմությունը ստացա և իրոք երջանիկ եմ:

Մելանյա ՄԻՆՈՅԱՆ

ԱՐԵՎԻ ՆՄԱՆ ՆԱՅԵ ԱՃԽԱՐՀԻՆ

Փետրվարի 19-ին լրացավ ամենայն հայոց բանաստեղծ Հովհաննես Թումանյանի ծննդյան 143-ամյակը: Թումանյանն այն գրողն է, ով բոլոր ժամանակներում մնում է կենդանի և բոլորի կողմից սիրված: Մեծ գրողի ծննդյան օրվա կապակցությամբ Մարտունու շրջանի Սոս գյուղի Հայկ Հակոբյանի անվան միջնակարգ դպրոցում անցկացվեց միջոցառում: Այն կազմակերպել էր նույն դպրոցի հայոց լեզվի և

գրականության ուսուցչուհի Մարինե Գաբրիելյանը՝ 7-րդ դասարանի աշակերտների հետ: Միջոցառումն ամբողջովին ներկայացնում էր գրողին, նրա ստեղծագործությունները, կենսագրությունն ու հայրենասիրական գործունեությունը: Թումանյանը ոչ միայն լավ գրող է, այլև մեծ հայրենասեր: Դրա վառ օրինակներից է 1915թ. կոտորածի օրերին Էջմիածնի պատերի տակ նրա ցուցաբերած օգնությունը

գաղթականներին: Թումանյանը առաջապում էր հայի վշտով ու ճակատագրով: Բայց համոզված էր, որ արդար, սակայն հալածական ժողովուրդը՝ դեպի լույսը, գեղեցիկը, բարին ձգտողը, հասնելու է իր նվիրական տենչանքին:

Թումանյանի կյանքը ջահ եղավ, որ այրվեց անմնացորդ՝ լույս տալով իր ժողովրդի ճանապարհին: Այսօր մեր երիտասարդները

ընդ կա սիրում ու գնահատում են թումանյանական արվեստը, նրան պահում այն բարձունքում, որտեղից փայլել է Յ. Սահյանն ասել է. «Թումանյանի արվեստը մի տիեզերք է, ուր ամեն մի սերունդ գտնելու է իր համար նոր գալակտիկաներ»:

Իրոք, յուրաքանչյուր սերունդ իր համար բացահայտում է մի նոր Թումանյան:

Ամօելիկա ՕՐԱՆՋԱՆՅԱՆ
Լրագրության 3-րդ կուրսի
ուսանողուհի

ԳՐԱԿԱՆ

«ՄԵՐ ՀԱՐԵՎԱՆՆԵՐԸ» ԵԱՐԲԻԳ

ՃՆՃՈՒԿԸ

Արև էր: Ծառերի վրա նստած ծյուները հայե- լու պես պապրում էր, ծառերի մեջ ծվարած տնից ավարելով, ընդհատ-ընդհատ ծուխ էր բարձրանում: Գարունը փորձում էր տեղավոր- վել այս բակում, բայց այնքան անկենդան էր, որ չէր համարձակվում: Կատվի նվազող չկար, շան հաչոց չկար, միայն մի ճնճողուկ էր նստել պատուհանի երկաթե վանդակի ճաղին ու կտ- ցահարում էր ապակուն: Երևում էր, որ դա իր ամենօրյա աշխատանքն էր, որովհետև պա- տուհանի փեղկը բացվեց և մի չորչորուկ ձեռք պատուհանի գոգին հացի փշրանքներ լցրեց: Ծնճողուկը ուրախացած նստեց պատուհանին և սկսեց կտցել հացի պատառիկները: Բաց պատուհանի դիմաց կանգնած ալեհեր կինը նախանձեց թռչունին, երբ տեսավ, որ նա կերը կտուցին թռավ:

- Է՛՛ Կերոն, թռչունն էլ ձագ ունի, իսկ դո՞ւ... ո՞ւմ համար մաշեցիր քեզ, այրվեցիր, այրվե- ցիր ու քեզնից թողի ծխացող մոխիր:

Հետո նայեց ծուխ-ծուխ վառվող վառարա- նին:

- Սա վառվել է՞ որ վառվում ես, էն ծուխ է՞ որ ելնում է: Ես անտերն էլ է ինձ նման հոգնել ու սպառվել:

Ասաց, կռացավ, տնքալով, վառարանի մեջ փայտ զցեց, փայտը թշուշոց՝ թաց էր, հետո ձեռնափայտը թխկթխկացնելով մոտեցավ բաց անկողնուն ու պառկեց: Պառկելն էլ էր դժվար՝ մեջքը ճաքում էր: Հիշեց: Կար ժամա- նակ՝ այս մեջքով 100 կիլոգրամանոց պարկեր էր շալակում: Բրիգադիր Օնեսը և՛ ուրախա- նում էր, և՛ բարկանում:

- Ախչի, ինչի՞ ես քեզ կոտորում, ուտողդ ով ա:

Ասում էր ու աշխարհ գրում: Գյուղի կանան- ցից ոչ մեկը իր չափ աշխարհ չէր ստանում: Իսկ ստացածն ուտողը եղբոր միակ տղան էր, որը դարձել էր Կերոնի կուռքն ու կյանքի նպատա- կը: Ինչ աներ: Կարոն հինգ տարի մնաց վերո- նի մոտ ու գնաց: Երեխա էր ուզում մարդը, Վե- րոնը չմեղադրեց նրան, ոչ էլ Կարոն որևէ վի- րավորական խոսք ասաց կնոջ հասցեին: Գնաց ու ձագուկների տեղ դարձավ, իսկ ինքը եղբոր Գառնիկին իր համար ձագ սարքեց ու պահեց, մեծացրեց, բանակ ուղարկեց, հետո սկսեց հարսանիքի պատրաստություն տես- նել: Գնաց քաղաք ու ճոխ-ճոխ ոսկեղեն առավ ամիսյա հարսի համար, կարագը հալեց, լց- րեց ամանները, մսացու մոգիլին հատուկ գո-

րովով կերակրեց, չաղացրեց: - Գառնիկս գա, հարսանիք կանեն, քեզ կմորթեն:

Նոր տեղաշար կապեց: - Ինձ հարսի օժիտ պետք չէ, ինչի, ես մե- ռա՞ծ եմ:

Գառնիկ դու Գառնիկ: Բանակը վերջացրեց ու հեռագիր ուղարկեց.

- Հորքուր ջան, ես մնում եմ այստեղ: Անուսնացել եմ մի շատ լավ ռուս աղջկա հետ:

Վերոնի ուշքը գնաց, երբ կարողաց հեռա- գիրը: Աջից-ձախից նրան հանդիմանեցին, թե խեղճ գլուխը հավաքի, ինչ կա այս գյուղում, ջահելները բոլորն էլ փախչում են, չես տես- նո՞ւմ, հո մենակ քո Գառնիկը չի՞:

Լսեց ու լռեց, լռեց ու համակերպվեց, միայն գիշերները պառկում էր ու հիշում իր ջահելությունը, իր պատուհանների տակ թա- փառող բրիգադիր Օնեսին, ընկերուհու՝ Մա- նիկի խորհուրդները:

- Օնեսի ուշքը քեզ համար գնում է, բարձր փոխիր, բալքի մի երեխա ունենա, օր ծերության քեզ կպահի:

- Վերջացրու, Մանիկ,- ամեն անգամ սաս- տում էր ինքը, ինձ պահող ունեն, բա Գառնիկս ի՞նչ է:

Իսկ Գառնիկը ամուսնանալուց մի տարի հետո եկավ մի շեկիկ, նիհար-նիհար աղջկա հետ: Վերոնը աշխարհով մեկ եղավ, բերեց հարսի դեմ լցրեց իր առած ամբողջ ոսկեղենը: Բոլոր մատանիները մեծ էին մատին, ախր տնաշենը էնքան նիհար էր, վզնոցները կախեց վզից, ապարանջանը կապեց թևը, մատանի- ները լցրեց նրա բուռը, իսկ Նինոզկան՝ հարսը, ուրախությունից պաչաչում էր Կերոնին ու մա- մոզկա-մամոզկա ասում:

Հետո գնացին ու գնացին, լռեցին ու լռե- ցին:

Ախ, Կերոն, Կերոն, գուցե բարձր փոխեիր, քո ձագն ունենայիր, քեզ չլքե՞ր: Պատուհանի կտկտոցից սթափվեց ու նայեց: Ծնճողուկը նո- րից էր եկել: - Չկշտացան, հա՞, ձագերդ: Ախր, գիտես հե՞շտ է վեր կենալը, ես մեր հարևան Շուշանն ինչի՞ չեկավ: Տեսնես ինչ է եղել:

Քթի տակ խոսելով. մի կերպ վեր կացավ, պատուհանը բացեց ու էլի փշրանքներ լցրեց.

- Տար, տար կերակրի: Մայր ես, բա ոնց, ինձ նման չորացած ծառ չես:

Ասաց ու խորը շունչ բաշեց.

- Ուխայ, գարնան հոտ եմ առնում: Մարդն էլ գարնան նման լիներ, էլի: Եղա-

- Տնաշենները ոնց որ մարդ տեսած չլինեն, ախր քնով էի անցել, չկարողացա մթնով վեր- ջացնել: Տղեքս ամաչում են ինձ համար: Մի ա- սող լինի, եղ որ մեկդ եք լի ու բոլ ապրում, որ չեք ուզում աշխատեն, գիշեր ցերեկ եք անում ու հազիվ ձեր տուն-տեղը պահում, մեծս էլի լավ է ապրում, բայց փոքրին որ չօգնեն, ոնց կապրի: Ըհը, հիմի էստեղից կգնամ, խոզերի լակը պիտի տանեն տարվա վերջին, դրանք վաճառեն, մի քիչ էլ հավաքած փող ունեն, դնեն վրան, մի մեքենա առեն տղայիս հա- մար, մեծ եղբայրն ունի, թող ինքն էլ ունենա, ումից է պակաս:

Փիրուզա բաբոն շալակեց ավելն ու ուղղ- վեց տուն: Տնեցիք քնած էին, կանաց վառեց գազօջախը, թեյնիկը դրեց վրան, մի բաժակ թեյ խմեց, մի քիչ տաքացրեց սառած ոսկորնե- րը, վերցրեց լակի դուլերն ու ուղղվեց դեպի խոզերի գոմը:

- Փիրուզ բաբո, քունդ չի տանո՞ւմ,- ձայն տվեց հարևանը:

- Լույսը բացվելուց հետո մենակ թամբալ- ներն են քնում: Կոլխոզի ժամանակ, էս վախտ արդեն մի քանի աշխար էի արել,- ասաց ու շա- րունակեց ճանապարհը:

Հարևանը գլուխն օրորեց ու մտավ տուն:

Փիրուզա բաբոն արդեն վերջացրել էր, երբ գոմ մտավ որդին ու հանդիմանեց մորը.

- Այ մամ, հերիք է էլի, խայտառակես ես հարևանների մոտ: Չեմ ասե՞լ, խոզերի հետ գործ չունես, ինչ որ պետք է, ես կանեն:

Նակի հետ բացվեց, պողպակալեր: Հա, հա, պողպակալեր: Թե չէ Աստված մեկին տասն է տալիս, մեկին՝ ոչ մեկը: Բա դա արդարություն է՞: Տեսնես Գառնիկս երեխա ունեցա՞վ: Կնիկը գոնե մի քանիսը բերեր, երեխես ինձ նման ան- տեր չմնար: Ես Շուշանն ինչ եղավ է՞: Հաս- տատ հիվանդացել է, երեկ ասում էր գլուխս ցավում է: Գնամ տեսնեմ ինչ է եղել: Անտեր գյուղում մենակ պառավներս ենք մնացել: Ջահելները փախան, ծնողներին թողեցին գնացին: Ո՛ր մնանք, ինչի՞ մնանք, ինչո՞վ պահենք մեր երեխեքին, արդարանում են նրանք: Էհ, պատճառներ եք փնտրում, հեշտ կյանք եք ուզում: Մտքում նրանց հետ կռիվս տալով ու տնքալով, շորերն էր հագնում Կերո- նը: Հետո վերցրեց ձեռնափայտը, դուռը սառել էր, մի կերպ բացեց ու դուրս եկավ: Չյան փայ- լից աչքերը չդիմացան, փակեց-բացեց, փա- կեց-բացեց ու հոգոց հանելով, շարժվեց դեպի հարևանի ցանկապատը:

Ցանկապատ էլ ասում են, մի փված մե- տաղացանց էր՝ ծյուների մեջ կորած: Ոտքերը քարշ տալով, ձեռնափայտով ծյուները հետ տա- լով, մի կերպ հասավ հարևան Շուշանի դռա- նը, հրեց ու ներս մտավ.

- Ախչի Շուշան, ո՞ր ես, տնաշեն,- բացեց Շուշանի սենյակի դուռն ու ներս մտավ: Վա- ռարանը հանգած էր, Շուշանը անկողնում պառկած.

- Շուշան, եղ հիվանդ ե՞ս, ախչի,- ասաց, մոտեցավ ու սարսափած հետ քաշվեց:

Շուշանը հագել էր իր կիրակնօրյա զգես- տը, Ռուսաստանում ապրող երեք երեխաների նկարը առել ափերի մեջ, աչքերը փակել ու ննջել հավերժական քնով:

- Վախ, Շուշան,- մորմոքաց Կերոնն ու չիմանալով իր անելիքը, աթոռը մոտ քաշեց ու նստեց:- Ինձ էիր խղճում, որ երեխա չունեն, բա քո երեխեքն ո՞ր ես, տնաքանդ, այ տնա- քանդ:- Լուռ լաց եղավ,- հիմա ինչ անեն, ո՞ւմ ասեն, մինչև գյուղամեջ ո՞նց հասնեն: Թե մեզ ով ասեց՝ գյուղի ծայրին տուն չիմենք: Շու- շան, այ Շուշան, ձեռն հանի է, ձեռն հանի, այ կնիկ: Չէ, հոգիս բերանս առնեմ ու գնամ, էս կնկանը թաղող է պետք, չէ՞:- Ասաց ու տեղից վեր կացավ, դուրս եկավ ու դանդաղ շարժվեց առաջ, պետք է զգույշ իջներ, հանկարծ վայր ընկնի մի տեղը ջարդի, իրեն պահողն ո՞վ է:

Մի կերպ իջավ, հասավ առաջին տանն ու դուռը ծեծեց: Տանտիրուհին դուրս եկավ ու Կերոնին տեսնելով, ապշեց.

- Ա բալա, եղ երբվանի՞ց է դոչադությունը խայտառակություն, թող իրենք ամաչեն, որ մինչև կեսօր քնում են,- ասաց Փիրուզա բա- բոն ու շարունակեց,- դու գնա տուն, ես իջնեմ բոստան, լոբին պիտի հավաքեմ,- և ուշադրու- թյուն չդարձնելով որդու առարկություններին, ձեռքը թափ տվեց ու իջավ Կարկառի ա- փին փռված բոստանը:

Արևը դուրս էր գալիս ու նարնջագույն դարձնում աշնան դեղնած տերևները: Սառը շաղը դրել էր բույսերի վրա: Փիրուզա բաբոյի ձեռքերը սառել էին ցուրտից: Նա հաճախակի նրանց տաքացնում էր իր շնչով և շարունա- կում աշխատել: Կեսօրին մոտ լոբին հավաքել էր արդեն, օրն էլ տաքացել էր, գոգնոցի գր- պանից հանեց մի կտոր հաց ու պանիր, կե- ռավ պոմիդորով ու բիբարով, ուզեց շարունա- կել աշխատել, բայց նայեց շալակին, բավա- կանին ծանր էր:

- Չէ, էսօր բավական է, գնամ տուն, ջանս մի դող է մտել. ինչ է ուզում ինձնից, չգիտեմ, որ սպանի էլ, մինչև նոր տարին ավտոն պըտի առնեն:

Վերջապես հասավ տուն: Տանը փոքր թոռ- նուհին էր, վերցրեց պարկը, ներս տարավ:

- Թեյնիկը դիր կրակին, բալա,- ձեռն տվեց Փիրուզա բաբոն ու հոգնած նստեց մուտքի աստիճաններից: Անցնող-դարձող հարգան- քով բարևում էին Փիրուզա բաբոյին ու քեֆ- հալ հարցնում:

- Լյավ եմ, մատաղ, դուք էլ լյավ ինիք,- պա-

- Քա վույ, Կերոն մամ, եղ դո՞ւ ես, ներս ա- րի, ներս արի:

Վերոնը թուլացած նստեց դռան մոտ դը- ված նստարանին ու լացակունած ասաց.

- Շուշանը չկա, աղջիկս, Շուշանը մեռել է, թաղել է պետք,- ասաց ու նվաղեց...

- Վերոն մամ, Կերոն մամ,- կարծես խոր քնի միջից ձեռն էին տալիս իրեն: Ուզում էր աչ- քերը բացել, կոպերը չէին շարժվում:- Մեռնում եմ երևի,- մտածեց նա: Դե լավ է, կողքիս գոնե մարդ կա, Շուշանի նման անտեր-անտիրա- կան չմեռա:

Աչքերը բացեց: Ուրիշի տան էր, ուրիշի ան- կողնում: Հայացքն ընկավ պատուհանից դուրս հանված ծխնելույզին, հետո վառարա- նին: Վառարանն այսպես պիտի վառվի, որ մո- խիր էլ չմնա, մտածեց նա, թե չէ... իմի նման, փստփստացնում է ու միայն ծուխ ա- նում:

- Վերոն մամ, ուշքի եկա՞ր,- տանտիրուհին էր,- գյուղը արդեն գիտի Շուշան տատի մա- սին, մի մտածի, հեռագիր ենք տվել երեխանե- րին, գալիս են: Վերոն տատ, Գառնիկիդ էլ ենք հեռագիր տվել, ինքն էլ է գալիս, բայց դու այս- տեղ կմնաս, մինչև լավանաս, եղա՞վ:

Ինչ ասա՞ց, Գառնիկս գալիս է՞, դե լավ է, թաղող կունենամ: Ախչի Շուշան, եղ ո՞ր ես մե- նակ ճամփա ընկել, հը՞, բա մենք հարևան չե՞նք, հը՞: Փորձեց սրբել արցունքը, ձեռքը չջարժվեց: Ես անտերին ի՞նչ է եղել, ոտքն էլ չջարժվեց: Հասկացավ ու ցավ չզգաց: Մտա- ծեց՝ բա Գառնիկս համար ո՞վ հաց կշինի: Մի ճնճողուկ չափ էլ չկամ, էյ աշխարհ: Ասաց ու փակեց աչքերը: Իսկ ճնճողուկը կանգնել էր վանդակի ճաղին ու Կերոն մամին էր սպա- սում: Չագերը կեր են ուզում, ձագերը սոված են, բայց Կերոն մամի տունն ու պատուհանը լուռ էր, ինչպես գյուղի շատ ու շատ լռված տներ, որոնց պատուհաններին շատ վաղուց- վանից ճնճողուկ չէր նստում:

Երբ գիշերը փռում էր փեշերը գյուղի վրա, լուսնի արծաթափայլից սև խոռոչներ էին հի- շեցնում ամառադառնակ տների պատուհան- ները:

Իսկ առավոտյան Կերոնի պատուհանի վանդակաճաղին թառած ճնճողուկը երկար կտցահարեց ապակին ու հույսը կտրած՝ թռավ գնաց որոնելու բացվող պատուհաններ:

տասխանում էր նա ու մտածում,- մի քիչ էլ նս- տեմ, էս անտերը հանգստանա, թե չէ կարկտի նման է խփում:

Արևը ընկել էր շեմին ու տաքացնում էր նրա մեջքը: Մի նիհի էր պատել իրեն, չէր կա- ռողանում աչքերը բացել: Հեռվից հեռու թո- ռան ձայնը հասավ ականջին.

- Բաբո, թեյը լցրել եմ, եկ:

Փորձեց շարժվել, չհաջողվեց:

- Թող մի քիչ քնեմ, էս ինչ քաղցր միջ է,- մտածեց նա ու փակեց աչքերը, անասելի թեթև էր մարմինը՝ քունը հաճելի:

Երբ թռը դուրս եկավ բաբոյին նորից կան- չելու, նրան շրջապատել էին մի քանի հարևան կանայք ու ձեռն էին տալիս, ցնցելով նրա հոգնած մարմինը:

Փիրուզա բաբոն լսում էր նրանց ձայ- նը, փորձում պատասխանել, բայց չէր հաջող- վում: Հետո հասկացավ, որ դա իր վերջին և ա- մենաերկար քունն է:

- Թող այդպես լինի,- մտածեց նա ու թու- լացրեց մարմինը:


Իսկ հարևան կանայք արտասվում էին ու մրմնջում.

- Ճանապարհ դարի, Փիրուզա բաբո, ե- րանի մեզ էլ այդպիսի մահ բաժին հասնի:

- Թեյի բաժակը վայր ընկավ սառած թո- ռան ձեռքից ու փշրվեց այնպես, ինչպես փշր- վեց Փիրուզա բաբոյի վերջին երազանքը...

ԽՈՍՔ ՀԻՇՎԱԿԻ

ԿԱՊՐԻ ՍԱՆԵՐԻ ՀԻՇՈՂՈՒԹՅԱՆ ՄԵՋ



Շամիր Գևորգյանի հիշատակին

Նկարիչն ապրում է կտավներով, գրողը՝ իր գրքերով, ուսուցիչն՝ իր սաների հիշողության մեջ: Հիշողությունները մարդուն շատ անգամ են տանում դեպի մանկության ու պատանեկության եզերք: Այդ եզերքն ինձ սերնդակիցների համար կապված է Քերթի միջնակարգ դպրոցի հետ, ուր աշխարհագրություն է դասավանդել Շամիր Մելիքսեթի Գևորգյանը:

Մատուցում է կենսաբանական դասընթացներ, որը թրծվել էր պատերազմի բռնություն, մեծ սիրով ու խանդավառությամբ էր կատարում իր աշխատանքը: Նա գորակառնվել էր խորհրդային բանակ, որից հետո սովորել է Սմոլենսկի ռազմական ուսումնարանում, կամավոր մասնակցել ռուս-ֆիննական պատերազմին, այնուհետև զինվորագրվել Մեծ Հայրենականին: Ունի 31 մեդալ և 2 շքանշան:

Հայրենական պատերազմից վերադարձավ ոտքից վիրավոր: Ծնողները դժվարությամբ էին հոգում ընտանիքի կարիքը. պետք էր օգնել նրանց, միևնույն ժամանակ հայրենիքին հարկավոր էին լավ մասնա-

գետներ, և նա մեծ խանդավառությամբ ընդունվեց Շուշիի մանկավարժական ուսումնարանը, այնուհետև՝ Երևանի մանկավարժական ինստիտուտի ռուսաց լեզվի բաժինը: Վերադառնալով հարազատ գյուղ՝ սկսեց աշխատել Քերթի յոթամյա, իսկ հետո՝ միջնակարգ դպրոցում: Բայց նա այս բնագավառով չբավարարվեց և որոշեց ձեռք բերել և մի մասնագիտություն: Ընդունվելով Երևանի պետական համալսարանի աշխարհագրության բաժինը, ստանալով աշխարհագրության ուսուցչի որակավորում՝ նա սկսեց աշխատել որպես աշխարհագրության ուսուցիչ:

Շամիր Գևորգյանը երկար տարիներ, մինչև թոշակի անցնելը աշխատել է Քերթի միջնակարգ դպրոցում և որպես շարքային ուսուցիչ, և տնօրեն, եղել է ԼՂԻՄ գերագնացիկ ուսուցիչ, շաշկու և շախմատի մարզային չեմպիոն: Նրա ընտանիքը բազմազավակ էր, ինքն էլ բազմազավակ ընտանիքից էր: Շամիր Գևորգյան և Գեղեցիկ Բախչիյան մանկավարժ ամուսինների ընտանիքում դաստիարակվեցին ու կրթություն ստացան 5 զավակներ, որոնք ամենքն էլ հարգված ու սիրված մասնագետներ են իրենց բնագավառներում:

Շամիր Գևորգյանը շատ հետաքրքիր մարդ էր, սիրված ու հարգված հասարակության կողմից: Առավել սիրելի էր որպես ուսուցիչ: Նրա դասերը նման էին հեքիաթային աշխարհի: Այնքան պատկերավոր ու հարուստ էին ինֆորմացիայով, որ երբեմն անիրական էին թվում այդ տեղեկությունները: Նա շատ պրպտուն մարդ էր, ստեղծել էր հարուստ ու կախվածություն աշխարհագրության կաթինետ, աշխար-

հագրական հրապարակ, ուներ հարուստ գրականություն, որը սիրով տրամադրում էր աշակերտներին: Ընդհանուր առմամբ էր, սիրում էր նկարել, ստեղծագործել: Քարտեզագրությունը նրա տարերքն էր: Այնքան էր հմտացել, որ առանց քարտեզին նայելու ցուցափայտը դնում էր անհրաժեշտ կետի վրա: Նրա աշակերտներն անգիր գիտեին շատ աշխարհագրագետների ճանապարհորդության ուղիները: Չկար մի այնպիսի դաս, որի ժամանակ դիաֆիլմ կամ կինոֆիլմ չցուցադրվեր, չաշխատեին ուրվագծային քարտեզի վրա: Եվ ի՞նչ խանդավառությամբ էր պատմում հաղթական ճակատամարտերի մասին, արցունքոտ աչքերով հիշում ընկերներին: Նա մեծ ներդրում է ունեցել Հայրենական պատերազմում զոհված համազորայիններին նվիրված հուշարձանի կառուցման, գյուղի զարգացման, կոլտնտեսության կազմավորման գործում, դպրոցաշինության աշխատանքներում:


Թոշակի անցնելուց հետո Շ. Գևորգյանը կնոջ հետ տեղափոխվեց Հայաստան՝ որդու մոտ: Շատ ծանր էր տանում հայրենիքի կարոտը: Նա հեռացավ կյանքից 91 տարեկան հասակում:

Շամիր Գևորգյանի աշակերտներն ու Քերթի միջնակարգ դպրոցի կողակտիվը ցավակցում են նրա զավակներին ու թողնելին՝ սիրելի հոր և պապիկի մահվան կապակցությամբ:

Հավերժ փառք քեզ, սիրելի ուսուցիչ: Դու միշտ կապրես քո սաների հիշողության մեջ:

Ստելլա ՂՈՒՅԱՆ
Քերթի միջն. դպրոցի փոխտնօրեն

ԳԵՈՐԳԻ ԱՂԱԼՈՒՄԻ ԱՆԱՎԵՐԴՅԱՆ



Գյուլթյուն ունեն գիտամանկավարժական լուրջ խնդիրներ, որոնց լուծման բանալին գտել են բազում վաստակաշատ մանկավարժներ, որոնցից մեկն էլ Գեորգի Աղալումին էր: Նրա համար դպրոցական միջավայրը ֆիզիկական, հոգեբանական, մեթոդաբանական բաղադրիչներով դարձել էր կյանքի իմաստ, որն էլ նա հասցրեց իրականացնել: Կշարունակել իր և մանկավարժական, և՛ գյուղատնտեսական, և՛ օդերևութաբանական, և՛ քաղաքական, և՛ փիլիսոփայական գիտելիքներն ի սպաս դնել ու դարձնել սերունդների սեփականությունը, սակայն չհասցրեց:

Գեորգի Աղալումյանը ծնվել է 1928թ. Մայիսի 2-ին, Հայրուբի շրջանի Կարմրակուն գյուղում: Սկզբնական կրթությունը ստացել է Կարմրակունի 7-ամյա դպրոցում, այնուհետև ուսումը շարունակել Հայրուբի միջնակարգում: 1949թ. ընդունվել է Բաքվի Վ.Ի. Լենինի անվան պետական մանկավարժական ինստիտուտի աշխարհագրական ֆակուլտետը: Ավարտելուց հետո աշխատել է Հայրուբի միջնակարգ դպրոցում՝ որպես աշխարհագրու-

թյան ու նկարչության ուսուցիչ: Միաժամանակ սովորել է նույն ինստիտուտի գյուղատնտեսական ֆակուլտետի հեռակա բաժնում: 1979թ. մայիսին մասնակցել է Ալմա Աթայում կայացած համամիութենական հինգերորդ մանկավարժական ընթերցումներին և պարգևատրվել ԽՍՀՄ մանկավարժական գիտությունների ակադեմիայի պատվոգրով: 1980թ. նրան շնորհվել է ժողովրդական լուսավորության գերագնացիկության վկայագիր, իսկ 1986թ. ուսուցիչների ստեղծագործությունների մարզային ցուցահանդեսում գրավել է առաջին տեղը և արժանացել «Ոսկե ձեռքերի վարպետ» դիպլոմին: 1987թ. նրան շնորհվել է ուսուցիչ-մեթոդիստի կոչում: 1992-1997 թթ. եղել է Հայրուբի Ս. Մանվելյանի անվան միջնակարգ դպրոցի տնօրեն: 2001թ. արժանացել է 20-րդ դարի Արցախի լավագույն մանկավարժի կոչման: 2005թ. մատաղ սերնդի կրթության և դաստիարակության բնագավառում ունեցած ծառայությունների համար ԼՂՀ առաջադիմի հրամանագրով նրան շնորհվել է վաստակավոր մանկավարժի պատվավոր կոչում:

1971թ. Գ. Աղալումյանի նախածնունդյալ կառուցվել է Հայրենական պատերազմում զոհված 60 համազորայիններին նվիրված անհայտ զինվորների հուշակոթողը:

2012թ. փետրվարի 25-ին Գ. Աղալումյանը դարձավ հավերժ ճանփորդ՝ սերունդներին թողնելով լավ կազմակերպում հուշեր:

Հայրուբի շրջակայքի կրթության բաժին
Հայրուբի Ս. Միքայելյանի անվան միջնակարգ դպրոցի կուլեկտիվ

ԳԻՏԵՔ ՈՐ

Շաբաթը ժամանակի միավոր է՝ կազմված յոթ օրից: Յոթօրյա շաբաթի առաջացումը կապում են երեք գործոնների հետ:

Առաջին գործոն. Աստված աշխարհն ստեղծեց վեց օրում, իսկ յոթերորդ օրը հանգստացավ: Մարդիկ ընդօրինակեցին Աստծուն. ստեղծեցին յոթօրյա շաբաթ, որի առաջին վեց օրն աշխատում են, իսկ յոթերորդ օրը՝ հանգստանում:

Երկրորդ գործոն. Հինգեր յոթօրյա շաբաթը կապել են Լուսնի փուլերի հետ, երկարամյա դիտարկումներով ճշտելով, որ մոլորակների միջև կիսալուսին կամ կիսալուսնից մինչև լիալուսին մոտ յոթ օր է:

Երրորդ գործոն. Հինգեր յոթօրյա շաբաթ են ստեղծել յոթ լուսատուների՝ Արեգակի, Լուսնի, Մերկուրիի, Վեներայի, Մարսի, Յուպիտերի և Սատուրնի նմանությամբ:

Հիմա համայն աշխարհում ընդունված է և կիրառվում է յոթօրյա շաբաթը: Հնում այդպես չէր: Եգիպտոսում, Չինաստանում, Հունաստանում եղել է հնգօրյակ կամ տասնօրյակ, իսկ Հին Հռոմում շաբաթը բաղկացած էր 9 օրից: Մեքսիկացիներն ունեցել են տասներեքօրյա շաբաթ: Շաբաթ՝ ասորերեն բառ է, որ նշանակում է հանգիստ, ինչպես դա հավատում է անվանի լեզվաբան Հրաչյա Աճառյանը: Մեր նախնիները յոթօրյա շաբաթի գործածությունն սկսել են վաղնջական ժամանակներից:

Շաբաթվա օրերի հայերեն անվանումներն են՝ միաշաբթի (կիրակի), երկուշաբթի, երեքշաբթի, չորեքշաբթի, հինգշաբթի, ուրբաթ, շաբաթ:

Երկուշաբթի. Շաբաթվա առաջին օրն է:

ժամանակակից հայերը երկուշաբթին հաջողակ օր չեն համարում: Դա օտարներից հայերին փոխանցված սովորություն է: Հայաստանում, օրինակ, երկուշաբթի հավատք էր հարսանիք լինում: Նույնը և՛ Արցախում: Հեթանոս հայերը, ի պատիվ Լուսին մոլորակի, երկուշաբթին անվանել են Լուսին:

Երեքշաբթի. Շաբաթվա երկրորդ օրն է: Հներն ասում էին, որ հայոց հողի վրա հանճարները ծնվում էին առավելապես երեքշաբթի օրը: Հեթանոս հայերը, ի պատիվ Հրատ մոլորակի, երեքշաբթին անվանել են Հրատ:

Չորեքշաբթի. Շաբաթվա երրորդ օրն է: Չորեքշաբթի օրը ծնունդ առած սերը դարից էլ երկար է ձգվում: Ասում են: Հեթանոս հայերը, ի պատիվ Փայլածու մոլորակի, չորեքշաբթին անվանել են Փայլածու:

Հինգշաբթի. Շաբաթվա չորրորդ օրն է: Հնում ամուսնացող հայ զույգերը, որպես կանոն, հարսանիք էին անում հինգշաբթի օրը՝ հուսալով, թե հինգը բարեհնչուն թիվ է, և իրենց երեխաների թիվը հինգից պակաս չի լինի: Հեթանոս հայերը, ի պատիվ Լուսնաբազ մոլորակի, հինգշաբթին անվանել են Լուսնաբազ:

Ուրբաթ. Շաբաթվա հինգերորդ օրն է: Ուրբաթը հայոց համար մեծ գորություն ունեցող օր է: Ու ամենակին էլ պատահմամբ չէ հայերեն առաջին գիրքը կոչվել «Ուրբաթագիրք», որում ամփոփված են առասպելախառն պատմություններ և չափածո աղոթքներ: Ըստ Ղևոնդ Ալիշանի, ուրբաթը հնուց ամսի համարվել է հնայական ազդեցության օր: Հեթանոս հայերը, ի պատիվ Լուսաբեր մոլորակի,

ուրբաթն անվանել են Լուսաբեր: Միջնադարից մինչև 1928 թվականը Մարտակերտի շրջանի գյուղերից մեկում (Ջանյաթաղ) եղել է շուկա, ուր առուտուր էին անում միայն ուրբաթ օրերը, որի պատճառով էլ այն կոչվում է Ուրբաթի շուկա:

Շաբաթ օր. Շաբաթվա վեցերորդ օրը կոչվում է շաբաթ, որ նշանակում է՝ հանգիստ: Հավանաբար այդպես է կոչվել այն պատճառով, որ այդ օրը մարդիկ հանգստացել են: Բայց հնում հանգստանալու համար կոնկրետ սահմանված օր չի եղել: Աստված, ասում էին, հանգստանալ էր սահմանել ուրիշների համար, հայերին ուր չի վերաբերում: Նույնիսկ յոթ օրը չի բավականացնում աշխատասիրության մեր եռանդը պարպելու համար, ուր մնաց թե շաբաթից մի օր էլ կտրենք ու նստենք-հանգստանանք: Հեթանոս հայերը, ի պատիվ Երևակ մոլորակի, շաբաթ օրն անվանել են Երևակ:

Կիրակի. Հունարեն բառ է, որ նշանակում է՝ Տերունական: Հնում դա եղել է շաբաթվա առաջին օրը, այժմ շաբաթվա յոթերորդ օրն է: Հին հայերը կիրակին կոչել են միաշաբթի: Ասում են՝ աշխարհն Աստված վեց օրում արարեց, իսկ յոթերորդ օրը հանգստացավ: Բայց ի՞նչ է նշանակում հանգստանալ, այդ օրն ինչո՞ւ էր զբաղված Աստված: Հավանաբար իր արարած աշխարհի կիսատ-պռատը շտկելու գործով: Երևի հենց այդ օրն է նա արարել կնոջը, որը դարձել է նրա ամենահանճարեղ ստեղծագործությունը: Մարդն էլ ընդօրինակել է Աստծուն և կիրակի օրերին զբաղվում է իր թողած կիսատ-պռատը լրացնելու, ավարտին հասցնելու գործերով:

Հեթանոս հայերը, ի պատիվ Արեգակի, կիրակին անվանել են Արեգակ:

ՕՐ

Օրն այն ժամանակամիջոցն է, որի ընթացքում երկրագունդը մի լրիվ պտույտ է կատարում իր առանցքի շուրջը: Օրը բաժանվում է երկու մասի՝ գիշեր ու ցերեկ: Հնում որոշ ժողովուրդների համար օրվա սկիզբ է համարվել արևածագը, մյուսների համար՝ արևամուտը, իսկ արաբների համար՝ կեսօրը: Այն հեռավոր ժամանակներում հայերի համար օրվա սկիզբ է եղել արևամուտը:

1925 թվականի հունվարի 1-ից սկսած՝ համայն աշխարհում օրվա սկիզբ է ընդունվել կեսգիշերը: Նշենք, որ տարվա մեջ ցերեկվա ժամանակը փոփոխվում է. դեկտեմբերի վերջից սկսում է երկարել մինչև հունիսի վերջը, ապա՝ հետագիտես կարճատև դառնում մինչև դեկտեմբերի վերջը:

ՃԱՄԱՆԱԿ

Հրաչյա Աճառյանն ասում է, թե ժամանակը նշանակում է՝ վախտ, առեն, նաև՝ տարի, դարաշրջան, տարվա եղանակ, հասակ, կյանք, հարմար առիթ և այլն:

ժամանակի տևողությունը կարող է լինել վայրկյանն ու հավերժությունը. մի ակնթարթ, մի րոպե, մի ժամ, մի օր, մի ամիս, մի շաբաթ, մի տարի, մի դար, մի հազարամյակ, անգամ՝ հավերժություն: Իսկ ընդհանրապես, անհնար է ժամանակը չափել ու հաշվել, քանզի այն ոչ սկիզբ ունի ու ոչ էլ՝ վերջ:

Հավաքեց ու կազմեց թոշակառու ուսուցիչ Միքայել ԲԱԼՅԱՆԸ

ԿՈՐԵԼ Է
Նարինե Շամիրի Բեգլարյանի
KN042545 դիպլոմը՝ տրված Շուշիի հունամիտար քոլեջի կողմից, 05.07.1999թ.:
Համարել անվավեր:

ԼՈՒՍԱՐԱՐ | Հիմնադիր՝ «Լուսարար» ՓԲԸ | Ստեփանակերտ, Հ. Թումանյան փ. 111, ☎ 94-38-99, E-mail: gorcert@mail.ru | Մեքերունների եւ փաստական տվյալների ստուգությունն ապահովում են հեղինակները: Թերթը ընթերցողների հետ գրագրություն վարելու պարտավորություն չի ստանձնում: | Տպագրվում է Ստեփանակերտի «Դիզակ պլյուս» ՍՊԸ-ում: Տպագրանակ՝ 3080: Ծավալը՝ տպագրական 4 մամուլ: | Ստորագրված է տպագրության՝ 05.03.2012թ.: